633.5
Ц-57

ՊԱՅՔԱՐ ԲԱՄԲԱԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏԻ 1931 ԹՎԻ ԴԱՍԵՐՆ ՈՒ 1932 ԹՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

166

633.5
Պ-57

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

19.118

24 SEP 2010

633.5
Կ-57

ՊԱՅՔԱՐ ԲԱՄԲԱԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏԻ 1931 ԹՎԻ ԴԱՍԵՐՆ ՈՒ 1932 ԹՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ)

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

20362-59

11.02.2013

Պետհրատի Տպարան
Հրատար. № 2121
Գլավլիտ 7 61 (բ)
Պատվեր 798
Տիրաժ 2500

Կազմեց յեվ խմբագրեց Վ. ԱՆԱՆՅԱՆ

Սրբագրեցին՝ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանձնված ե արտադրության 7 մարտի 1932 թ. Ստ. Փ. Б.
Ստորագրված ե տպագրելու 11 ապրիլի 1932 թ.

Ա. ԽԱՆՋՅԱՆ

ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԴԱՐՁՆԵԼ ՎՈՐԱԿԸ, ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

(Համկոմկուսի 8-րդ համագումարում տված զեկուցումից)

Հաշվետու շրջանում շարունակվել ե գյուղատնտեսության ընդհա-
նուր աճումը՝ նրա սոցիալիստական վերակառուցման հիման վրա: Անել
ե ցանքադաշտերի ընդհանուր տարածությունը 28–29 թվի 334,800 հեկ-
տարի փոխանեն՝ 1931 թվին ունեցել ենք 381,800 հեկտար ցանք: Մաս-
նավորապես աչքի յե ընկնում տեխնիկական կուլտուրաների աճումը՝
1931 թ. նախորդ տարվա համեմատությամբ 54 տոկոսով ավելացել ե
տեխնիկական մշակույթների (բամբակ, ծխախոտ) ցանքը: Հսկայական
աշխատանք ե կատարվել՝ վերակառուցելու համար մեր գյուղատնտե-
սության տեխնիկական բազան: Գյուղատնտեսության սոցիալիստական
հատվածը (խորհտնտեսությունները և կոլտնտեսությունները), վոր դեռ
անցյալ համագումարի ժամանակ համեմատաբար չնչին մեծություն եր՝
ներկայումս կազմում ե արդեն գյուղատնտեսության ընդհանուր ծա-
վալի կիսից վոչ պակաս մասը: Պետք ե նշել, վոր գյուղատնտեսության
մեջ առանձնապես աչքի յե ընկնում վորոշ անհամապատասխանություն,
վոր կա աշխատանքների լայնացման, քանակական աճման և արդյունք-
ների վորակի միջև, մի հանգամանք, վոր ստիպում ե մեզ այս տարի
գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների ԾԱՆՐՈՒ-
ԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴՆԵԼ ՎՈՐԱԿԻ, ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ:
Վորակի նշանակությունը գյուղատնտեսական հիմնական կուլտուրանե-
րի նկատմամբ՝ ամենից ավելի ցայտուն կերպով հանդես ե գալիս բամ-
բակամշակության բնագավառում:

Չնայած բամբակի ֆրոնտի խոշոր կարևորության, չկարողացանք
քիչ թե շատ գոհացուցիչ արդյունքներ ստանալ այս տարվա բամբակի
կամպանիայից: Ընդհակառակը, պետք ե ընդունենք, վոր այս գծով
1931 թվին խայտառակ անհաջողության մատնվեցինք: Սկսելով բամ-
բակացանը մեծ վոգևորությամբ, կատարելով ցանքի պլանը, բամբակա-
ցան շրջանների կուսակցական կազմակերպությունները չկարողացան
ապահովել կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամ-
րացումը, չկարողացան մասսաներին կազմակերպել բամբակի մշակման,
նրա բերքատվության բարձրացման կոնկրետ խնդիրների շուրջը: Կու-
սակցական կազմակերպությունների թափթփվածությունից և անզգո-
նությունից ոգտվեցին դասակարգային թշնամին—դաշնակ-կուլակային
տարրերը, վորոնք հասկանալով բամբակի ֆրոնտի նշանակությունը մեզ
համար, կատաղի պայքար են մղում բամբակի մշակույթի ընդարձակ-
ման և բերքատվության բարձրացման դեմ:

1931 թ. բամբակի հանձնման (գնման) մեր պլանը կատարվեց 41,1 տոկոսով, կենտրոնի պլանը՝ 62 տոկոսով, ըստ շրջանների՝ ունենք հետևյալ պատկերը—Ղամարլուն՝ 51,3 տոկոս, Եջմիածինը՝ 46,5 տոկոս և Ղուրդուղուլին՝ 28,5 տոկոս: Ամենից բացասական յերևույթն այն է, վոր բերքատվության չափով և բամբակի հանձնման (գնման) պլանի կատարումով կոլտնտեսությունները զգալապես հետ մնացին անհատական տնտեսություններից՝ կատարելով բամբակի հանձնման պլանի միայն 32,4 տոկոսը:

Ինչո՞վ բացատրել իրերի նման դրությունը բամբակի փրոնտում: Դժվար թե գտնվի մեր շարքերում վորևե մեկը, վոր այս հարցին պատասխանելու համար խոսք բանա ոբյեկտիվ պատճառների մասին: Խոսում են կլիմայական աննպաստ պայմանների մասին, այն մասին, վոր բամբակ ցանելու ժամանակ տեղում եյին հորդառատ անձրևներ, վոր սովորականից շուտ այս տարի սկսվեց սառնամանիքը և այլն: Այո՛, անվիճելի յե, վոր կլիմայական պայմանները, այս տարի համեմատելով միջին սովորականին, ավելի աննպաստ եյին: Բայց անուղղելի ոպորտունիստը միայն կարող է բացատրել բամբակի ցածր բերքատվությունը կլիմայական պատճառներով այն ժամանակ, յերբ նույն պայմաններում առանձին կոլտնտեսություններ և աշխատավորական տնտեսություններ կարողացան ստանալ բարձր բերքատվություն և ապահովել պլանների կատարումը: Մի՞թե փաստ չէ, վոր որինակ, Վարմազյար գյուղի կոլտնտեսությունը կարողացավ լավ աշխատանքով ստանալ մեկ հեկտարից միջին հաշվով 10 ցենտներ բամբակ, վոր Ողուրբեկլու, Մուղան, Ալիբեկլու և մի շարք այլ գյուղերի կոլտնտեսություններ և անհատական տնտեսություններ կարողացան գերակատարել բամբակի հանձնման տարեկան պլանն այն ժամանակ, յերբ նույն կլիմայական պայմաններում վերին Նեջրլուն, որինակ, մեկ հեկտարից՝ վատ աշխատանքի պատճառով՝ ստացավ 1,5 ցենտներ բերք, կատարելով տարեկան պլանի 12 տոկ. միայն: ՈՒՐԵՄՆ ՎՈՉ ԹԵ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿՆ Է, ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՎՈՐԱԿՆ Է ԱՅՍՏԵՂ ՀԻՄՆԱԿԱՆԸ: ԲԱՄԲԱԿԻ ՎՈՐԱԿԱՎՈՐ ՄՇԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԵՆՑ ՆՈՒՅՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐ ՍՏԱՆԱԼ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔ, ՔԱՆ ԹԵ ՍՏԱՑԱՆՔ ՄԵՆՔ, ՄԱՆԱՎԱՆԴ ՂՈՒՐԴՈՒՂՈՒԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Կենտկոմի կողմից կատարված հատուկ հետազոտությունը ցույց տվեց, վոր բամբակի ցածր բերքատվության պատճառներն սկսվում են ամենից առաջ ՎԱՐԻ ՑԱԾՐ ՎՈՐԱԿԻՑ. վարի վորակն այնքան վատ է յեղել, վոր բամբակի շատ դաշտերում մնացել են բավական զգալի չափով չհերկված անկյունամասեր, վորոնք կրճատել են բամբակի ցանքի փաստական տարածությունը. բամբակի դաշտերի ընտրությունը յեղել է ձևական, շատ դեպքերում բամբակի համար ընտրված են միանգամայն անպետք հողամասեր. ցանքը յեղել է չափազանց անորակ և գրեթե բոլոր շրջաններում վերջացել է սահմանված ժամկետից շատ ուշ. փոխանակ ավարտելու ցանքը մայիսի 10-ին, գրեթե բոլոր շրջաններում ավարտվել է հունիսի սկզբներին միայն: Բարձրորակ բամբակի «նավրոցկի» սերմը, վորի բույսի հասունացման համար պահանջվում է ավելի յերկար ժամանակ, ցանվել է ավելի արագ հասնող «կինգ» սերմից ավելի

ուշ: Վոչ մի շրջան ժամանակին չի կատարել կուլտիվացիայի և քաղհանի աշխատանքները. դրությունն այս գծով մանավանդ խայտառակ է յեղել Ղուրդուղուլու շրջանում: Մոլախոտերի բուռն անումն անձրևային յեղանակների պատճառով շատ տեղերում ուղղակի ուժասպառ է արել բամբակենուն, բամբակի նոսրացման, ջրելու և այլ աշխատանքները նույնպես կատարված են առանց պլանի և վոչ պետք յեղած ժամանակին: Յեզրակացություն—ՋԱՓԱԶԱՆՑ ԹՈՒՅԼ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՅԵՂԵԼ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԲՈԼՈՐ ՊՐՈՑԵՍՆԵՐՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ Է ՄԱՏՆՎԱԾ—և այս խոշորագույն թերությունը շատ շուտով յեկավ վրեժ հանելու թերացողներից՝ իջեցնելով բամբակի բերքատվությունը:

Յեթե առհասարակ թույլ է յեղել կուսակցական կազմակերպությունների աշխատանքը բամբակացան շրջաններում՝ չքավոր միջակ մասսաներին բամբակի բերքատվության կոնկրետ խնդիրների շուրջը կազմակերպելու ուղղությամբ՝ ապա ուղղակի անթույլատրելի դրության մեջ է յեղել աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում, մինչդեռ այդ գործը հիմնականում հավասար է կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացմանը: Այո՛, ընկերնե՛ր, պետք է խոստովանել, վոր բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները չկարողացան անցյալ տարի բայլշևիկորեն պայքարել կոլտնտեսությունների ամրացման համար, նրանք չկարողացան հայտաբերել և տեղնուտեղը արմատախիլ անել կուլակային ազդեցության արտահայտությունները կոլտնտեսություններում: Այսպես, ընկերներ, ի՞նչպես վորակել աշխատանքից խուսափելու և գործալքման բազմաթիվ դեպքերը կոլտնտեսություններում, հավասարեցման և մանավանդ դիմազրկության լայն պրակտիկան, աշխատանքները ժամանակին չկատարելը, կոլտնտեսականի աշխատանքի ցածր վորակը, յեթե վոչ՝ վորպես կուլակի ազդեցության վորոշակի արտահայտությունները կոլտնտեսություններում: Դժբախտաբար շրջանային կուսակցական որգանների անզգոնությունը և կարճատեսությունն այնքան խորն էր, վոր ժամանակին նրանք չկարողացան ընդհանրացնել առանձին թերացումները, տալ նրանց սկզբունքային-քաղաքական վորակում, արել մասսաների ուշադրությունը, կուլակային, մանր-բուրժուական յերևույթների դեմ կոլտնտեսություններում, հաղթահարել դիմադրությունը կոլտնտեսության աշխատանքներում, կազմակերպել կոլտնտեսական աշխատանքը: Նման խայտառակություն ավելի ևս աններելի յե այն պատճառով, վոր բամբակացան շրջանների կոլտնտեսականները և աշխատավոր գյուղացիությունն ստանում են հսկայական ոժանդակություն և արտոնություններ պրոլետարական պետությունից, ստանում են եժան գներով արդյունաբերական ապրանք, հաց, ստանում են լայն վարկավորում, մեքենատրակտորային կայանները ահագին բարձրության են հասցնում այդ շրջանների մեքենայական բազան: Բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպություններին չենք կարող չմեղադրել կուլակի դեմ մղած պայքարի թուլության համար: Այդ յերևում է վոչ միայն կոլտնտեսությունների աշխատանքների թուլությունից, այդ յերևում է նաև նրանից, վոր բամբակացան շրջաններում

կուլակները կատարել են բամբակի հանձնման կայուն առաջադրանքները միայն 33 տոկոսով:

Կուլակային հավասարեցումն աշխատանքի վարձատրության ժամանակ և դիմազրկությունն աշխատանքներում՝ դեռևս մեծ չափով շարունակվում են գոյություն ունենալ կոլտնտեսություններում և բամբակի ֆրոնտի ճեղքվածքի հիմնական պատճառներից են: Վերցրեք վորևէ կոլտնտեսություն—իրար կողքի ընկած յերկու դաշտերից կոլտնտեսությունը մեկից ստացել է բավարար բերք, մյուսից՝ գրեթե վոչինչ. հարցրեք կոլտնտեսության վարչությանը, անձնապես վո՞ր կոլտնտեսականը, վո՞ր բրիգադը կամ վո՞ր տրակտորիստն ու գյուղատնտեսը պատասխանատու յեն բերք չտված դաշտի համար: Դժվար թե վորևէ պատասխան ստանաք, վորովհետև չկա աշխատանքի վորակի հաշիվ, վորովհետև բրիգադների կազմը հոսուն է, վորովհետև բրիգադներն աշխատանքի սկզբից մինչև վերջը՝ բերքը հավաքելիս՝ չեն ամրացվում կոնկրետ հողամասերի, ՎՈՐՈՎՀԵՏԵՎ ԴԵՌ ՉԻ ԱՐՄԱՏԱՑԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՁԸ, ԻՍԿ ԱՌԱՆՑ ԱՅՍ ԲՈԼՈՐԻ՝ ԳՈՐԾԱՎԱՐՁԸ ՊԱՐԱՊ ԽՈՍՔԻ ՅԵ ՎԵՐԱԾՎՈՒՄ:

Այսպիսով, պետք է յեզրակացնենք, վոր Ղուրդուղուլու, Եջմիածնի, Ղամարլվի և Վեդու կուսկազմակերպությունները 1931 թվին չկարողացան դեռևս շոշափելի արդյունք ձեռք բերել կոլտնտեսությունների ամրացման բնագավառում:

Կոլտնտեսության ամրացման առաջին ցուցանիշը՝ պետության նկատմամբ կոլտնտեսության ստանձնած պարտականությունների կատարումն է, իսկ այդ պարտականությունները խայտառակ կերպով թերակատարվեցին բամբակացան բոլոր շրջաններում: Ոպորտունիստական ինքնահոսը կոլտնտեսական աշխատանքի կազմակերպման գործում, դիմազրկությունը և կոնկրետ պատասխանատվության բացակայությունը, մասսայական քաղաքական աշխատանքների թուլությունը կոլտնտեսային և չքավոր ու միջակ գյուղացիության մեջ և թույլ պայքարը կուլակի ու նրա ազդեցությունների դեմ՝ ահա պայմաններ, վորոնք սպառիչ բացատրություն են տալիս այն խայտառակությանը, վորը կայանում մեկ հեկտարից հազիվ 5 ցենտներ բամբակ ստանալու մեջ:

Ընկերնե՛ր, 1931 թվի բամբակի կամպանիայի դասերը խիստ ուսանելի յեն մեր բոլոր կազմակերպությունների համար: Ամենից առաջ այդ դասերից բոլշևիկյան հետևություններ պիտի անեն բամբակացան շրջանների կուսակցական, խորհրդային, կոմյերիտական ու կոլտնտեսական կազմակերպությունները: Նրանք պարտավոր են բոլշևիկյան իսկական ինքնաքննադատության լայն ծավալմամբ բամբակի ֆրոնտի անցյալ տարվա ճեղքվածքի պատճառները հասցնել մինչև վերջին կլոտնտեսականի, վերջին աշխատավոր գյուղացու գիտակցության: Կենտկոմը հաստատեց այս տարվա բամբակացանի պլանը՝ 30 հազար հեկտար: Այդ նշանակում է՝ իրագործելով բամբակի մշակության քանակական աճման պլանը՝ աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է դարձնենք բամբակի բերքատվության բարձրացման գործը. այդ նշանակում է՝ ապահովել 30·000 հեկտար հողամաս բամբակի տակ առնելը՝ շեշտը դնելով ամենից առաջ բամբակի ցանքի և մշակման աշխատանքների ՎՈՐԱԿԻ վրա: Նախապատրաստել բամբակի ցանքի համար ամենալավորակ դաշտերը, ապահովել դաշտերի վորակավոր ներկը՝ պատասխանատու դարձնելով տրակտորային յուրաքանչյուր բրիգադի տվյալ դաշտերի ներկի վորակի համար, ցուցանիշ ընդունելով հետագա բերքատվությունը, ամրացնել առանձին հողամասերի հատուկ բրիգադներ, վորոնք կատարում են տվյալ դաշտում բոլոր աշխատանքները՝ բամբակի մշակման սկզբնական պրոցեսներից մինչև վերջը. հետևողականորեն կիրառել անհատական գործավարձը բոլոր ողակներում, բերքի վերջնական բաշխման ժամանակ հաշվի առնել տվյալ բրիգադի հողամասից ստացված բերքը, կատարել բոլոր աշխատանքները (վարը, ցանքը, կուլտիվացիան, քաղհանը, նոսրացումը, ջրելը և այլն) համաձայն ագրոտեխնիկայի պահանջների և ժամանակին,—միայն այս պահանջների լիակատար կենսագործումը կապահովի բամբակի բարձր բերքատվությունը. իսկ համագումարը պետք է պահանջի բամբակացան շրջանների կազմակերպություններից՝ այս տարի բամբակի բարձր բերքատվությամբ վերացնել անցյալ տարվա ամոթալի բիծը:

1931 թվի բամբակի կամպանիայից համապատասխան դասեր պիտի անեն բոլոր շրջանային կազմակերպությունները. բոլշևիկյան զգոնությամբ պիտի քննել ու հայտաբերել կոլտնտեսական և գյուղական որգանների առանձին ողակների թերությունները, հետամնացությունը, նեխման յերևույթները, կուլակային, մանր-բուրժուական տենդենցների դրսևորումները, անխնա պայքարել տեղ-տեղ նկատվող աչքակապության, բարեհոգության տրամադրությունների դեմ, պայքարել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման համար, հայտաբերել և դուրս շպրտել կոլտնտեսություններից դասակարգային թշնամուն՝ դաշնակին, յենթակուլակին—ահա ինչ գործնական հետևություններ պիտի անեն բոլոր շրջանային կազմակերպությունները բամբակի անցյալ տարվա կամպանիայի դասերից:

Այսպիսով, բամբակի ֆրոնտի հիմնական խնդիրն է՝ ջախջախելով կուլակ-դաշնակցական տարրերի դիմադրությունը և ամրացնելով կոլտնտեսությունները, առավելագույն չափով ոգտագործել բոլոր հնարավորությունները, վոր ունենք Հայաստանում՝ կիրառելու համար կուսակցության լոզունգը՝ բամբակի անկախություն ապահովելու, Անդրկովկասը բամբակի յերկրորդ հիմնական բազա դարձնելու մասին:

Կ. ԱՅՎԱԶՅԱՆ, Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՅԵՎ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԻՆՔՆԱՀՈՍԻ ՅԵՎ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

(ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏԻ 31 Թ. ԴԱՍԵՐԸ ՂՈՒՐԴՈՒՂՈՒԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ)

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՌԵԱԼ ԷՐ

Ղուրդուղուլու շրջանի վերջին ութ տարվա՝ բամբակի բերքատվության դինամիկան ցույց ե տալիս մի կողմից՝ ընթացիկ տարվա ցածր բերքատվությունը, իսկ մյուս կողմից՝ այս տարվա պլանային բերքատվության բարձր աստիճանը՝ նախընթաց մի շարք տարիների փաստական բերքատվության դիմաց: Այսպես՝ ընդհանուր առմամբ բամբակի բերքատվությունը տարիներով ներկայացնում ե հետևյալ պատկերը: (Բամբակզտիչ գործարանի տվյալներով):

Միջին բերքը հեկտարից՝ կիլոգրամներով:

1924	522
1925	864
1926	590
1927	902
1928	869
1929	545
1930	765
1931	267

(Նախնական տվյալներով, առանց խոտհանմանության և առանց դաշտում մնացած բամբակը հաշվելու):

Այսպիսով, վերջին ութ տարվա միջին բերքը (ներառյալ նաև 1931 թ.) կազմում ե 635 կիլո, իսկ 6 տարվանը (1924—1929 ներառյալ) 709 կիլո:

Ամենից առաջ հարց ե ծագում պլանային բերքատվության ռեալության մասին: Կարո՞ղ եր Ղուրդուղուլու շրջանը վորոշ պայմանների դեպքում 1 հեկտարից տալ 11,04 ցենտներ բերք:

Նկատի ունենալով 1925, 1927 և 1928 թ. թ. բերքատվության թվերը և վոր գլխավորն ե՝ բամբակացան տնտեսության վերակառուցումը կոլեկտիվացման բազայի վրա, մեխանիզացիան, մեքենատրակտորային կայանների շինարարությունը, առաջին հերթին՝ բամբակի դաշտերի համատարած պարարտացումը, շարքացանը և այլն, *պետք ե ընդունել բերքատվության պլանը միանգամայն իրական: Սա յե, վոր հենց յելակետ ե ծառայելու բամբակի ցածր բերքատվության պատճառները հայտաբերելու ժամանակ:*

Այդ պատճառների անալիզն ամենից առաջ մեզ բերում ե հետևյալ ընդհանուր յեզրակացության—ցածր բերքատվությունը պայմանավորված ե պատճառների մի ամբողջ կոմպլեքսով, ընդ վորում, այդ պատճառներից յուրաքանչյուրն առանձին վերցրած ունեցել ե վորոշ բացասական հետևանք բերքատվության բարձրության վրա:

Անցնենք այդ պատճառների քննությանը:

ԿՐՃԱՏՎԱԾ Ե ՑԱՆՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հողժողկոմատի ընդունած՝ բամբակի հավաքի վերջնական տարածությունը հավասար ե 7·846 հեկտարի (առանց խոտհանմանության):

Նկատի ունենալով շրջանի պատասխանատու աշխատողների հայտարարությունները, հաստատված և չափված տարածությունների ճշտության մասին, ի նկատի ունենալով նաև հողաչափային աշխատանքների արդյունքները և համաձայնեցնելով շրջանի կողմից հաստատված բերքահավաքի տարածության թվի ճշտության հետ, մենք գտնում ենք, վոր բերքահավաքի փաստացի տարածությունը ցածր ե ընդունված տարածությունից: Կոնտրակտացիայի յենթարկված տարածությունից (դուրս գալով բնական տարերքներից փչացած ցանքսը), տվյալ դեպքում մենք պետք ե նշենք, վոր բերքահավաքի փաստացի տարածության պակասեցման վրա ազդել են յերկու հիմնական գործոններ—չոգտագործված հողամասերը (վատ մշակման հետևանքով) և ցանքսերի զգալի նոսրությունը, վորը տեղ-տեղ ցանքսի տարածությունը փաստորեն պակասեցրել ե 10–20 տոկոսով:

Օրինակ՝ Ղուրդուղուլու կոլտնտեսության (ցանքսի տարածությունն ե 920 հեկտար) նախագահը մատնանշում ե, վոր յուրաքանչյուր հեկտարի յեզրերն անվարել են մնացել 5–7 լիտր տարածությամբ (լիտրը հավասար ե 1/44 հեկտարի). այնուհետև յուրաքանչյուր քառակուսու վրա նորմալ՝ 800 թփի փոխարեն փաստորեն յեղել ե 300–350 թուփ: Տարածության ճիշտ չափը մինչև հիմա չի վորոշված: Աղջարխ գյուղի հողերը յերեք անգամ չափվել են տեխնիկի կողմից և ամեն անգամ ստացվել են դանազան թվեր՝ մի անգամ 470 հեկտար, մյուս անգամ՝ 540 հեկտար: Շահրիար գյուղի վողջ ակտիվը հավաստիացրեց մեզ, վոր կոլտնտեսային ցանքսի տարածությունը հողաչափային 933 հեկտարի փոխարեն պետք ե փաստորեն ընդունել վոչ ավելի, քան 700 հեկտար: Չվարված հողաշերտերը, ցանքսերի նոսրությունը համապատասխան կերպով կրճատում ե ցանքսի տարածությունը:

Մարգարայի ագրոկայանի գյուղատնտեսի տվյալներով անմշակ թողած տարածությունն այստեղ հասնում ե 159 հեկտարի: Աղջարխ գյուղում չմշակված հողի տարածությունը պաշտոնապես հաշվում են մինչև 100 հեկտար: Մի կողմ թողնելով ցանքսերի անհավասարաչափ նոսրությունը և մեծ թվով բաց տեղերի գոյությունը:

Այսպիսով, ակնհայտ ե մի բան, վոր փաստական բերքահավաքի տարածությունը պակաս ե սահմանված պլանային թվից, վորը համապատասխան կերպով գցում ե վորոշ չափով բերքի տոկոսը:

ՎԱՏՈՐԱԿ ՀԵՐԿԻ ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ոչ մի կասկած չկա այն մասին, որ վարի խայտառակ վատ որակն զգալի չափով ազդել է բերքատվության բարձրության վրա:

Նախապես պետք է նշել, որ չնայած վարը մայիսի 10-ին ավարտելու մասին տրված դիրեկտիվին՝ վարը փաստորեն խիստ ձգձգվել է և ավարտվել է մայիսի 25-ին: Հենց մեքենատրակտորային կայանի վկայությամբ վարը կատարվել է վոչ խորը (յերեսանց), չվարված կտորներ են մնացել, հերկը կատարել են հաճախ ցեխ ժամանակ և ավարտել են ուշ: Վատորակ վարն ունեցել է այն հետևանքը, վոր չեն վոչնչացել մոլախոտերը, վորոնք ջրելուց հետո սկսել են ուժեղ կերպով աճել, վորի շնորհիվ բամբակը ծածկվել է, թույլ է զարգացել և ունեցել է քիչ բերքատվու ճյուղեր: Ցեխ հողը վարելու հետևանքով առաջացել են խոշոր հողակույտեր, վորոնք հապճեպ կերպով մի կերպ մանրացվել են «գլդգադ» փոցխով:

Արմավիրի ագրոկայանի տվյալներով հողերի 15–20 տոկոսը վարված է անբավարար: Վարի խորությունն է 13–15 սանտիմետր: Կան չվարված հողամասեր և հողակույտեր: Յերբեմն տեղերում վարն այնքան վատ է յեղել, վոր մարգոցի ժամանակ բավարար չափով չի փակցվել հողածուների համար:

Բամբակազտիչ գործարանի դիրեկտորն Անդրբամբակկոմին և շրջկոմին ներկայացրած իր զեկուցման մեջ ի միջի այլոց գրում է. Մեքենատրակտորային կայանը կրկնավարն անում է 8 խոփանի գութաններով. բայց քանի վոր մարգոցի ժամանակ բավարար չափով չի այդ պատճառով 4 խոփը հանում են, իսկ մնացած 4 խոփերի միմյանց միջև ընկած տարածությունը չափազանց մեծ է լինում և վարի ժամանակ խոփերի միջև մնում են բոլորովին չվարված ակոսներ, վորոնք ծածկվում են միայն չուռ տրված հողով: Պարզ է, վոր այդ ակոսների վրա մոլախոտերը չեն վոչնչանում:

Յուրաքանչյուր հողամասը վարելու ժամանակ դաշտը ծայրերից 10–15 մետր տարածությամբ բոլորովին չի վարվում, իսկ այդ յուրաքանչյուր հողամասի չվարված ծայրերը կազմում են վողջ ցանքսի պլանի 3,5 տոկոս:

Մարգարայի յենթաշրջանի Մարգարա, Եվջիլար և Ղուլի-Աարաղ գյուղերում վատ վորակի վարի քանակը հասնում է մոտավորապես 10–15 տոկոսի, վորը բացատրվում է անձրև ժամանակ կատարված վարով և գիշեր ժամանակ առանց լուսավորության տրակտորների կատարած աշխատանքով: Գյուղատնտեսների վկայությամբ վարի ժամանակ մեքենատրակտորային կայանի կողմից աշխատանքի ղեկավարությունը թույլ է յեղել և բացակայել է համապատասխան կազմակերպվածությունը: Մոլլաբայազետ և Արտաշար գյուղերում տեղ-տեղ կրկնավար չի կատարվել: Մարգարա գյուղում 60 հեկտար աշնանավար ցանված է առանց կրկնավարի: Բնորոշ է, վոր Իգդալու գյուղում, ուր ունենք համեմատաբար բարձր բերքատվություն, հողերի զգալի մասը վարված է յեղել աշնանը: Մեծ Շահրիար գյուղում, ուր համեմատաբար ցածր է բերքը, վարն ավարտված է մայիսի 28-ին: Այստեղ գյուղացիները հայ-

տարարեցին, վոր տեղ-տեղ հող չեր մնացել մարգոց անելու համար: Այս բանի առթիվ յերբ կոլտնտեսականները բողոք են բարձրացրել, մեքենատրակտորային կայանի դիրեկտոր Զարզարյանն առաջարկել է նրանց չխառնվել իր գործերին:

Բերված փաստերը բավարար չափով հաստատում են, վոր այդ կարևորագույն աշխատանքի՝ վարի անբավարար վորակը, անխնամ արտադրությունը հանդիսանում է բամբակի ցածր բերքատվության հիմնական պատճառներից մեկը:

ՑԱՆՔԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՈՒՇ ՅԵՎ ՎԱՏ

Ակնհայտ է, վոր նախացանքային վատ մշակման հետևանքով ցանքսի վորակը ևս չեր կարող բավարար լինել: Առաջին՝ տրակտորի ուժը չի օգտագործվել ցանքսի ժամանակ, յերկրորդ՝ ինչպես շարքացանի, այնպես և շաղացանի ժամանակ սերմերը տարածվել են անհավասար՝ յերբեմն խորը, յերբեմն յերեսանց, և ջրելու ժամանակ սերմի մի մասը ջուրը տարել է: Դրանով իսկ խախտվել է բույսերի նորմալ թիվը մեկ հեկտարի վրա:

Բացի ցանքսի վորակից, ցանքսի ավարտման ժամկետը չափազանց յերկարացվեց: Չնայած վատ յեղանակին և համեմատաբար ցածր ջերմությանը, վորի շնորհիվ ծիլերը յերևացին սովորականից մի փոքր ավելի ուշ, այնուամենայնիվ ցանքսի ուշացումը 15–25 օրով, լուրջ նշանակություն ունեցավ և հետաձգեց բամբակի վեգետացիան նույնքան օրով:

ՄՏԿ-ի տվյալներով առ 10-ը մայիսի (ցանքսի ավարտման կոնտրոլ ժամկետն եր) ցանված է յեղել մոտավորապես 4·000 հեկտար, այսինքն վողջ ցանքսային տարածության 40 տոկոսը: Ցանքսը մասսայականապես ավարտվեց միայն մայիսի 25-ին. իսկ ցանքսի վերջնական ավարտումը ձգձգվեց մինչև հունիսի սկիզբը: Վերացանումները շարունակվեցին մինչև հունիսի 26-ը, այսինքն՝ մասսայական ցանքսն ավարտելուց մեկ ամիս հետո:

Ավելորդ է կանգ առնել, թե ի՞նչ նշանակություն ունի բերքատվության բարձրացման գործում ցանքսն իր ժամանակին կատարելը, քանի վոր դա հանրածանոթ է և անվիճելի: Ցանքսի յուրաքանչյուր օր հետաձգելը՝ նախապես նշանակում է կորցնել բերքի վորոշ մասը:

Այստեղ անհրաժեշտ է առանձնապես ընդգծել ուշհաս Նավրոցկիյ տեսակի դերի մասին: Նավրոցկիյ տեսակը Ղուրդուղուլու շրջանում բռնում է 3 հազար հեկտար տարածություն: Բամբակի դաշտերը դիտելու ժամանակ հանդիպում են մեծ քանակությամբ չբացված կնգուղներ: Մեր կարծիքով կնգուղներն ավելի կամ պակաս չափով նորմալ բացվելու դեպքում՝ մատնանշված 3·000 հեկտարը լրացուցիչ կերպով կտար Ղուրդուղուլու շրջանի տարեկան պլանի 20 տոկոսի չափով: Յեթե Նավրոցկիյ անբավարար արդյունքի պատճառներից մեկը կարող ենք համարել աննպաստ ոդերևութաբանական պայմանները, ապա բերքի կորստի հիմնական պատճառը հանդիսանում է այդ տեսակի ցանքսի ուշ կատարումը:

Թեթև անթույլատրելի չէ կինզի ուշ ցանելը, ապա դա առավել ևս վերաբերում է նավրոցկիյ տեսակին, վորը հասունանում է կինզից 10–12 օր ուշ: Սակայն այդ հանգամանքը վոչ վոք ի նկատի չի ունեցել: Անհրաժեշտ է պայմաններ ստեղծել և առաջին հերթին ցանել նավրոցկիյ տեսակն այն հաշվով, վոր նրա ցանքսն ավարտվի վոչ ուշ, քան մայիսի 1–5–ը: Մինչդեռ փաստորեն դուրս է գալիս ընդհակառակը: Շահրիարի շրջանում, ուր կենտրոնացած են նավրոցկիյ տեսակի ցանքերը, ամենից ուշ վերջացրին վարը. իսկ ցանքսն ավարտեցին մայիսի 29–ին: Ցոնդային հողերի վրա, (80 հեկտար տարածությամբ) ցանքը նույնիսկ ձգձգվեց մինչև հունիսի 10–ը: Իսկ վերացանումն էլ ավելի ուշ: Այդ իսկ պատճառով Շահրիարի կոլտնտեսությունը, չնայած նավրոցկիյ տեսակի բոլոր առավելություններին, բամբակահավաքը կատարեց 22–23 տոկոս:

Հետաքրքիր են հետևյալ փաստերը. Քյալագյարխ գյուղում մենատնտես Հովհաննիսյանը մեկ հեկտար ցանքսից (մայիսի 25–ի ցանքս) հավաքել է ընդամենը 3 փ., իսկ մեկ ուրիշ 1½ հեկտար հողամասից (ապրիլի 25–ի ցանքս) հավաքել է 30 փութ: Կոլտնտեսային ցանքսի մի փոքր հողամասի վրա ($^{1}/_{7}$ հեկտար) կնդուղի մեծամասնությունը բացված է յեղել և այդ տարածությունից հավաքված է 10 փութ բամբակ (այսինքն՝ 70 փութ մեկ հեկտարից): Այդ հողամասի ցանքը կատարված է յեղել ապրիլի 17–ին:

Ղուրդուղուլու հենակետային կայանի տվյալներով ապրիլի 16–ին ցանված նավրոցկիյ տեսակը մեկ հեկտարից տվել է 16,3 ցենտներ, իսկ մայիսի 22–ին ցանվածը՝ 2,3 ցենտներ: Այդպիսի օրինակներ կարելի յե բերել տասնյակներով:

Նավրոցկիյ տեսակի մեր պայմաններին անհամապատասխան լինելու վերաբերյալ բոլոր տեսակի խոսակցությունները պետք է վճռականորեն բացառվեն վոչ միայն փորձակայանների տվյալների հիման վրա, այլև նախընթաց տարիների մասսայական ցանքերի արդյունքներով: Ճիշտ է մի բան, վոր նավրոցկու համար ցանքսի ժամկետն ունի առանձնապես վճռական նշանակություն:

Այսպիսով, մենք հիմք ունենք գալու այն յեզրակացության, վոր ցանքսն ուշ կատարելու շնորհիվ, անկախ ուշացած վարի, քաղհանի և ագրոտեխնիկական պայմանների, Ղուրդուղուլու շրջանը՝ նավրոցկիյ տեսակի սերմով ցանված դաշտերից կորցրեց զգալի քանակությամբ բամբակ:

ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾ ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՄԲ

Մենք գտնում ենք, վոր բամբակի ցածր բերքի հիմնական պատճառներից մեկը, հատկապես ցանքսն ուշ վերջացնելու կապակցությամբ, հանդիսանում է վոչ միայն քաղհանի ուշացումն այլև իրեն քաղհանի խայտառակ վորակը, վորը բամբակի նորմալ վեգետացիան հետաձգեց 10—15 օրով:

Ընդդեմ սահմանված ժամկետների բոլոր 4 քաղհանները էլ սիստեմատիկորեն ուշացրել են: Առաջին քաղհանի ավարտման կոնտրոլ ժամկետին քաղհանված է յեղել ցանքսի տարածության 45 տոկոսը. առաջին քաղհանը հունիսի 15–ի փոխարեն ավարտված է յեղել հունիսի 20–ից մինչև հուլիսի 10–ը, այսինքն՝ 20–25 օր ուշացումով; ՄՏԿ–ի տվյալներով վերջին՝ 4–րդ քաղհանն ավարտված է ոգոստոսի 25–ին:

Մարգարա գյուղի ակտիվի հայտարարությամբ այստեղ քաղհանն ըստ էության մնացել է անավարտ վիճակում: Իգդալու գյուղում թարխեր (МАТЫГА) չունենալու պատճառով քաղհանը սկսել են հունիսի 3–ին, այն ժամանակ, յերբ նրանք կարող էին սկսել մայիսի 22–ին. իսկ վերջին քաղհանն այստեղ ավարտել են ոգոստոսի 23–ին: Հուլիսի 7–ին, յերբ պետք է ավարտված լիներ 2–րդ քաղհանը, առաջին քաղհանը և կուլտիվացիան դեռ ավարտված չեն յեղել Ղուրդուղլի, Շահրիար, Ջաֆարաբադ և Աղջարի գյուղերում. իսկ 2–րդ քաղհանը կատարված է յեղել 40 տոկոսով: Ու մեկն ոգոստոսի 3–րդ քաղհանն ավարտված է յեղել 41 տոկոսով:

Խայտառակ վիճակում է յեղել նաև նոսրացումը: ՄՏԿ–ի պլանը չէր նախատեսել նոսրացումը և հետո միայն այդ ոպերացիան մտցվեց աշխատանքների պլանի մեջ: Բայց բավական է անցնել դաշտերով, վորպեսզի գալ այն յեզրակացության, վոր նոսրացումը կատարվել է պատահաբար, ի միջի այլոց, խոշոր ուշացումով և միանգամայն անբավարար: Բոլոր գյուղերում կարելի յե տեսնել դաշտեր, ուր մեկ բնում կանգնած էին 3–4–6–ական բույսեր, իսկ նրան կից շարքերը գտնվում էին նոսրացված վիճակում: Հենց իրենք, գյուղատնտեսները հաստատեցին, վոր նոսրացումը կատարվել է անխնամ. քաղհանի ժամանակ՝ պատահաբար հանել են բույսերը: Քիչ չեն դեպքերը, յերբ քաղհանի ժամանակ անփութության հետևանքով մոլախոտերի հետ միասին վոչնչացրել են նաև բամբակի բույսերը:

Հետագա մշակման և բերքատվության իջեցման գործում վոչ պակաս նշանակություն է ունեցել նաև վերացանումը՝ կարկտահարության կամ այլ պատճառների հետևանքով: Մարգարայի յենթաշրջանում կարկտահարության հետևանքով վերացանվել է 500 հեկտար տարածություն: Վերացանումը տեղի յե ունեցել ձեռքով, յերբ արդեն դաշտը մասամբ ծածկվել է մոլախոտային բուսականությամբ: Այնուհետև ծլերի ուշ դուրս գալուն նպաստել է նաև այն, վոր յերբեմն տեղերում ցանքսը չի տափանվել: Այսպես՝ Շահրիար գյուղում քաշող ուժի բացակայության շնորհիվ չի տափանված ցանքսի տարածության 60 տոկոսը:

Ջրելու գործում պետք է նշել, վոր, առաջին, ուշացել է առաջին ջուրը, վորն իր հերթին հետաձգել է ծլերի դուրս գալը. յերկրորդ՝ ներքին վոռոգման ցանցը հարմարեցված չլինելով ավելի կամ պակաս մեծ մասսիվների համար, հետաձգել է իր ժամանակին ջրելը: Աղջարխի կոլտնտեսության նախագահի հայտարարությամբ կան հողամասեր, վորոնց առաջին ջուրը տրված է յեղել ոգոստոսին: Մարգարա և Մոլլաբադալ գյուղերում հին վոռոգման ցանքի փոքր հատվածի շնորհիվ, ջուրն ուշացել է. յեղել են հողամասեր, վորոնք առաջին ջուրն ստացել են ծաղկելու շրջանում:

Ցեղել են դեպքեր, յերբ ջուրն ուշացել է ուղղակի բանվորական ուժերի բացակայության շնորհիվ: Իր ժամանակին չջրելը պայմանավորված է յեղել նաև քաղհանի ուշացումով:

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ Է ՎԱՏ ՅԵՎ ՍԽԱԼ

Կոլտնտեսությունների ներսում աշխատանքի թույլ և հաճախ սխալ կազմակերպումը ամենագլխավոր դերն է խաղացել պլանների կատարման գործում: Ամենահիմնականն այստեղ այն է, վոր սխալ է կազմակերպված յեղել բրիգադային աշխատանքը, բրիգադները կցված չեն յեղել վորոշ հողամասերի և պատասխանատու չեն յեղել այդ հողամասերի մշակության ու բերքատվության համար: Աշխատունակ կոլտնտեսականների մոտ կես մասի սիստեմատիկաբար աշխատանքի դուրս չգալը, կանանց աշխատանքի թույլ ոգտագործումը, աշխկարգապահության բացակայությունը, գործավարձի կիրառման ժամանակ կատարված սխալները, անհատական գործավարձի ուշ արմատացվելը, հաշվառումը ժամանակին չմտցվելը—այդ բոլորը վոչ միայն չեն ժխտում կոլտնտեսականները, այլև չեն ժխտում շրջանային աշխատողները. մասնավորապես ՄՏԿ ու ագրոնոմները:

Որինակ՝ ՄՏԿ-ի դիրեկտորի և ավագ ագրոնոմի ստորագրությամբ մեզ ներկայացված գրության մեջ ասված է՝ «մշակման կամպանիայի ամենայեռանդուն պահին, յերբ աշխատանքի քանակի ու վորակի հաշվառումը կիրառվում եր անբավարար, յերբ աշխատանքը կատարվում եր 20–25 հոգուց բաղկացած բրիգադներով, շրջանային կազմակերպությունները սանկցիա եյին տվել բրիգադների խոշորացմանը, հող ստեղծելով թյուրիմացությունների համար... դրա շնորհիվ դաշտերը դիմազուրկ եյին արված, աշխատանքի վորակն ավելի յեր վատացել, նվազել եր կոլտնտեսականների շահագրգռվածությունն աշխատանքի բարձր արտադրականությամբ... այդ բոլորը բացասական ազդեցություն եր գործում մշակման վորակի վրա: Շրջանային կազմակերպությունները շատ ուշ են համաձայնել, վոր չափազանց աղակալած հողամասերում սահմանվեն արտադրանքի ավելի ցածր նորմաներ: Կոլտնտեսականները հարկադրված են յեղել աշխատել 2–2 ու կես որ, վորպեսզի կարողանան ստանալ մի աշխոր... մանր խմբակային գործավարձն սկսել է պատվաստվել, սակայն խոշոր բրիգադների ստեղծվելով, գործավարձն այլևս չի արդարացրել իրեն, քանի վոր աշխատանքի քանակի և վորակի հաշվառումը կատարվել է ձևականորեն... արտադրանքի նորմաները նորմալ մշակվող արտերի և մեքենայացման պայմաններում աշխատանքի բոլոր տեսակների համար միանգամայն իրական են յեղել»:

Մարգարայի ագրոնոմի գրության մեջ միանգամայն ճիշտ մատնանշված է հետևյալը՝ «Մարգարա, Կուրի-Արաղ, Մոլլա-Բադալ, Եվջիլար գյուղերի կոլտնտեսություններում քաղհանը թույլ է կատարվել: Դա բացատրվում է նախ և առաջ աշխատանքի սխալ կազմակերպմամբ: Կոլտնտեսականները գլխովին աշխատանքի դուրս չեն յեկել, ծարյաղները ժամանակին չեն կատարվել, աշխատանքի վորակի վրա

հսկողություն չի յեղել: Ամբողջ յենթաշրջանում չի յեղել քիչ թե շատ փորձված հաշվետար, վորը կարողանար ճիշտ գրանցել աշխորերը: Կոլտնտեսականները բազմիցս գանգատվել են սխալ գրանցման դեմ: Բացակայել են սոցմրցումն ու հարվածայնությունն առանձին կոլտնտեսականների միջև: Մոլլա-Բադալի, Մարգարայի և Կուրի-Արաղի կոլտնտեսություններում ցանքի սկզբից 3 անգամ փոխվել են նախագահները:

Ագրոնոմները լրիվ չեն կարողացել հետևել կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպմանը, զբաղված լինելով պլաններ կազմելով ու վերակազմելով»:

Արմտլու ագրոշրջանի գյուղատնտեսը գրում է՝ «Առաջին և յերկրորդ քաղհանի ժամանակ անհատական գործավարձ չի կիրառվել: Կոլտնտեսականներն արտերում ճաշարաններ չլինելու, մսուրներ կազմակերպված չլինելու և այլ պատճառներով բոլորն աշխատանքի դուրս չեն յեկել»:

Մեզ մնում է անել հետևյալ յեզրակացությունը՝ շնորհիվ ՄՏԿ-ի, ագրոկետերի, շրջանային կոլտնտմիության և շրջանային այլ կազմակերպությունների միանգամայն անբավարար աշխատանքի, Ղուրդուղուլու շրջանի կոլտնտեսությունները մնացել են առանց կոնկրետ, հըմուտ ղեկավարության: Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումն ուշադրության կենտրոն չի հանդիսացել վոչ միայն շրջանային որգանների, այլև Կոլտնտկենտրոնի համար: ՄՏԿ-ն չի կարողացել կատարել իր պատասխանատու խնդիրը՝ ճիշտ կազմակերպել կոլտնտեսական բրիգադի աշխատանքը, ամրացնել գործավարձը:

Այսպիսով բամբակի ֆրոնտում ունեցած մեր անհաջողությունների գլխավոր աղբյուրն աշխատանքի սխալ կազմակերպումն է կոլտնտեսություններում:

Կոլտնտեսական մասսայի աճումը (1931 թ. հունվ. 1-ին յեղել է 1746 անդամ, մինչև 1931 թվի հոկտ. 30-ին հասել է 5127 անդամի) ցույց է տալիս, վոր թեև շրջանը կոլեկտիվացման ասպարեզում ունեցել է զգալի հաջողություններ, բայց տեղական կազմակերպությունները ընդգրկելով կոլեկտիվացման տեխնիկական կողմն այնուամենայնիվ միանգամայն մոռացել են իրենց կարևորագույն խնդիրը՝ ամրացնել կոլտնտեսական ցանցը կազմակերպչորեն, տնտեսապես և քաղաքականապես:

ԽԱՅՏԱՌԱԿ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՄՏ ԿԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Վերև ասվածից հասկանալի յե դառնում, վոր ՄՏԿ-ի ղեկավարությունը հանձին նրա դիրեկտոր ընկ. Զարգարյանի, անընդունակ է գտնվել կատարելու կուսակցության կողմից իր վրա դրված խնդիրները, թե՛ ագրոտեխնիկայի ասպարեզում և թե՛ կոլտնտեսությունների կազմակերպչական ու տնտեսական ամրացման բնագավառում: Ինքնահոս, անպլանայնություն, անկազմակերպվածություն, աշխատանքի ասպարեզում դիմազրկություն՝ ահա թե ինչի մասին են վկայում վերև

մատնանշված փաստերը: Դրա հետ միասին, պետք է մատնանշել ՄՏԿ-ի ամբողջ ագրոկադրի թույլ պատրաստությունը, մանավանդ կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման հարցերում: Բավականաչափ պատրաստված չեն նաև ագրոտեխնիկական ստորին կադրը՝ դաշտավարները, ագրոտեխնիկները, բրիգադիրները: Հաճախակի փոխվել են ագրոնոմները և նրանց աշխատանքը դիմազուրկ է դարձել: Ագրոտեխնիկական աշխատանքի նկատմամբ ղեկավարություն չի յեղել, ագրոնոմները նախաձեռնություն և ձեռներեցություն չեն ցուցաբերել. միևնույն ժամանակ ՄՏԿ-ի ղեկավարությունն անթույլատրելի չափով անտեսել է ագրոնոմներին և սխալ է օգտագործել նրանց աշխատանքը: Մշակման կամպանիայի ամենալարված պահին ՄՏԿ-ն, աշխատանքը գլխավորելու փոխարեն, սխեմատիկաբար արձակուրդներ է տվել ագրոնոմներին:

ՄՏԿ-ի ավագ ագրոնոմի վկայությամբ, ագրոտեխնիկայի հարցերում ագրոաշխատողների մեծ մասի կարծիքը բանի տեղ չի դրվել: Ագրոկադրը, գործնական աշխատանքի փոխարեն, ծանրաբեռնված է յեղել պլաններ կազմելու և վերակազմելու աշխատանքով: Արտադրանքի նորմաները, բամբակի համար հողամասերի պիտանի լինելը և բերքատվության նորմաները, սահմանվել են առանց ագրոկադրի իրական մասնակցության:

Անտարակույս աշխատանքը հմուտ կազմակերպված լինելու, ՄՏԿ-ի ղեկավար կադրի կողմից գոյություն ունեցող ուժերն ու միջոցները լրիվ և պլանայնորեն օգտագործվելու դեպքում կարելի յեր խուսափել շատ սխալներից և պատշաճ բարձրության վրա դնել բամբակի ցանքն ու մշակումը:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԱՆՆՊԱՍՏ ԵՅԻՆ

Այս տարվա բերքատվության չափի վրա ազդեցություն են գործել նաև աննպաստ ոդերևութաբանական պայմանները, վորոնք արտահայտվել են տաքության օրական միջին ցածր աստիճանով ցանքի շրջանում, մթնոլորտային տեղումների առատությամբ և վաղ սառնամանիքներով:

Ցանքի շրջանում տիրող ցածր տաքությունը դանդաղեցրեց բամբակի ծլումը, իսկ մթնոլորտային տեղումների առատությունն զգալի չափով ձգձգեցին վարի ու ցանքի աշխատանքները:

***

Այսպիսով հիմնված վերոհիշյալ փաստերի և ցածր բերքատվության պատճառների վրա, մենք հնարավոր ենք համարում անել հետևյալ յեզրակացությունը՝

Ցածր բերքի հիմնական պատճառը պետք է համարել կոլտնտեսական աշխատանքի սխալ կազմակերպումը, վորի հետևանքով ագրոտեխնիկական ձեռնարկումները՝ վարը, ցանքը, մշակումը, վոռոգումը և այլն, ժամանակին չեն կատարվել:

ՄՏԿ-ն և շրջանային կուսկազմակերպությունները չեն կարողացել կազմակերպել և գլխավորել բամբակի ցանքի ու մշակման կարևորագույն կամպանիաների աշխատանքները, պատշաճ ուշադրություն չեն նվիրել կոլտնտեսությունների կազմակերպչական - տնտեսական ամրացմանը, վորի հետևանքն է յեղել նրանց կազմակերպչական-տնտեսական թույլ դրությունը, մանավանդ աշխատանքի կազմակերպման ու հաշվառման բնագավառում:

Այնուհետև պետք է մատնանշել ագրոկադրի անպատրաստ լինելը, գոյություն ունեցող դիմազրկությունը նրանց աշխատանքում, նախաձեռնության բացակայությունը, նրանց հաճախակի փոխադրումը տեղից-տեղ, ագրոկադրի լրիվ և պլանաչափ օգտագործելու անկարողությունը, վոր դարձյալ բացատրվում է ՄՏԿ-ի վոչ հմուտ ղեկավարությամբ, ինքնահոսի հույսերով և անհրաժեշտ կազմակերպվածության բացակայությամբ:

Մենք գտնում ենք, վոր կոլտնտեսական աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում, բամբակի ցանքի և մշակման բոլոր ձեռնարկումները ժամանակին ու լրիվ կատարվելու դեպքում, ոդերևութաբանական պայմանները չեյին կարող վնասակ ազդեցություն գործել բամբակի բերքատվության վրա:

Այս դասերը պետք է հաշվի առնվեն և այդ հիման վրա կազմակերպվի 1932 թվի բամբակացանը:

Պոլյ. բամբ. տնկար. համար—2

20362-59
Гос. Публ. Библиотека — СОРА — им. А. Мясникяна

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ,
ՍՏՅՈՊԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ի՞ՆՉՈՒ ՄԵՆՔ ՔԻՉ ԲԱՄԲԱԿ ՍՏԱՑԱՆՔ

(ՂԱՄԱՐԼՎԻ ՇՐՋԱՆԻ ՓՈՐՁԸ, ՊԼԱՆՆԵՐԻ ԹԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ)

Ղամարլվի շրջանում 1931 թվի բամբակի պլանը յեղել է 6082 հեկտար, ըստ կոնտրակտացիայի—6325 հեկտար: Նախնական չափերի հիման վրա փաստորեն ցանված է կոլտնտեսություններում՝ 2760 հեկտար, անհատական տնտեսություններում՝ 3384 հեկտար, ընդամենը՝ 6144 հեկտար: Փաստորեն ցանված տարածության 20 տոկոսը գործիքով չափելուց պարզվեց, վոր ցանված է ընդամենը 6049 հեկտար:

Բերքահավաքի պլանը կազմելիս՝ փչացած տարածությունը հաշվի չի առնված և հիմք է ընդունված շրջանի նախնական տվյալները, այսինքն՝ 6144 հեկտար—իբրև բերքահավաքի յենթակա տարածություն:

Մեր կարծիքով, բերքահավաքի համար հիմք պետք է ընդունել վերած տարածության չափման տվյալները, ըստ վորոնց փաստորեն ցանված է 6049 հեկտ.:

Դրանից պետք է հանել կարկուտից և հեղեղներից վոչնչացած տարածությունը, վոր կազմում է 332 հեկտար և չմշակելու հետևանքով պարապ մնացած 80 հեկտարը:

Ընդամենը փաստորեն ցանած 6049 հեկտարի պլանից պետք է դուրս գալ 412 հեկտար, կմնա բերքահավաքի յենթակա 5637 հեկտար, վորպիսի տարածությունը համարյա զուգադիպվում է 20 տոկոս չափման տվյալներին (5628 գա): Հենց այդ տարածությունից էլ պետք է յելնել բամբակի բերքահավաքի պլանը կազմելիս:

Սակայն պլանը կազմված է նախնական տվյալների հիման վրա, այն է՝ հաշվելով 6149 հեկտար տարածություն 11,4-ական ցենտներով՝ ընդամենը 70.098 ցենտ.: Այսպիսով, ընդհանուր առմամբ, բերքահավաքի պլանը կազմված էր վոչ ռեալ 512 հեկտարով, վորը շրջանի համար ընդունված 11,4 ցենտներ միջին բերքատվության հաշվով կազմում էր 5836,8 ցենտներ, կամ ամբողջ պլանի 8,3 տոկոսը: 31 թ. բերքահավաքի պլանը կատարված է մոտ 50 տոկոսով. թերակատարված է 50 տոկ., վորից հիշյալ 8,3 տոկոսը հանելով՝ կմնա 42,5 տոկ. թերակատարում:

Պլանի թերակատարման տեխնիկական պատճառները հետևյալներն են (սկսենք յերկրորդականից).

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ըստ ոդերևութաբանական ցանցի տվյալների, 1931 թիվը նախորդ տարիների համեմատությամբ խիստ տարբերվում է իր ցածր ջերմաստիճանով—ցանքի ժամանակաշրջանում. այն է՝ ըստ բազմամյա տվյալների ապրիլին, ոդի միջին ջերմությունը 12,9° է, իսկ 1931 թվին՝ 12°, մայիսին՝ ըստ բազմամյա տվյալների 18,6° է, իսկ 1931 թվին 15,9°. իսկ միջինը 11 ամսվա ընթացքում, ըստ բազմամյա տվյալների՝ 13,4°, 1931 թ. 12,1° վերջնական հաշվով, վեգետացիոն շրջանում ջերմության գումարը ըստ բազմամյա տվյալների կազմում է 4556,6°, իսկ 1931 թվին՝ 4306° (մարտից—նոյեմբեր): Նկատի ունենալով, վոր այս տարի բամբակի ցանքը սկսվել է մայիս ամսին (առ 1-ն մայիսի ցանվել է 1011 հեկտար)՝ բամբակենին ցանքի սկզբից մինչև վեգետացիայի վերջը (աշնան առաջին ցրտերը բամբակին խփել է հոկտեմբերի 3-ին և 8-ին), այսինքն 1931 թ. մայիսի 10-ից մինչև հոկտեմբերի 8-ը, 150 օրվա ընթացքում, ընդամենը ստացել է մոտավորապես 3260° ջերմություն (1931 թվի մայիսի 1-ից մինչև հոկտ. 1-ը), վորը «Կինգ» տեսակի համար ընդհանրապես անբավարար է համարվում, մանավորապես վեգետացիայի շրջանի ջերմության գումարի համեմատությամբ:

Տվյալ հանգամանքը ավելի խորանում է նրանով, վոր հենց մայիս ամիսը չափազանց անբարեհաջող էր, բազմամյա տվյալների համեմատությամբ՝ իր առավելագույն մթնոլորտային տեղումներով այն է՝ 55 հ. տ.—38 հ. տ-ի հանդեպ: Աղամզալվի կետում՝ 85,3 հ. տ.: 1 հ. տ-ից բարձր տեղումներով օրերի թիվը կազմում է 15, ըստ բազմամյա տվյալների՝ 4., վորպիսի հանգամանքը հնարավորություն չի տվել ցանքը ժամանակին և նորմալ պայմաններում կատարելու: Թե վարելիս և թե ցանելիս դաշտը մեծ մասամբ ցեխ է յեղել:

Բացի ցանքի համար անբարեհաջող կլիմայական պայմաններից, ցանած սերմերը, ոդի ջերմության տեսակետից, աճման համար անբարենպաստ պայմաններում եյին գտնվում: Այսպես օրինակ, մայիս ամսում 9° ջերմությունից ցածր 8 որ է յեղել, 12°-ից ցած՝ 25 որ, իսկ մայիսի 18-ին ոդի ջերմությունը 1,6°-ն յեղել: Միևնույն ժամանակ հայտնի յե, վոր 9°-ից ցածր ջերմության մեջ բամբակի սերմերը մնում են անփոփոխ դրության մեջ: Հենց այդ հանգամանքով էլ բացատրվում է ցանքի ուշ և նոսր բուսնելը, վորը չէր կարող վորոշ չափով չազդել բերքատվության վրա: Այսպես օրինակ, ըստ Աղամզալվի հենակետի տվյալների, ապրիլի 25-ին ցանած սերմերը առաջին տերևը տվել են մայիսի 29-ին, իսկ մայիսի 5-ի ցանքը՝ հունիսի 2-ին, մայիսի 15-ինը՝ հունիսի 5-ին: Առանց այն էլ ուշացած բույսերը իրենց հերթին վնասվեցին աշնան վաղահաս ցրտերից (հոկտեմբերի 8-ին): Ի հաստատություն վերոհիշյալ տվյալների, բերում ենք չբացված կնգուղների մոտավոր թվերը, Ցոփա, Ն. Ղամարլու և Նորադավիթ գյուղերի ցանքային հողամասերում:

Ցոփայում, կոլտնտեսության հողամասում հաշված 367 կնգուղներից մնացել եյին առանց բացվելու 56 հատ, վորը կազմում է 15 տոկոսը:

Նույնը մենք զտել ենք Ն. Ղամարլու գյուղի բնակիչներ Իմամ Ալի Ցեզուլլա ողլու և ուրիշների հողամասերում, վորոնք որինակելի մշակության համար, կոլեկտիվացման և բերքի որը պարգևատրության են արժանացել:

Նորագավիթ գյուղում, Ս. Բալայանի հողամասում, վորը ցանվել է մայիսի 10-ին, ժամանակին և 4 անգամ քաղհանվել ու ջրվել՝ հաշված 391 կնգուղներից 79-ը մնացել եյին առանց բացվելու, վոր 20 տոկոսն է կազմում:

Չբացված կնգուղների այդ տոկոսը ավելի բարձր է այն հողամասերում, վորոնք ավելի բերրի յեն, ուշ են ցանված և լավ մշակված. որինակ՝ Ցուլայում 6 հեկտար բամբակ բոլորովին չի հավաքված և Դոնղուզյան գյուղում 34 հեկտար տարածությունից միայն մի բերք է վերցված:

Գարնան ցրտերի (մայիսյան) և անբարենպաստ պայմանների բերքատվության վրա արած բացասական ազդեցությունը (անձրևային և ամպոտ յեղանակները) պարզորեն ցույց են տալիս Աղամզալլի հենակետի և զանձակի սելեկցիոն կայանի փորձերը:

Այսպես որինակ, ըստ Աղամզալլի հենակետի նախնական տվյալների, յեթե ապրիլի 25-ից մինչև մայիսի 5-ը կատարած ցանքի բերքատվությունն ընդունենք 100 տոկոս, ապա ապրիլի 15—20 կատարած ցանքի բերքատվությունը արտահայտվում է 120 տոկոսով, իսկ մայիսի 5-ին կատարած ցանքինը՝ 88 տոկոսով:

Քանի վոր շրջանում մայիսի 15-ից մինչև ցանքաշրջանի վերջը ցանված է 2532 հեկտար, հետևապես բերքի իջեցումը արտահայտվում է (հաշվելով մինիմում 12 տոկոս) 303,8 հեկտար—100 տոկոսով, վորպիսի իջեցումը, ամբողջ շրջանի 5931 հեկտար ցանքի տարածության հարաբերությամբ, կարտահայտվի 1931 թվի նորմալ բերքի 5,1 տոկոսով:

Ելնելով վերոհիշյալ, չբացված, նույնպես և միանգամայն փչացած կնգուղների թվից, մենք հանգում ենք այն յեզրակացության, վոր վաղահաս ցրտերի պատճառով, մանր կնգուղների փչանալուց և հասած կնգուղների քաշի պակասելուց առաջացած բերքի իջեցումը կարտահայտվի 10 տոկոսով:

ՀԵՐԿԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԸ

Բերքատվության իջնելու վրա զգալի ազդեցություն է ունեցել, ինչպես հողի նախապատրաստումը, այնպես էլ բամբակի մշակությունը:

1930 թվին բամբակի ցանքի համար կատարված է մոտ 1900 հեկտար աշնանավար, վորի հատկությունը մենք հնարավորություն ունեյինք վորոշելու միայն այդ աշնանավարի վրա կատարված ցանքի դրությունը գարնանավարի հետ համեմատելով նաև ինկատի ունենալով 1931 թվին կատարված աշնանավարը: Վերջինս (1931 թվի աշնանավարը), չնայած առավելապես «Ինտերնացիոնալ» սիստեմի տրակտորներով է կատարվել, ու վարի վատորակության մասին համապատասխան

արձանագրություններ չեն կազմված՝ մենք գտանք, վոր աշնանավարի տարածությունը շատ հեռու յե բավարար լինելուց:

Որինակ՝ Նորագավիթ գյուղում, կոլխոզի հին վարած հողամասերում կատարած աշնանավարում թույլ են տրված շատ խարակներ (огрех), իսկ Ն. Ղամարլու գյուղում, 1931 թվի ամառը վարած խամ հողամասերում, բացի մեծ խարակներից առաջացել են անընդհատ ժապավենի նման ձգվող ճիմեր, վորոնք այժմ մշակվում են դիսկավոր փոցխերով: Վերջին գործողությունը վոչ միայն չի մանրացնում ճիմերը, այլ ընդհակառակը, հողի յերեսը քերելով միայն խարակներն է ծածկում:

Շատ կոլտնտեսականների և այլ բամբակացանների հարցաքննությունը ցույց տվավ, վոր 30 թվի աշնանավարը իր հատկությամբ զգալի չափով զիջում է 31 թվի աշնանավարին, վորովհետև հերկը կատարված է յեղել «Ֆորդոն» սիստեմի հին, մաշված տրակտորներով, առանց վարի վորակի վրա վորոշ հսկողություն ունենալու: Բացի դրանից, վարը կատարել են համեմատաբար անվորակավոր տրակտորիստներ: 31 թվի գարնանավարն իր հատկությամբ իսկի յել լավ չե 30 թ. աշնանավարից: Չնայած նրան, վոր տրակտորային պարկը «Ինտերնացիոնալ» սիստեմի տրակտորներով նորոգվել է, այնուամենայնիվ մենք հարկ ենք համարում ընդգծելու գարնանավարի անբավարար հատկությունը, վոր բացատրվում է յեղանակների վատությամբ, տրակտորիստների անփորձությամբ և նրանց վարձատրության սխալ սիստեմով, վորի հետևանքով նրանք քանակի հետևից ընկնելով՝ մեծ խարակներ են թողել ու միաժամանակ շատ յերես վարել:

Այդ հանգամանքը խորանում է նրանով, վոր ինչպես ՄՏԿ-ն, այնպես էլ կոլտնտեսությունների կողմից համապատասխան ուշադրություն չի յեղել դարձված վարի հատկությանը հսկելու վրա:

Բացի դրանից, ՄՏԿ-ն իր գարնանավարի պլանը ժամանակին չկատարելով և ցանքի կամպանիան ուշացնելուց վախենալով, հաճախ, չնայած առանձին կոլտնտեսությունների նախազգուշացման (Աղամզալու)՝ վարը կատարել է ցեխի մեջ:

Նարիմանլու գյուղի մի մեծ հողամաս, վոր լճացած ջրով ծածկված է յեղել, տրակտորներով վարելու հնարավորություն չի յեղել. սակայն նույն գյուղի կոլտնտեսությունը ցանքը կատարել է չվարած հողամասում (10 հեկտար), վորը հետագայում ծածկվել է մոլախոտերով և վոչ մի բերք չի տվել:

Նույն կոլտնտեսությունը, տրակտորի բացակայության պատճառով հարկադրված է յեղել արորի ոգնությանը դիմելու: Արորով աշնանը մի անգամ վարել են ու գարնանը ցանել, կամ բոլորովին չվարած հողերը նույն արորով յերկու անգամ վարել են ու ցանել: Ամբողջ գյուղում, արորով վարած դաշտի տարածությունը, ըստ գյուղխորհուրդի և կոլտնտեսության տվյալների, կազմում է մոտավորապես 300 հեկտար:

Մի շարք գյուղերում (Թազագյուղ, Աղամզալու, Իմանշալու, Ղարաղաշլու, Խալաֆլու) տրված է յեղել արաթի պլանը. արաթի համար հատկացված հողամասերը ժամանակին կոլտնտեսականները ջրում են և սպասում եր ժամանակին էլ կրկնավարել, սակայն կրկնավարի հա-

մար ՄՏԿ-ն միջոցներ չի տրամադրում և այդ հողերը չորանում են ու կորցնում իրենց նշանակությունը:

Բացի դրանից, այդ հողերը չեյին կարող չկորցնել իրենց կառուցվածքն ու սննդարար նյութերի մի մասը՝ կրկնակի ջրելու և կրկնավար անելու հետևանքով:

Համապատասխան կցելի գործիքներ չունենալու պատճառով (մի խոփանի դութան) ՄՏԿ-ն չիմանները վարել է յերկխոփանի դութաններով, վորոնք չեն կարողացել ճիմերը շրջել և վերջիններս նորից պառկել են ծրի մեջ. այդ դրությամբ վոչ մի սկավառակավոր մանկեռ չի կարող մանրացնել այդ առերը. իսկ աշնանը չիմանները կրկնավար անելը, իբրև օրենք, ՄՏԿ-ն յերբեմն դարնանն էլ չի կիրառում:

ՑԱՆՔԻ ԳԾՈՎ ՑԵՂԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանքը սկսվել է ապրիլի 20-ից և մինչև ցանքի վերջնական ժամկետը—մայիսի տասը, պլանով նախատեսված 6144 հեկտարի հանդեպ ցանվել է 3438 հեկտար: Մնացած տարածության ցանքը ձգձգվել է մինչև հունիսի սկիզբը: Այդ հանգամանքը, բացի կլիմայական պայմաններից, բացատրվում է նաև նրանով, վոր ՄՏԿ-ն համապատասխան քանակությամբ ցանիչներ ու ձիյեր չունի, ժամանակին ձեռքի և մեքենայի շարքային ցանք չի կազմակերպել, վորի հետևանքով ցանքի ժամանակաշրջանը արհեստականորեն յերկարել է:

Ցանքի ժամանակաշրջանից առաջ, շրջբամբակմիությունը հատուկ սերմացանները պատրաստելու կուրսեր է կազմակերպել, սակայն հետագայում բամբակագործության սպասարկումը ՄՏԿ-ին հանձնելու հետևանքով, վերջինս ցրել է այդ կուրսանտներին (բացի Նարիմանլիի շրջանից) և ցանիչը ձիու հետ միասին հաճախ տրամադրել անփորձ բամբակացանի, վորը մեքենային ծանոթ չլինելու հետևանքով ցածր արտադրողականությունից բացի, անկանոն ցանք է կատարել. ինչպես սերմը հողում թաղելու խորության, այնպես էլ շարքերի միջև տարածությունը անկանոն վերցնելու տեսակետից:

Մի քանի գյուղերում (Նարիմանլու, Նորադավիթ), նախատեսված էր տրակտորային ցանք կատարել, որական 16 հեկտար արտադրողականությամբ, սակայն կոլտնտեսականների ասելով, Նարիմանլվում 3 որվա ընթացքում ՄՏԿ-ն ցանել է միայն մեկ հեկտար, իսկ Նորադավիթում, Հաջիբեյլարում տրակտորներով սերմերը խոր թաղելու հետևանքով ցանքերը ուշ ծլեցին և մեծ նոսրությամբ: Տրակտորացանի պլանը չի կատարվել, հարկ է յեղել չցանված տարածությունը ուշացումով ձիու ցանիչով, կամ ձեռքով կատարել:

ՔԱՂՀԱՆԸ, ՆՈՍՐԱՑՈՒՄՆ ՈՒ ԿՈՒԼՏԻՎԱՑԻԱՆ

Ինչպես հայտնի յե, առաջին և յերկրորդ քաղհանը նոսրացման հետ միասին հիմնական դեր են կատարում նորմալ բերք ստանալու խնդրում, մինչդեռ ինչպես օրինակները ցույց են տալիս, Նորադավիթը, Թազագյուղը, Ժանավառը Նարիմանլուն և այդ յենթաշրջանների մի շարք գյուղեր, առանձնապես հետ են մնացել քաղհանը ժամանակին կա-

տարելու տեմպերից: Այդ տեսակետից գործը համեմատաբար լավ է յեղել դրված Ղամարլվի և Իմանշալվի յենթաշրջաններում, այնուամենայնիվ, այստեղ էլ, ցանքի մի մասում հիշյալ աշխատանքները ուշ են կատարվել:

Չնայած կոլտնտեսությունների անվիճելի առավելություններին, ներկոլտնտեսական աշխատանքի սխալ կազմակերպման հետևանքով առաջին յերկու յենթաշրջաններում մշակման աշխատանքները հետ են մնացել գլխավորապես կոլտնտեսություններում, ինչպես քանակական, այնպես էլ վորակական ցուցանիշներով: Այդ հանգամանքը հաստատվում է, Թազագյուղում, մշակման պլանի հետևյալ կատարումով[1]

Ցանքի ժամանակը	Կոլտնտ.	Անհատական	Մշակում I քաղհան	Կոլտնտ.	Անհատական
Ապրիլ 20—30	49.5	8,5	Մայիսի 21—30	30,5	2,5
Մայիս 1—10	69 5	5,8	Հունիսի 1—10	53,25	81,25
» 11—20	77,5	78,5	» 11—20	81,5	112,5
» 21—30	14	106,25	» 21—30	54,5	55

Վերը բերված աղյուսակից պարզ յերևում է, վոր չնայած ցանքը շուտ վերջանալուն՝ կոլտնտեսությունն առաջին քաղհանը 10-15 օրով ավելի ուշ է կատարել, քան անհատական տնտեսությունները:

Այդ հանգամանքն ապացուցվում է կոլտնտեսությունների և անհատականների բամբակի հանձնման պլանի կատարումով: Մխենուջու գյուղում, կոլտնտեսությունը բամբակի հանձնման պլանը կատարել է 36 տոկոսով, մինչդեռ անհատականները կատարել են 71 տոկոսով:

Նարիմանլու գյուղում կոլտնտեսությունը կատարել է 18,3 տոկոսով, իսկ անհատականները 63,5 տոկոսով:

Տվյալ յենթաշրջանում կոլտնտեսությունները պլանը կատարել են 20,2 տոկոսով, անհատականները 54 տոկոսով:

Այդ հանգամանքը բացատրվում է կոլտնտեսություններում աշխատանքի սխալ կազմակերպությամբ, նրանով, վոր կոլտնտեսական բրիգադները մինչև վերջ ամրացված չեն յեղել յուրաքանչյուրը մի հողամասի և պատասխանատու չեն յեղել յուրաքանչյուրն «իր» հողամասի մշակության համար: Այստեղից էլ բղխում են մյուս բոլոր չարիքները—վատորակ նոսրացումը, կուլտիվացիան, քաղհանը և այլն: Այստեղից էլ բղխում է դիսցիպլինայի բացակայությունը. օրինակ, Նարիմանլվում աշխատանքի յեռուն շրջանում 343 բանվորական ձեռքի փոխարեն աշխատանքի եյին դուրս գալիս 60—70 հոգի:

Բամբակի վատ մշակության գործում խոշոր դեր են խաղացել նաև կուլակային պրովոկացիաները, յենթակուլակների կազմալուծիչ գործունեությունը կոլխոզների ներսում, վորոնց դեմ պայքարն ընդհանուր առմամբ յեղել է թույլ:

Ահա այս դասերի հիման վրա յե, վոր պետք է կազմակերպենք այս տարվա բամբակացանը:

ԴԱՍԵՐ, ՎՈՐՈՆՔ ՀԻՄՔ ՊԻՏԻ ԾԱՌԱՅԵՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆԻ 1931 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԻ ՔԶՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ամբողջ Հայաստանում, բամբակի չափից դուրս ցածր բերքատվությունը գրավեց կուսակցության, կառավարության և խորհրդային լայն հասարակայնության ուշադրությունը:

Հ. ԿԿ (բ) Կենտկոմի վորոշմամբ բամբակացան շրջաններն ուղարկվեցին հատուկ հանձնաժողովներ՝ բամբակի բերքի պակասության պատճառները բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար: Քննության յենթակա շրջաններից մեկն եր նաև Վաղարշապատի շրջանը, վորը բաժանվեց չորս յենթաշրջանների, ըստ ՄՏԿ-ի ագրոկետերի ներկայության: Վաղարշապատի շրջանում կա ընդամենը 41 բամբակացան գյուղ և № 3 խորհրդային տնտեսությունը, բամբակի ցանքի 7435 հեկտար ընդհանուր տարածությամբ, սակայն բերքահավաքի յենթակա տարածությունը կազմում եր 7100 հեկտար. Հողժողկոմատի հանձնաժողովը 335 հեկտարը հանել է, վորպես կարկտահարությունից և այլ պատճառներից վնասված տարածություն:

41 գյուղից և № 3 խորհրդային տնտեսությունից, քննության է յենթարկվել 33 գյուղ և խորհ. տնտեսությունը՝ բամբակի 4800 հեկտար տարածությամբ, կամ ամբողջ շրջանի բամբակի ցանքի 70 %-ը:

Քննության մեթոդը կայանում եր նրանում, վոր հանձնաժողովը գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների նախագահների ու 5—10 գյուղացիների հետ միասին շրջում եր ամեն գյուղի բամբակի դաշտերը — առանձին-առանձին և տեղն ու տեղը պարզում ցանքի դրությունը, մշակման վորակը, բամբակենու վրա տարած խնամքը: Դրանից հետո, հիշյալ անձանց և այն գյուղացիների ներկայությամբ, վորոնք կարող եյին լրացուցիչ տեղեկություններ տալ, կայացված խորհրդակցություններում հանրագումարվում եյին քննության յենթարկված գյուղի տվյալները: Հանձնաժողովը յենթաշրջաններում իր աշխատանքներն ավարտելուց հետո, հանձնաժողովի անդամների խորհրդակցության գումարեց, ուր անդամները բանավոր և գրավոր ձևով ներկայացրին կատարած քննության արդյունքները:

Այդ խորհրդակցությունից պարզվեց, վոր 1931 թվի բամբակի ցածր բերքատվությունը պայմանավորվում է մի շարք պատճառների միացմամբ, վորոնցից գլխավորները հետևյալներն են:

1. Հողամասերի ընտրությունը

Բամբակի ցանքի համար հողամաս ընտրելու կարևոր խնդրի վրա լուրջ ուշադրություն չի դարձվել. հաճախ մոտեցումը յեղել է ձևական. յելնելով վոչ այնքան հողի պիտանիությունից, վորքան պլանի կատարումից:

Այդպիսի մոտեցման հետևանքով, մի շարք գյուղերում, հարմարավոր հողերի կողքին, բամբակի ցանքի համար հատկացվել են չորաքյած և մեծ քանակությամբ ստորերկրյա ջրեր պարունակող հողամասեր:

Ինչպես յերևում է Հողբաժինն ու ագրոանձնակազմը վոչ միայն տվյալներ չեն ունեցել վարի վորակի, այլ և ստույգ տեղեկություններ չեն ունեցել նաև վարած հողամասերի տարածության մասին:

Վերոհիշյալ յենթադրությունը հաստատվում է հետևյալ օրինակներով. մարտ ամսվա ընթացքում, Վաղարշապատի շրջանի յուրաքանչյուր գյուղին տրված է յեղել բամբակացանման 4—5 պլան. ըստ վորում այդ պլանների տարբերությունը չափազանց զգալի չի յեղել:

Այսպես օրինակ. Հասանլու գյուղին առաջին անգամ տվել են 180 հեկտարի պլան, յերկրորդ անգամ՝ 46 հեկտարի, յերրորդ անգամ՝ 38 և չորրորդ անգամ՝ 48 հեկտարի: Նեքին Ղարխուն գյուղի նախնական պլանը յեղել է 190 հեկտար, հետո տվել են 205 հեկտար, ապա՝ 210 և վերջապես 240 հեկտար: Ռաչպար գյուղին տվել են 340, 240, 140, 175 և վերջապես 165 հեկտարի պլան և այլն:

Ջեյվալի յենթաշրջանում բամբակի ցանք է կատարվել 150 հեկտար ստորերկրյա ջրերով հարուստ հողամասերում, առանց դրենաժի (չորացման) յենթարկելու, վորը նորմալ ծլում չի տվել. Նույնպիսի պատկեր նկատված է նաև № 3 խորհ. տնտեսությունում և այլ յենթաշրջաններում:

Բամբակ ցանելու համար հատկացվել է նաև չոր հողամասեր, ինչպես օրինակ Սարվանլար, Հասանլու, Ն. Ղարխուն, Ղարղաբազար և այլ գյուղերում:

Այդպիսի օրինակներ կարելի յե բերել յուրաքանչյուր յենթաշրջանից, սակայն մեզ թվում է, վոր վերոհիշյալ հանգամանքը հաստատելու համար դա յել բավական է:

1931 թվին բամբակ ցանելու համար հատկացված անպետք հողերի ստույգ տարածությունը ցույց տալու հնարավորություն չկա, քանի վոր բամբակի ցանքի գործիքային չափման միջոցին այդ հանգամանքը չի հաշվառվել:

2. Վարը

Բամբակի բերքատվության հիմնական գործոններից մեկը վարի հատկությունն է, մանավանդ աշնանավարը:

Այդ տեսակետից դրությունն այնքան էլ մխիթարական չէ:

Աշնանավարի պլանը կատարվել է 21 %-ով, ըստ վորում աշնանավարի այդ տարածությունից լավագույն հողերը ցորենի ցանքին է հատկացվել, վորի հետևանքով բամբակի համար աշնանավարի տարածությունն ավելի յե պակասել:

Գարնանավարի պլանը կատարվել է, սակայն չափազանց ցածր վորակով: Վարի վատորակությունը կայացել է նրանում, վոր նախ՝ մեծ մասամբ վարը կատարվել է հողամասերի չափազանց խոնավ ժամանակ, վորից առաջացել են, հետագա մշակմանը խանգարող (մանկեռել, մարկոսել) մեծ հողակոշտեր: Յերկրորդ՝ վարելու ժամանակ տրակտորները խաբակներ են արել, տեղ տեղ վարը յերես են կատարել, տրակտորիստները մեծ մասամբ վորակավոր չեն յեղել: Պետք է ընդգծել նաև մի յերևույթ, դա այն է, վոր կոլտնտեսություններն ու անհատական սեկտորը հերկի վորակին հսկելու համար պատասխանատու մարդիկ չեն նշանակել:

Տրակտորիստները քանակի յետևից ընկնելով՝ վորակը յերկրորդական խնդիր են համարել:

3. Ցանքը

Ցանքը շրջանում սկսել են ապրիլի 20-ից և վերջացրել հունիսի 12-ին. իսկ հիմնականում ցանքը սկսվել է ապրիլի 25-ին և ավարտվել մայիսի 25-ին:

Պլանի հանդեպ՝ ցանքի ուշացման պատճառը (ըստ պլանի սկիզբը ապրիլի 20 և վերջը մայիսի 10) յեղել է մի կողմից կլիմայական անհաջող պայմանները, մյուս կողմից էլ, բավարար չափով կենդանի քարշող ուժի բացակայությունը. վորոշ դեպքերում, ցանքի ժամանակ յեզներն ու ձիյերը զբաղված են յեղել վարով, վորոշ դեպքերում էլ, կերի պակասության պատճառով, ընդմիջումներով, որական աշխատել են 2—3 ժամից վոչ ավել:

Կոլտնտեսություններում ցանքը վերջացվել է Հողժողկոմատի սահմանած ժամկետներին (հիմնականում մայիսի 8-ին): Այդ ժամկետները, վոր նորմալ են յեղել ցանքի համար ընդհանրապես՝ ընթացիկ տարում բացասական նշանակություն են ունեցել, քանի վոր ցանքից հետո տեղացած անձրևների պատճառով սերմի մի մասը վոչնչացել է, ծիլերը նոսր են դուրս յեկել և հողի յերեսին կեղև գոյացել: Անձրևները խոչնդոտ են հանդիսացել տափանելուն, վորի հետևանքով ծիլերը միահավասար չեն դուրս յեկել. և մոլախոտերը ուժեղ կերպով խեղդել են ցանքերը:

Ամբողջ ցանքը կատարված է շարքով, ըստ վորում կեսից ավելին մեքենայով, մնացածը ձեռքով:

Պլանի կատարման յետևից ընկնելով՝ ցանքը կատարել են ցեխում ու անձրևներին, հաշվի չառնելով ոդյերևույթաբանական անբարենպաստ պայմանները: Հետևանքն այն յեղավ, վոր այդ շրջանում կատարած ցանքի մի մասը հարկ յեղավ հետագայում նորից ցանելու, իսկ մնացած մասը շատ նոսր ծիլեր տվավ, վորովհետև սերմի մի մասը փտեց, իսկ մյուս մասը՝ հողի յերեսին գոյացած կեղևի պատճառով դուրս չեկավ:

Բացի վերոհիշյալից, բերքատվության վրա ազդող եյական պակասություններից մեկն էլ այն էր, վոր շարքերի մեջ ստանդարտային (60 սանտիմ) տարածություն են թողել, անկախ հողի բերրիության աստիճանից, մինչդեռ ավելի քիչ բերրի հողերում այդ տարածությունը պետք էր ավելի պակաս վերցնել, իսկ բերրի հողերում ընդհակառակը: Այդ

վերջին հանգամանքի շնորհիվ, ամբողջ ցանքի 15-20 %-ը նոսր ստացվեց:

Կրկնացանի յենթարկվեցին ինչպես չափազանց վաղ ցանած, այնպես էլ կարկտահար յեղած ու հեղեղված հողամասերը, վորոնց ընդհանուր տարածությունը կազմում է մոտ 800 հեկտար: Ինչպես կրկնանները, այնպես էլ ուշ կատարված ցանքերը տուժեցին հոկտեմբերի 3-4-ին և 8-ին տեղի ունեցած խիստ ցրտերից:

4. Տափանելը

Բամբակի ցանքի համահավասար ծլելու և մոլախոտերը վոչնչացնելու խնդրում պակաս կարևոր դեր չի խաղում տափանելը. մինչդեռ այս տարվա բամբակի ցանքի միայն 20 %-ն է տափանվել մասամբ անձրևների, գլխավորապես էլ տեղական աշխատավորների թերագնահատության պատճառով:

5. Քաղհանը և նոսրացումը

Ժամանակին կատարվող քաղհանը, նոսրացումն ու հողի փխրեցումը բարձր բերքատվության յերաշխիքն են հանդիսանում. մինչդեռ քննությունը պարզեց, վոր չնայած տեղական կազմակերպությունների և ագրոանձնակազմի ցանքի շրջանում հայտարարած ուշադիր վերաբերմունքին՝ բամբակի մշակությունը անբավարար է կատարվել:

Շրջանի ագրոանձնակազմի, կոլտնտեսականների և գյուղատնտեսների … ասելով, իբր թե քաղհանը կատարվել է 4—6 անգամ և այն էլ ժամանակին, մինչդեռ դաշտի զննությունը ցույց տվավ, վոր դաշտի 20—25 տոկոսը մինչև վերջն էլ ծածկված է յեղել մոլախոտերով:

Ճիշտ է, անբարենպաստ ոդերևութաբանական պայմանները, այն է՝ մթնոլորտային առատ տեղումները նպաստել են բամբակի դաշտը մոլախոտերով ծածկվելուն, սակայն կազմակերպված ղեկավարությամբ և աշխատանքի կանոնավոր կազմակերպությամբ կարելի յեր քաղհանն ու նոսրացումը ժամանակին ու լավ կատարել:

Շատ վատ են կատարվել նաև բամբակի դաշտի նոսրացման աշխատանքները. հաճախ են պատահում դեպքեր, յերբ 25 քառ. սանտիմետր տարածության վրա 6—10 բամբակենու բույս կա:

Մի շարք կոլտնտեսություններում քաղհանն ու նոսրացումը ավելի վատ են կատարվել, քան անհատական սեկտորում: Դա տեղի յե ունեցել շնորհիվ մի շարք պատճառների, վորոնցից գլխավորները հետևյալն են.

1) Մի շարք կոլտնտեսություններում մի բանվորի բեռնավորումն ավելի մեծ է յեղել, քան անհատական սեկտորում (Թանչպարում՝ $2\frac{1}{4}$ հեկտար, Ն. Ղարխունում՝ 2 հեկտար, Արբատում՝ 2 հեկտար. Գոյղումբեթում՝ $2\frac{1}{4}$ հեկտար):

2) Ցանքը կատարվել է կարճ ժամանակամիջոցում— 8-10 օրվա ընթացքում. առանց անձրևների շրջանում աշխատանքները դադարեցնելու, վորի հետևանքով, կոլտնտեսությունը, մշակման նորմալ ժամկետի, այն է՝ 20—22 օրվա փոխարեն, այդ աշխատանքները պետք է կատարեր 8-10 օրվա ընթացքում. այստեղից էլ առաջանում է աշխատանքի վատորակություն, չափից դուրս բեռնավորում:

3) Աշխատանքի թույլ կազմակերպումը, դաշտերի դիմազրկությունը, վարը և վատ մշակության գլխավոր պատճառն է հանդիսանում:

Կոլխոզ սիստեմն ու ՄՏԿ-ն չկարողացան կոլտնտեսություններում աշխատանքն ճիշտ կազմակերպել ու կոլտնտեսականներից բրիգադներ կազմելով և նրանց վորոշ հողամասերի ամրացնելով՝ դիմազրկությունից խուսափել:

6. Կլիմայական պայմանները

Սերմերի ծլելու համար, միջին հաշվով անհրաժեշտ է 13° ջերմություն, ըստ Ցելսի, մինչդեռ ապրիլ ամսին այդպիսի ջերմություն չի յեղել. ուստի այդ ժամանակաշրջանում ցանած սերմերը մասամբ հողի մեջ փտել են, մասամբ էլ մեծ ուշացումով ծլել (7—8 օրվա փոխարեն՝ 15—17 օրում). Ծլերն էլ յեղել են թույլ ու նվաղ՝ դեպի բոլոր տեսակի հիվանդությունները տրամադիր: Բամբակենու աճման խնդրում պակաս դեր չեն խաղացել նաև մթնոլորտային տեղումները, վորոնք մի կողմից օդի ջերմությունն են իջեցրել, մյուս կողմից էլ ցանքի յերեսին կեղև առաջացրել. իսկ այդ կեղևը արգելք է հանդիսացել ծլերի միահավասար դուրս գալուն: Ըստ օդերևութաբանական տվյալների ապրիլին յեղել է 11 անձրևային օր, իսկ մայիս ամսում 19 անձրևային օր: Այդպիսով, ապրիլ և մայիս ամիսները անբարենպաստ են յեղել թե վարի և թե՛ ցանքի համար: Ինչպես արդեն ասացինք, այդ հանգամանքը՝ նախ դժվարացրեց բամբակենու հետագա մշակման գործը և յերկրորդ՝ հարկադրեց կրկնացան կատարել, այսինքն՝ նոր ցանքերը աշնան վաղ ցրտերի հնարավոր վտանգին յենթարկել, վորը տեղի ունեցավ այս տարի, հոկտեմբերի 3-4-ին և 7-8-ին և զգալի վնաս հասցրեց բամբակի դաշտերին:

Ըստ մոտավոր հաշվի, աշնան այդ ցրտերից բամբակի նորմալ բերքի 12—15 % փչացավ: Ինչ վերաբերում է բամբակի բերքատվության հետ կապված մյուս գործոններին, ինչպես օրինակ պարարտացումը, վոռոգումը, վնասատուների դեմ կռվելն ու բամբակի բերքահավաքը, պետք է ասել, վոր ընդհանուր առմամբ այդ աշխատանքները կատարվել են նորմալ կերպով: Դաշտերը շրջագայելիս պարզվեց, վոր հասած ու չհավաքած բամբակի քանակությունը շատ աննշան էր, վորը հավաքվում էր:

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵԼ ԱՅՍ ՏԱՐԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բամբակի բերքն իջեցնող պատճառները կանխելու և այս տարվա բամբակի բերքն ապահովելու համար անհրաժեշտ է.

1. Մինչև գարնանավարի սկիզբը, ձեռնհաս հանձնաժողովների միջոցով ստույգ կերպով, ըստ գյուղերի, վորոշել բամբակի մշակության համար պիտանի հողերի տարածությունը, միաժամանակ վորոշել դրենաժի (չորացման միջոցառումներ) և վոռոգման յենթակա հողամասերը և գծել այդ աշխատանքների պլանները այն հաշվով, վոր մինչև վարի սկիզբը կատարվեն: Միաժամանակ ձեռնարկել հողի քարտի կազմման:

2. Վարի ժամանակին ու վորակը բամբակի բերքատվությունը բարձրացնելու կարևոր գործոնը համարելով՝ անհրաժեշտ է 1932 թվի գարնանը՝

ա) դաշտը վարել 18 սանտիմետրից վոչ պակաս խորությամբ.

բ) հերկը կատարել վոչ այնքան թաց ու շատ խոնավ հողամասերում և բացառապես ագրո անձնակազմի ցուցմունքով.

գ) վատորակ վարից խուսափելու համար, հերկի ժամանակաշրջանում կոլտնտեսականներից վերհսկողություն սահմանել.

դ) տրակտորիստների վորակավորումը բարձրացնելու նպատակով, մինչև վարը սկսվելը, կարճատև կուրսերի միջոցով վերապատրաստել տրակտորիստներին և ղեկավարներին:

3) Բամբակենու նորմալ աճումն ապահովելու համար՝

ա) ցանքը կազմակերպել այն հաշվով, վոր ցանքի համար սահմանած ժամանակամիջոցում, այն է՝ ապրիլի 20-ից մինչև մայիսի 15-ը աշխատանքներն ավարտվեն.

բ) միջշարքային տարածությունը սահմանել ըստ հողի բերրիության և ցանքի խտության: Դրան համապատասխան, պարտավորեցնել գյուղատնտեսին, անշեղորեն ղեկավարվել այդ նորմաներով և կյանքում կիրառել.

գ) Նորմալ և լավորակ ցանքն ապահովելու նպատակով, համապատասխան կուրսերի միջոցով անհրաժեշտ է բավականաչափ կոլտնտեսականներ պատրաստել:

4. Բերքատվության գլխավոր ֆակտորը հանդիսանում է ժամանակին կատարվող մշակումը, այն է՝ քաղհանը, նոսրացումը, վոռոգումը: Այդ աշխատանքների լավորակությունն ապահովելու համար անհրաժեշտ է.

ա) բամբակի հողամասերը ցանքի սկզբից մինչև բերքահավաքի վերջը *ամրացնել վորոշ բրիգադների.*

բ) աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է բոլոր կոլտնտեսություններում անց կացնել ողակային և անհատական գործավարձը, սոցմրցումն ու հարվածայնությունը, վերջինները ծավալելով նաև անհատական սեկտորում.

գ) Հողժողկոմատը պետք է շրջանների և յենթաշրջանների համար, 1932 թվի կլիմայական պայմաններին համապատասխան— քաղհանի և վոռոգման որացուցային ժամկետներ նշանակի և աշխատանքի ընթացքում այդ ժամկետների մեջ համապատասխան ուղղումներ մտցնի:

5) Ինկատի ունենալով պարարտացման եֆֆեկտիվության աստիճանի քիչ ուսումնասիրված լինելու հանգամանքը, անհրաժեշտ համաբել հանրապետական խորհրդակցություն գումարել, քննելու հանրագումարելու բամբակենու վրա կատարած պարարտացման փորձերի արդյունքները, նույնպես և, ըստ հողի հատկության պարարտանյութերի տեսակն ու նորման սահմանելու համար:

6. Վարի, ցանքի և մշակման ժամանակաշրջանում, ագրոանձնակազմից և ակտիվից, շրջանային և յենթաշրջանային խորհրդակցություններ գումարել՝ քննության առնելու կամպանիաների կանոնավոր և ռացիոնալ ձևով տանելու հարցերը:

7. Առաջարկել շրջանային ցանքը սահմանած ժամկետներում կատա-

րել, հաշվի առնելով մշակության հնարավորությունն ու ժամանակը:

8. Ի նկատի ունենալով, որ ագրոանձնակազմի հոսունությունն ազդում է բամբակի կամպանիայի ընթացքի վրա, համապատասխան մարմինները խրախուսական միջոցներ պիտի ձեռք առնեն ագրոանձնակազմին ավելի յերկար ժամանակով տեղերին ամրացնելու համար:

9. Գիշերային հերկի դեպքում՝ անհրաժեշտ է տրակտորներին լուսավորությամբ ապահովել, վորպեսզի վերացվեն այն թերությունները, վոր անխուսափելի յեն լուսավորության բացակայության պայմաններում:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. ՍԻԼԱՆՅԱՆ

Անդամներ՝
Հ. ՂՈՆՍԱԽՋՅԱՆ
Ա. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
Գ. ԱՂԱՄԱԼՅԱՆ
Վ. ՂԱՐԻԲՅԱՆ
ՎԱՖԻԿՅԱՆ

ԾԱՆՈԹ. ԽՄԲ. Հանձնաժողովը շրջանցել է ցածր բերքատվության միայն տեխնիկական բնույթ ունեցող պատճառները: Հանձնաժողովի թված բոլոր այն թերությունները, վորոնք նկատվեցին անցյալ տարվա բամբակի մշակության բնագավառում (վատորակ հերկը, ցանքը, քաղհանը և այլն) ցածր բերքի պատճառ հանդիսացան: Սակայն այդ թերությունների բուն արմատը գտնվում է ներկոլտնտեսական աշխատանքի սխալ կազմակերպման մեջ: Կոլտնտեսական բրիգադները մինչև վերջ կցված չեն յեղել առանձին հողամասերի, պատասխանատու չեն յեղել նրանց մշակության համար, բրիգադների յեկամուտը (աշխօրերի արժեքը) վոչ մի անմիջական կախում չի ունեցել տվյալ հողամասի բերքի չափից: ԱՅԴՈՐԻՆԱԿ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ Է ԲԱՄԲԱԿԻ ՎԱՏՈՐԱԿ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ: Այդ սխալն է, վոր այս տարի արմատախիլ պետք է անել, բրիգադները Համ. Կ. (բ) Կենտկոմի փետրվարի 4-ի վորոշման համաձայն կցել հողամասերին, նրանց մինչև վերջ պատասխանատու դարձնել «իրենց» հողամասի մշակության բոլոր պրոցեսների համար և յուրաքանչյուր բրիգադի յեկամուտը վորոշել նաև «իր» հողամասի տված բերքի քանակով:

Այս միջոցով կարող ենք ապահովել կոլտնտեսական բամբակագործության բարձր բերքատվությունը:

ԽՄԲԱԳՐՈՂ

Ն. ԱԴՈՅԱՆ

ՉԿՐԿՆԵԼ ԱՆՑՅԱԼ ՏԱՐՎԱ ՍԽԱԼՆԵՐԸ

(ՎԵԴՈՒ ՇՐՋԱՆԻ ՓՈՐՁԸ)

Վեդու շրջանում 1931 թվի գարնան բամբակ է ցանվել 1845 հեկտար, վորից 697 հեկտարը կոլխոզներում և 1148 հեկտար անհատական տնտեսություններում: Այդ տարածությունից չի ծլել 235 հեկտ. և կարկտահարությունից փչացել է 80 հեկտար, վորը վերացանվել է: Հետագայում այդ տարածությունից մինչև բերքահավաքը մնացել է միայն 1698 հեկտար, վորովհետև 147 հեկտարը փչացել է խիտ ցանք կատարելու, մոլախոտերի, վնասատուների, սելավի և անխնամ թողնելու հետևանքով:

Ըստ պլանի շրջանը պիտի հանձներ պետությանը 16.023,85 ցենտներ բամբակ, բայց հանձնել է ընդամենը 7662 ցենտներ, այսինքն կատարել է պլանի միայն 47 տոկոսը: Պլանի նման խայտառակ թերակատարումը ունի մի շարք պատճառներ. վորոնց կարելի յե բաժանել 2 խմբի, այն է՝ կազմակերպչական և ագրոտեխնիկական: Կարևոր ենք համարում կանգ առնել այդ պատճառների վրա, առանձին-առանձին և թվել այն միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի հետագա տարիներին այս տարի թույլ տրված սխալները չկրկնվեն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1. ՄՏԿԱՅԱՆԸ ԿԱՆԳՆԱԾ ՉԻ ՅԵՂԵԼ ԻՐ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդրում մեքենատրակտորային կայանները պիտի խաղան առաջնորդող դեր: ՄՏ կայանները հանդիսանում են վոչ թե միայն տեխնիկական բազայի, այլ նաև կոլխոզների վողջ տնտեսական կյանքի կազմակերպիչները: Սակայն այս հիմնական խնդիրները չեն հասկացել շրջանի ՄՏ կայանի ղեկավար ընկերները, նրանք չեն կարողացել կազմակերպել պայքար կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար:

Բամբակի ցանքի մշակման կարևորագույն կամպանիաների աշխատանքները, այդ կուլտուրայի խնամքի կարևոր ետապները չեն յուրացվել ՄՏ կայանի շրջանի կուս. և պրոֆ. կազմակերպությունների կողմից:

Փոքր դեր չի խաղացել շրջանի ՄՏ կայանի ագրոպերսոնալի մասնագիտորեն անպատրաստ լինելը, վորն ուժեղ կերպով արտահայտվել է արաթի, վարի, ցանքի և պարարտացման խնդիրներում: Այստեղ բացակայել է նախաձեռնությունը, աշխատանքներում գոյություն է ա-

նեցել բացարձակ դիմազրկություն, իսկ ՄՏ Կայանը չի ունեցել հմուտ ղեկավար ուժ՝ դրանց աշխատանքը կանոնավորելու համար, ուստի աշխատանքների մեծագույն մասը տարվել է ինքնահոսի կարգով:

2. ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈՆՏՐՈԼԻ ՓՈԽԱՐԵՆ

Տեղական և շրջանային ընկերները կենդանի ղեկավարություն և ճիշտ ցուցմունքներ տալու փոխարեն, հաճախ բավականացել են անժամանակ կարգադրություններով, գործել են վարչական մեթոդներով: Այդ ամենը հեռացրել է բամբակացանների ուշադրությունը բամբակի մշակման անմիջական պրոցեսներից, դրել է նրանց դիտողի դերում. նսեմացրել է կոնտրակտացիոն պայմանագրերով նախատեսված պարտավորությունների հանդեպ պատասխանատվության զգացումը, հնարավորություն է տվել խուսափելու պետության առաջ ստանձնած պարտավորություններից:

Վարի, ցանքի նոսրացման, ջրի և հետագա մշակման և բերքահավաքի շրջանում սոցմրցումն ու հարվածայնությունը չեն հանդիսացել աշխատանքի հիմնական մեթոդները: Չի տարվել հարվածայնության ստուգատես, չեն հայտաբերվել կեղծ հարվածայինները:

Ճիշտ կազմակերպված չի յեղել նաև աշխատանքի հաշվառումը կոլխոզներում վատ է կենսագործվել գործարքը: Աշխատանքի դուրս են յեկել համարյա բացառապես կանայք, իսկ տղամարդիկ և պատանիները զբաղված են յեղել ցորենի և մյուս մշակույթների աշխատանքներով:

Բացակայել են մասսայական կուլտ-կրթական աշխատանքները, շատ թույլ է յեղել դրված կուլտ սպասարկումը, շատ տեղերում չեն յեղել մսուրներ, մանկա-հրապարակներ և բժշկական պունկտեր, իսկ շրջանի ղեկավար որգաններն այս բոլորի հանդեպ, ունեցել են բացահայտ ոպորտունիստական վերաբերմունք և շատ քիչ բան են արել բացերը վերացնելու համար:

Սակայն ամենագլխավորն այն է, վոր սխալ է կազմակերպված յեղել կոլտնտեսական աշխատանքը: Բրիգադները կցված չեն յեղել վորոշ հողամասերի և նրանց յեկամուտը անմիջական կախում չի ունեցել իրենց մշակած հողամասի տված բերքի չափից: Այստեղից էլ ուժեղացել է դիմազրկությունը, անպատասխանատվությունը բամբակի մշակության պրոցեսների համար: Հենց այդ է բամբակի պլանների թերակատարման ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌԸ:

3. ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ ՏԻՐԱՊԵՏԵԼ Է ԴԵԶՈՐԻԵՆՏԱՑԻԱՆ

Բամբակի ցանքերի տարածությունները բաշխվել են առանձին կոլխոզների, ինչպես նաև առանձին բամբակացանների միջև սխալ: Հաշվի չեն առնվել տեղերի հողային և բնական պայմանները, ինչպես նաև հաճախ մոռացության են տրվել կոլխոզների իրական հնարավորությունները: Կան բազմաթիվ դեպքեր, յերբ մեկ աշխատավոր ձեռքին ընկնում է 2-2,5 հեկտար ցանք (Շխլյար, Խալիսա), այն ժամանակ յերբ դրան զուգընթաց մի շարք կոլխոզներ չեն ստացել լրիվ բեռնվածություն, կատարել են շատ ավելի պակաս ցանք, քան կարող եյին:

Տերիտորիայի կազմակերպման սեկտորը չի տարել և այժմ էլ չի տանում խորացրած հողաշինարարական աշխատանք, վորի հետևանքով լրիվ դեզորիենտացիայի յե յենթարկում տեղի ագրոպերսոնալին հողերը ճանաչելու խնդրում:

4. ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՅԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՌԱՑԻՈՆԱԼ ՉԵՆ ՈԳՏԱԳՈՐԾՎԵԼ

Գյուղ մեքենաները և գործիքները ոգտագործվել են, անշնորհք, վոչ լրիվ: Հաճախակի կոտրվածքներ ստանալու և ռեմոնտի համարյա լրիվ բացակայության պայմաններում, մեքենաների և գործիքների մեծ մասը շատ արագ դուրս է յեկել գործածությունից, վոր և պակաս դեր չի խաղացել աշխատանքների ուշացման, ապա և բամբակի վեգետացիայի հետաձգման խնդրում:

Յեթե այս ամենի վրա ավելացնենք նաև այն, վոր առանձին պատաշխատավորներ մշտական, մինչև վեգետացիայի վերջը ամրացված չեն յեղել այս կամ այն գյուղին, վորով բացակայել է կենդանի ղեկավարությունը շրջանի կողմից, ապա պարզ կլինի այն ինքնահոսի և դիմազրկության պատկերը, վորում ընթացել են բամբակի վերաբերյալ բոլոր աշխատանքները, սկսած վաղ գարնանից մինչև ուշ աշուն:

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1. ՎԱՏՈՐԱԿ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏ ՀԵՐԿ

Վեդու շրջանի հողերի զգալի մասը ստրուկտուրան կորցրած, փոշիացած է: Այդ հողերը վատ թափանցիկ են ջրի և ոդի նկատմամբ: Նրանց ջրունակությունը ևս մեծ չէ՝ պակաս որգանական նյութեր պարունակելու պատճառով: Նման հողերում աշնան վարն ունենում է վճռական նշանակություն բերքի բարձրացման խնդրում, սակայն աշնան վարի տոկոսը մինչև 25/12 1930 թ. կազմել է ընդհանուր ցանքի 32,6 տոկոսը: Նախատեսված 845 հեկտարի փոխարեն, կոլխոզներում աշնան վար կատարված է յեղել 112 հեկտար, անհատ տնտեսություններում 520,5 հեկտար: Ավելորդ չի նշել նաև այն, վոր 112 հեկտարը վարված է յեղել արորով:

Թե աշնան և թե գարնան վարի վորակը յեղել է շատ վատ: Դա ունեցել է մի շարք պատճառներ, վորոնցից գլխավորները հետևյալներն են՝ տրակտորիստների անփորձ լինելը, նրանց անփույթ վերաբերմունքը դեպի կատարած աշխատանքը, գութանների ղանակների հին և մաշված լինելը, փորձոնների պակաս հզորությունը (ուժը) շրջանի հողերի համար, նրանց հնամաշ լինել:

Տրակտորները՝ վարելիս պտույտների ժամանակ մեծ տարածություններ թողել են անմշակ, չվարված, վորի հետևանքով պակասել է վարի փաստացի տարածությունը: Բացի արտերի յերկու ծայրերից, չվարած տարածություններ մնացել են նաև արտերի մյուս մասերում: Կոլխոզնիկները պատմում եյին, վոր տրակտորի վարից հետո հաճախ նախկին կուլտուրայից մնացած բույսերի ցողունները չերտերում մնում եյին կանգնած ակոսներին զուգահեռ: Տրակտորիստների անփորձության և անփութության հետևանքով ակոսները յեղել են կամ լայն և

ապը, կամ խոր և նեղ ժապավեններով: Նման պայմաններում հողը հաճախ չուռ չի յեկել և վարը ավել է վատ հետևանքներ: Համեմատաբար բավարար վար ստացվել է այն դեպքում, յերբ վարը կատարել են իրենք բամբակացանները: Յեթե այս բոլորի վրա ավելացնենք նաև այն, վոր վարը կատարվել է շատ հաճախ անձրևային յեղանակներին և ցեխ պայմաններում, ապա պարզ կլինի այն, թե ինչո՞ւ ցանքից մի քանի որ հետո արտերը արագ ծածկվել են մոլախոտերով, ինչու ստացվել է պինդ կեղև, վորի հետևանքով ծիլերը չեն կարողացել դուրս գալ հողից, թե ինչու հողերը շատ արագ կորցրել են իրենց մեջ յեղած խոնավությունը, չորացել են մինչև խոր շերտերը և կարիք է զգացվել առաջին վեգետացիոն ջուրը սովորականից 10—15 որով շուտ կատարել:

Սակայն ամենից վատ վար կատարվել է գարնանը, այն ժամանակ, յերբ ոգնության են յեկել լեռնային շրջաններից յեզան կոլոններ: Նրանք աշխատել են շտապ, անփույթ, վոչ մի ուշադրություն չեն դարձրել վարի վորակի վրա: Ամբողջ ուշադրությունը կենտրոնացած է յեղել վարի միայն քանակի վրա: Դրանց աշխատանքի վրա չի յեղել վոչ մի հսկողություն, տիրել է դիմազրկություն բառի ամենալայն իմաստով:

Վարի ժամանակ հաշվի չեն առնվել նաև հողերի և բնա-պատմական պայմանների առանձնահատկությունները: Բոլոր հողերում անխտիր վարը կատարել են նույն խորությամբ և ստանդարտ ձևով:

2· ԱՐԱԹԸ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՍԽԱԼ

Աշնան արաթը շրջանում կատարվել է միանգամայն սխալ: Արաթը կատարվել է բոլոր հողերում, նույնիսկ, ճահճացած հողերում: Հողի գրությունը և խոնավության աստիճանը հաշվի չի առնված:

Արաթ կատարելու համար աշնանը արտը վարել և մարգոցով սովորական մարգեր են շինել: Դրանից հետո ջուրը բաց է թողնվել այդ մարգերով 10—15 որ անընդհատ, ճիշտ այնպես, ինչպես կատարվում է շալթուկի ջուրը: Ակոսներով արաթը շրջանում բացառիկ յերևույթ է: Դժվար չի պատկերացնել նման արաթի հետևանքները: Գարնանը մինչև ցանք կատարելը այդ հողերը պնդացել, չորացել են և կարիք է զգացվել կատարել նոր գարնան արաթ: Սակայն տարբերությունը աշնանից արաթ արած և արաթ չկատարած արտերի միջև յեղել է այն, վոր արաթ արած արտերում վարը յեղել է վատ վորակի և կոշտոտ, իսկ արաթ չարած արտերը ավել են բավարար վար:

Գտնում ենք, վոր շրջանում աշնան արաթ կատարել ստանդարտ ձևով չի կարելի: Ամեն անգամ հաշվի պիտի առնել հողերի առանձնահատկությունները, արաթ կատարել աշնանից այն հողերում, վորոնք ունեն միջին ջրաթափանցիկություն և լավ արտահայտված ջրունակություն: Աշնան արաթ բոլորովին չկատարել ծանր խոնավ և ճահճացած հողերում: Արաթ կատարել միայն ակոսներով, ջրի հոսանքը պիտի լինի թույլ և դանդաղ: Յեթե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր շրջանում վաղուց ի վեր ընդունված է արաթ և բոլոր ցանքերը կատարվում են գարնան արաթից հետո միայն, ապա աշնան արաթի խնդիրը այս շրջանի համար կարոտ է վերանայման:

3· ՑԱՆՔԸ

Թե շարքացանը և թե բնացանքը (վորը կատարվել է ձեռքով), մեծ մասամբ կատարվել են անձրևային ամպամած յեղանակներին և ցեխ հողում: Շարքացանների խուփիկները շատ հաճախ լցվել են ցեխով, սերմերը չեն թափվել և տեղի յե ունեցել տարածության կորուստ: Պակաս չեն յեղել դեպքերը, յերբ սերմերը նույն պատճառով թափվել են հողի յերեսը, և ստիպված են յեղել ծածկել նրանց վոտքերով:

Շարքերը յեղել են ծուռ ու մուռ, հաճախ անցել են մեկը մյուսի վրա, նամանավանդ յերբ ցանքը կատարվել է գիշերները: Սրա հետևանքով խանգարվել է ցանքերի մեքենայական մշակումը: Ցանք կատարվել է նաև չութի հետևից, ուստի սերմերը ցանվել են խոր և չեն կարողացել դուրս գալ հողից: Հաճախ սերմ ցանվել է նաև չոր կամ արդեն ծլած վիճակում: Նման ցանքերից արդյունք չի ստացվել և համարյա միշտ ստիպված են յեղել 2–3–4 անգամ և միշտ անհաջող ցանք կատարել: Այսպիսի ցանքերում ծիլերն յերևացել են դանդաղ, նայած ցանքի խորության, տարբեր ժամանակներում, անհավասար, իսկ այս ամենը չէր կարող չանդրադառնալ բույսերի վեգետացիոն շրջանի վրա, վորը հետաձգվել է, և մինչև աշնանային սառնամանիքները կնգուղների զգալի մասը մնացել է խակ:

Շրջանում ցանքն սկսվել է ապրիլի յերկրորդ կեսից և վերջացել է հունիսի առաջին կեսում: Կրկնացանքը շարունակվել է մինչև հունիսի վերջին հնգօրյակը, բայց կրկնացանի անվան տակ այդ ժամանակ կատարվել է նաև ցանք:

Միջշարքային տարածությունները համարյա ամենուրեք հավասար են յեղել 70—80 սմ. դա ստանդարտային է: Սրա պատճառով սակավ բերքատվություն ունեցող և աղքատ հողերում բույսերը մինչև վերջն էլ չեն զարգացել այն չափով, վորպեսզի իրար կպչեն և ծածկեն հողի մակերեսը. դրա հետևանքով հողը մնացել է բաց, յենթակա յե յեղել անձրևների հարվածների մեքենայական ազդեցության. արեգակի կիզիչ ճառագայթների ազդեցության տակ շատ շուտ չորացել է և ջուրը կատարվել է 8-10-12 անգամ նույնիսկ:

Հարուստ հողերում ստացվել է դրան ուղիղ հակառակ պատկեր, այստեղ ցանքերը տուժել են խտության պատճառով: Բույսերի մեջ յեղած տարածությունները վորոշել հնարավոր չեղավ, վորովհետև ընդհանրապես նոսրացում, իբրև պարտադիր օպերացիա, չի կատարվել:

Գտնում ենք, վոր բամբակի ցանք պիտի կատարել միայն այն ժամանակ, յերբ հողի ջերմությունը 13 աստիճանից 8-ից պակաս չէ: Անձրևային յեղանակներին և ցեխ հողում ցանք չպիտի կատարել: Ջութակոսներում ցանք կատարելը համարել անթույլատրելի, վորովհետև սերմերը շատ խոր կընկնեն անպայման, թեթև հողերում ցանքի խորությունը կատարել 5–7 սմ., ծանր հողերում 3–5 սմ. ընդհանրապես շրջանում ցանքն սկսել ապրիլի 2-րդ կեսից և վերջացնել մայիսի 2-րդ կեսին: Միջշարքային տարածություններն աղքատ հողերում վերցնել 60–70 սմ. և ուժեղ հողերում 70–90 սմ.:

Ուժեղացնել ղեկավարությունը ագրո-պերսոնալի կողմից, սակայն հաշվի առնել նաև բամբակացանների փորձը: Կատարված վարի և ցան-

քի պատասխանատվությունը դնել իրենց—բամբակացանների և տվյալ գյուղին կցված ագրոնոմի և պատասխանատու ընկերոջ վրա։

Ցանքի ժամանակ հաշվի առնել հողի առանձնահատկությունները և խուսափել ստանդարտ ձևի ցանքից։

Կրկնացանն սկսել ցանքից 10–15 օր հետո։ Կրկնացանքի դեպքում հողը վարել 10–12 սմ. և ցանքն կատարել 4–6 սմ. խորությամբ։ Հունիսի առաջին կեսից ուշ կրկնացան կատարել։

4. ՄՈԼԱԽՈՏՆ Ե ՏԻՐԱՊԵՏԵԼ

Առաջին քաղհանը բոլոր գյուղերում կատարվել է մեծ ուշացումներով և սկսվել է այն ժամանակ, յերբ վերջացած է յեղել ցանքը և կրկնացանը և ամբողջ բամբակը մեծապես ծածկված է յեղել մոլախոտերով։ Մոլախոտերն առանձնապես զարգացած են յեղել աշնանից արաթ կատարած արտերում, վորովհետև համեմատաբար ձմեռային բարենպաստ պայմանները նպաստել են կոնդեջավորների և կոճղարմատավորների զարգացման։ Բացի այդ, գարնանը հաճախ աշնան արաթ արած արտերում կանոնավոր կրկնահերկի փոխարեն բավականացել են միայն թեթև փխրեցում կատարելով, իսկ այդ ձևով կոճղարմատավորների դեմ պայքարել չի կարելի։ Առաջին քաղհանի ժամանակ վոչ մի տեղ նոսրացում չի կատարվել։ Յերկրորդ քաղհանը և նոսրացումը նույնպես կատարվել են մեծ ուշացումներով։ Իսկական նոսրացում անցել են 3-րդ քաղհանի ժամանակ, յերբ բույսերը գտնվելիս են յեղել ծաղկման լրիվ շրջանում. այդ ժամանակ շատ դեպքերում բամբակացանները հրաժարվել են նոսրացում կատարելուց և դիտել են նոսրացումը իբրև անօգուտ և նույնիսկ վտանգավոր գործողություն։ Դրա շուրջը չի տարվել վոչ մի ագրո-մասսայական աշխատանք, վորի հետևանքով բոլոր կարևոր բամբակացան գյուղերում նոսրացման գործը մատնվել է բացարձակ պրովալի։ Մինչև այժմ էլ ցանքերում մեկ բնից դուրս են, առողջ, ծանրաբեռնված են մեծ քանակի յերկարացած են և իրենց վրա կրում են էթիոլացման բոլոր բացասական հետևանքները։ Սրանց վրա կան մի քանի նվազ, մանր և խակ կնգուղներ, այն ինչ նույն արտում ուր կատարվել է նորմալ նոսրացում, թփերն ուժեղ են, առողջ, ծանրաբեռնված են մեծ քանակի կնգուղներով, վորոնց մեծ մասն արդեն հավաքված է։ Համարյա բոլոր դեպքերում յերբ քաղհանը և նոսրացումը կատարվել է նորմալ, բերքը ևս յեղել է բարձր և մոտ պլանին։

Բուկը լցնելը բացակայել է բոլորովին։ Շրջանում աշխատանքների գերագույն մասը կատարվել է ձեռքով։ Կուլտիվացիայից աշխատել են խուսափել։ Կոլխոզներում քաղհանից և ջրից հետո քեշը գալու ժամանակ կատարվել է փխրեցում կուլտիվատորի, իսկ անհատական սեկտորում թաքուչակի միջոցով, սակայն այս միջոցառումը կրել է վոչ սիստեմատիկ բնույթ և չի գործադրվել իբրև անհրաժեշտ ոպերացիա։ Դրա հետևանքով մոլախոտերը ջրելուց հետո զարգացել են նորից մի քանի օրից հետո և ցանքերը համարյա միշտ ծածկված են յեղել մոլախոտերով (առանձնապես կոճղարմատավորներով)։ Բացի այդ, հողը շատ արագ կորցրել է յուր մեջ յեղած խոնավությունը և ստիպված են յեղել ջուրը կատարել հաճախակի։

Անհրաժեշտ է առաջին քաղհանը կատարել անմիջապես մոլախոտերի յերևալու ժամանակ և այդ բանը յերբեք չկապել ցանքի և կրկնացանի վերջանալու հետ։ Գարնան արաթը կատարել անպայմանորեն կանոնավոր վարից հետո և վոչ մի դեպքում չբավականանալ միայն փխրացմամբ։ Մասնակի նոսրացումն սկսել առաջին քաղհանի, գլխավոր նոսրացումը 2-րդ քաղհանի ժամանակ, իսկ 3-րդ քաղհանի ժամանակ կատարել վերջնական նոսրացումը։ Յերկրորդ նոսրացման ժամանակ մեկ բնում թողնել 2-բույսից վոչ ավել։ Աղքատ հողերում բների մեջ յեղած տարածությունը թողնել 15–20 սմ. իսկ բերրի հողերում 20–25 սմ.։ Ջրելուց հետո կուլտիվացիա կատարել անպայմանորեն, իսկ յեթե դա հնարավոր չէ, ապա քաղհանը կատարել ջրելուց հետո և վոչ թե ջրելուց առաջ։ Շրջանի ծածր գյուղերում բուկ լցնելը կարող է տալ դրական արդյունքներ, ուստի յեկող տարվանից բուկ լցնի աշխատանքներ կատարել հետևյալ գյուղերում՝ Ալի-Մամեդ, Ճխլար, Բուջուկ-Վեդի Շիդլու, Սմո, Ավշար, Խալիսա, Դավալու։

5. ՋՈՒՐԸ

Ջրի նորմաները և խալական թիվը վորոշ չի։ Ջուրը կատարվել է 3-ից մինչև 12 անգամ։ Վերջին ջուրը տրվել է սեպտեմբերի 15-ին։ Այս հանգամանքն ունեցել է ուժեղ բացասական էֆֆեկտ, վորովհետև յերկարացրել է վեգետացիան։ Վորոշ տեղերում վերջին ջուրը տրվել է այն ժամանակ, յերբ կնգուղներն արդեն բացված են յեղել, նորմաները և ջրի սխեմաները չեն համաձայնեցվել բամբակի վեգետացիոն փազաներին։ Անհրաժեշտ է ջրի նորմաները և սխեմաները համաձայնեցնել նախ վեգետացիոն փազաներին և ապա միշտ հաշվի առնել հողային պայմանները։ Ստանդարտ ձևով բոլոր հողերում ջուր կատարելուց պետք է հրաժարվել անպայմանորեն։ Վերջին ջուրը կատարել բամբակի առաջին կնգուղների հասունության նախօրյակին ծանր և խոնավ հողերում։ Ջրի սխեմաները կանոնավորելու դեպքում վեգետացիան 10–15 օրով հնարավոր կլիներ կարճացնել, մի հանգամանք, վոր այս տարի կարող էր ունենալ վճռական նշանակություն։

6. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Պարարտացման ժամանակ կատարվել են կոպիտ սխալներ։ Նախ՝ հողի յերեսը ցաք է տրված սուլֆատ ամմոնիում, ապա կատարված է յեղել 1-ին խոր վարը, հետո արաթը, նորից՝ վարը, փոցխը և ցանքը։ Նման պարարտացումը թյուրիմացության արդյունք կարելի յէ համարել, սակայն զարմանալին այն է, վոր տեղի ագրո-պերսոնալը գտել է, վոր այդ ձևը ճիշտ է։ Պարարտացում կատարվել է անխտիր բոլոր հողերում։ Անհրաժեշտ է հանքային պարարտանյութերը մտցնել արդեն վարած հողի մեջ ցանքից 2–3 օր առաջ, փոցխել մեկ անգամ «զիգ-զագ» փոցխով և հետո նոր անցնել մարգոցելուն և ցանքին։ Պարարտանյութը տալ լավ մանրացնելուց հետո և ամեն անգամ հաշվի առնել հողերի առանձնահատկությունները։

ՈԴԵՐԵՎՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գարնանը տեղացել են հաճախակի հորդ անձրևներ, ոդի ջերմությունը յեղել է նորմայից պակաս, ամպամածությունն կրկնվել է հաճախ: Այս ամենը վեգետացիան ուշացրել է 10–20 օրով: Առաջին ցրտահարը շրջանում յեղել է հոկտեմբերի 15-ին, վորը յեզակի դեպք չի շրջանի համար;

Գտնում ենք, վոր չնայած այդ բոլորին, յեթե յեղած մեքենաները և գործիքները ռացիոնալ ոգտագործվեյին, աշխատանքներն ավելի հըմուտ կազմակերպվեյին հնարավոր եր վարը և ցանքը վերջացնել կրճատված ժամանակամիջոցներում և վեգետացիան յերկարացնել 10–15 օրով: Բացի այդ յեթե ցանքը կատարվեր ճիշտ և ծիլերը յերևային միասին և արագ, քաղհանը, ջուրը, նոսրացումը և ընդհանրապես խնամքը կատարվեր ճիշտ և ժամանակին, ապա բամբակը, մինչև հոկտեմբերի 15-ը կարող կլիներ հասունանալ և բացվել այն չափով, վոր նրա բերքը նորմալ բերքից շատ քիչ կտարբերվեր: Այդ տեսակետից ոդերևույթաբանական անպաստ պայմանները չեյին կարող վճռական դեր խաղալ բամբակի բերքն իջեցնելու գործում:

Բամբակի ցած բերքատվության հիմնական պատճառը աշխատանքի վատ կազմակերպումն է կոլխոզներում վորի հետևանքով վատ է կատարվել բամբակի մշակության բոլոր պրոցեսները:

ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏԻ ԱՅՍ ՏԱՐՎԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. ՎԵԶԻՐՈՎ

ՊԱՅՔԱՐԸ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ—ՊԱՅՔԱՐ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ

1932 թվի գարունը նոր ետապ պիտի դառնա Անդրկովկասի բամբակային տնտեսության վերելքի համար, սոցիալիստական ուղիով, սկիզբը պիտի լինի Անդրկովկասը ԽՍՀՄ-ի բամբակային յերկրորդ հզոր բազան դարձնելու գործում:

Չափազանց պատասխանատու յեն այն խնդիրները, վորոնք դըրված են 5-ամյակի չորրորդ՝ յեզրափակիչ տարվա բամբակային կամպանիայի առաջ:

Համկոմկուսի կենտկոմը 1931 թ. հոկտ. 31-ի վորոշման մեջ ընդգծել է, վոր «Անդրկովկասյան, մանավանդ Ադրբեջանի, կուսկազմակերպությունները իրենց գլխավոր ուշադրությունը պիտի տարածեն բամբակամշակության վրա, աշխատելով վոչ միայն ընդարձակել բամբակի ցանքերի տարածությունը այլև վճռականապես բարելավելով մշակման վորակը, բարելավված սերմեր գործադրելով, ժամանակին կատարելով ցանքը, մշակությունն ու բերքահավաքը, բարձրացնելով բերքատվությունը բամբակամշակության բոլոր աշխատանքներում յելնելով այն խնդրից, վոր յերկրորդ հնգամյակում Անդրկովկասը պիտի դառնա ԽՍՀՄ-ի հզոր բամբակացան բազան»:

Անդրժողկոմխորհը հաստատել է Անդրհողժողկոմատի ճշտած և ԽՍՀՄ Հողժողկոմատի հետ համաձայնեցրած բամբակային առաջադրանքները 1932 թվի համար, վորով նախատեսնվում է ԱՖԽՍՀ ցանել 259.700 հեկտար բամբակ (Ադր. ԽՍՀ—208.200 հեկտ.,— ՀՍԽՀ—29.000 և ՎՍԽՀ—22.500 հեկտ.), վորից 30.000 խորհտնտեսություններում, բացի անջրդի բամբակից:

Բամբակացանի այս պլանը մենք պարտավոր ենք վոչ միայն կատարել, այլև պիտի աշխատենք գերակատարել:

Անցյալ բամբակային կամպանիան ապացուցեց, վոր 1931 թվի գարնան բամբակացանի պլանը միանգամայն իրական եր և համարյա բոլոր շրջանները, չնչին բացառությամբ, կարողացան կատարել իրենց տրված բամբակացանի առաջադրանքները: Սակայն բամբակի բերքահավաքի աշխատանքներում շրջաններից շատերում հանդես բերվեց մի շարք սխալներ ու թերություններ: Միայն Ղասում-Իսմայիլովի և Ղազախի, Շամխորի ու Գյանջայի շրջաններն են, վոր որինակ են հանդիսանում, թե շնորհալի ղեկավարություն և բամբակի համար բոլշևիկյան պայքար կազմակերպելու դեպքում ինչպիսի խոշոր նվաճումների կարելի յե հասնել վոչ միայն քանակի, այլև վորակի տեսակետից:

Հաշվի առնելով այդ առաջավորների նվաճումներն ու յետ մնացողների սխալները՝ անհրաժեշտ է անմիջապես բոլոր ուժերը կենտրոնացնել 1932 թվի բամբակային պլանների լուրջ ու հոգատար նախապատրաստման գործի վրա:

Սակայն բամբակացանի համար կատարած նախապատրաստական աշխատանքները այնքան անբավարար են, վոր խոշոր անհանգստություններ են առաջացնում:

Մինչև այժմ ընկ. Ստալինի վեց ցուցումները լիովին չեն ծավալված խորհտնտեսություններում, ՄՏ կայաններում ու կոլտնտեսություններում, մինչդեռ այդ վեց ցուցումները մեր ներկա հաղթանակների բանալին են հանդիսանում: Առանց այդ բանը հաստատապես յուրացնելու չի կարելի բոլշևիկորեն պայքարել աշխատանքի նոր մեթոդների համար, չի կարելի պայքարել այն պատասխանատու խնդրի լուծման համար, վոր դրել է մեր առաջ Համ. Կ.(բ)Կ. Կենտկոմը Անդրկովկասի ԽՍՀՄ-ի բամբակային յերկրորդ հզոր բազան դարձնելու մասին:

Ստիպելով կուլակին, վոր անպայմանորեն ու ժամանակին կատարի կայուն առաջադրանքները, ուժեղացնելով ճնշումը կուլակի վրա, մերկացնելով նրա հակախորհրդային ագիտացիան՝ անհրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել պայքարը մասսայական աշխատանքը թերագնահատելու դեմ և կուլակային տնտեսություններին ամեն տեսակի զիջումներ անելու դեմ, վորոնք տեղի յեն ունեցել մի շարք բամբակացան շրջաններում:

Պետք է վճռական հարված տալ բամբակի մթերման գործում վարչարարական փորձեր անելուն, վորոնք դիպչում են միջակին, ինչպես այդ արվել է որինակ՝ Վեդիի շրջանում, վորտեղ մի քանի միջակ տնտեսությունների տուգանել են 200–300-ական ռուբլով պլանը չկատարելու համար:

Բամբակային կամպանիան ամբողջապես կատարվում է դասակարգային սուր պայքարի պայմաններում: Կուլակն ամեն կերպ աշխատում է չկատարել բամբակի կայուն առաջադրանքը, ձգտելով տապալել բամբակի բոլշևիկյան բերքահավաքը, չարամտորեն թերակատարում է իր առաջադրանքը: Կուլակային դիմադրությունը դե՛ռ է խորտակվելի: Պայքար բամբակի համար—պայքար է կուսակցության գլխավոր գծի համար: Բամբակի համար մղվող պայքարում կարելի յե հաջողությունների հասնել յերկու ֆրոնտում անհաշտ պայքար մղելու հիման վրա, պայքարելով աջ ոպորտունիզմի՝ վորպես գլխավոր վտանգի դեմ, «ձախ» խոտորումների ու նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ:

Չնչին բացառությամբ, մեր շրջաններում չքավորական խմբակները թեև կազմակերպված են, սակայն թույլ են աշխատում: Մինչդեռ այդ խնդրի նկատմամբ մենք ունենք կուսակցության վորոշակի ցուցումները: Ահա թե ինչ վորոշեց 16-րդ կուսհամագումարն այդ մասին: «Կոլեկտիվ տնտեսությունների սկզբնական ձևերի մեջ պետք է ուժեղացվի չքավորական խմբակների աշխատանքը, քանի վոր միայն չքավորության վրա հենվելով կարելի յե ապահովել պարզ միավորների անցումը կոլեկտիվացման բարձր աստիճանի վրա: Կոլտնտեսությունների կուսկազմակերպությունները պետք ապահովեն չքավորական խմբակների աշխատանքի այնպիսի դրվածքը, վոր նրանք վոչ միայն պաշտպանեն չքավորության անմիջական շահերը, այլ և աջակցեն բան-

վոր դասակարգի ու գյուղի չքավորության դաշինքի ամրապնդմանը միջակի հետ»:

Գոյություն ունեցող կոլտնտեսությունների ամրապնդման մասին խոսք անգամ լինել չի կարող, յեթե մենք այդ կոլտնտեսությունները չմաքրենք ոտար ու վնասակար տարրերից:

Գյուղխորհուրդները իրենց գյուղում պետք դառնան ամբողջ բամբակային կամպանյայի կազմակերպիչները: Բոլոր կոլտնտեսությունները պետք հավասարվեն լավագույն կոլտնտեսությանը:

Բամբակացանի նախապատրաստական աշխատանքներն արագացնելու համար առաջավոր շրջաններից բրիգադներ պետք ուղարկել հետամնաց շրջանները, վորպեսզի տարածեն ու ոգտագործեն առաջավոր շրջանների, գյուղերի ու կոլտնտեսությունների փորձը:

Կուսակցությունը մեր առաջ պատասխանատու խնդիր է դրել — վոչ միայն ցանքերի տարածությունն ընդարձակել, այլ և վճռականապես բարելավել մշակման վորակը և մի շարք միջոցներ ձեռք առնել բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար:—Բոլոր կազմակերպությունները առանձնապես լուրջ ուշադրություն պետք դարձնեն այդ խնդրի վրա: ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների բոլոր դիրեկտորները, ագրոնոմներն ու բրիգադիրները խստորեն պետք հետևեն վարի վորակին, արաթի կատարմանը և գյուղմեքենաների ժամանակին նախապատրաստմանը:

Ջրային տնտեսության մարմիններն ու ՄՏ կայանները ամիջապես մարտական աշխատանքներ պետք կատարեն ջրանցքների, ջրհանների, փյահրիզների նորոգման աշխատանքները, վորպեսզի ապահովեն ցանքը ջրով: Ամեն կերպ պետք աշխատեն մեքենայացման յենթարկել ջրատնտեսական աշխատանքները և այժմ իսկ պետք կազմակերպեն հարվածային միամսյակ՝ այդ աշխատանքների կատարման համար:

Համկոմկուսի կենտկոմը կոլեկտիվացման հետագա տեմպերի ու կոլտնտեսությունների ամրապնդման խնդիրների մասին 1931 թվի ոգոստոսի 2-ի վորոշման մեջ հրահանգել է՝ «գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվների մեջ գրվելու հետագա տեմպերը» Անդրկովկասի բամբակացան շրջաններում «վերցնել այն հաշվով, վոր 1932 թվին հիմնականում ավարտվի կոլեկտիվացումը»:

Գլխավորելով կոլտնտեսական չքավոր ու միջակ մասսաների աճող ակտիվությունը, անհաշտ պայքարելով յերկու ֆրոնտում — ներկա շրջանում գլխավոր վտանգ հանդիսացող աջ ոպորտունիզմի և կուսակցության գծի «ձախ» աղավաղումների դեմ, խորտակելով կուլակության դիմադրությունը՝ շրջանային կուսակցական, խորհրդային ու կոլտնտեսական կազմակերպություններ կոլտնտեսություններն ու ՄՏ կայանները մարտական աշխատանք պետք ծավալեն բամբակացանի պլանների կատարման համար:

Այս խնդիրների իրագործման համար պետք պայքարել Համկոմկուսի կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների իրականացման նշանաբանով, անշեղորեն պայքարելով կոլտնտեսությունների կազմակերպչական, տնտեսական ու քաղաքական ամրապնդման համար:

1932 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

(ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԿԿ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ)

Համկոմկուսի կենտկոմը 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ ընդգծել է, վոր «Անդրկովկասյան, մանավանդ Ադրբեջանի, կուսկազմակերպությունները իրենց գլխավոր ուշադրությունը պիտի դարձնեն բամբակամշակության վրա, աշխատելով վոչ միայն ընդարձակել բամբակի ցանքերի տարածությունը, այլև վճռականապես բարելավելով մշակման վորակը, բարելավված սերմեր գործադրելով, ժամանակին կատարելով ցանքը, մշակությունն ու բերքահավաքը — բարձրացնելով բերքատվությունը. բամբակամշակության բոլոր աշխատանքներում ելնելով այն խնդրից, վոր յերկրորդ հնգամյակում Անդրկովկասը պիտի դառնա ԽՍՀՄ-ի հզոր բամբակային բազան»:

Այս խնդրի իրագործումը Հայաստանի կուսակցական, խորհրդային, տնտեսական, խորհտնտեսական, կոլտնտեսական կազմակերպություններից, ՄՏ կայաններից, արհմիութենական ու կոմյերիտական կազմակերպություններից պահանջում է ուժերի մաքսիմալ լարում, անպայմանորեն իրագործելու համար 1932 թվի բամբակամշակության պլանը:

ՀԿ (բ) կենտկոմը 1932 թվի բամբակային կամպանիայի համար հաստատում է հետևյալ հիմնական ցուցանիշները.

1. 1932 թվին բամբակի ցանքերի տարածությունը հասցնել 30.000 հեկտարի:

2. Յելնելով բամբակի բազմամյա բերքատվությունից և 1932 թվի ագրոձեռնարկումների պլանից — բամբակի միջին բերքատվությունը սահմանել հեկտարից 9,3 ցենտներ:

3. Բերքատվության բարձրացման միջոցառումները սահմանել հետևյալ չափերով.

ա) Վաղ գարնան վար անել 15.000 հեկտար տարածության վրա:

բ) Հանքային պարարտացում կատարել 23.000 հեկտարի վրա, հաշվելով նաև ընթացիկ տարում կատարած պարարտացումը:

գ) Ձմեռային և գարնանային արաթ կատարել 10.000 հեկտար տարածության վրա:

4. Տիթիլավոր բամբակի տարածություն սահմանել 1932 թվի համար 500 հեկտար (վորից 200 հեկտար Սարդարաբադի սովխոզում և 300 հեկտար կոլտնտեսություններում):

5. 1932 թվին բամբակի մշակության աշխատանքների մեքենայացման պլան սահմանել հետևյալ չափերով.

ա) բամբակի ցանքը 100 տոկոսով կատարել շարքացանով, վորից տրակտորային շարքացանով խորհտնտեսություններում 50 տոկոս, կոլ-

տնտեսություններում 25 տոկոս, իսկ մնացած տարածությունը ցանել ձիու շարքացանով.

բ) բամբակի ցանքերի մշակությունը տրակտորային քաշող ուժով կատարել խորհտնտեսություններում առնվազն 50 տոկոսով և գյուղացիական սեկտորում՝ 25 տոկոս.

գ) պարարտացման մեքենայացումը կատարել հատուկ ցանիչներով, 1932 թվին պարարտացվելիք տարածության առնվազն 50 տոկոսը.

դ) բամբակի բերքահավաքի մեքենայացումը, վորպես փորձ խորհտնտեսություններում կատարել 10 տոկոսով:

Կենտկոմը բոլոր կուսակցական, խորհրդային, կոլտնտեսական կազմակերպություններից պահանջում է վճռականապես վերակառուցել իրենց աշխատանքը և ուշադրության կենտրոն դարձնել վորակի համար մղվող պայքարի հարցերը, վճռական պայքար հայտարարել բերքատվության համար, ցանքերի տարածության ընդարձակման, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրապնդման և ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների աշխատանքների բարելավման հիման վրա:

1932 թվի բամբակացանի պլանների ռեալիզացիայի համար կենտկոմն առաջարկում է.

1. Հողժողկոմատը կոլտնտկենտրոնի հետ 3 օրվա ընթացքում պետք է սույն վորոշման հիման վրա բամբակամշակության կոնտրոլ թվերը մշակեն ըստ շրջանների և այդ թվերն ամիջապես հասցնել շրջաններին — քննության համար:

2. Բամբակային շրջանների կուսակցական կոմիտեները պետք է ՄՏ կայանների ագրո- հողամասերի գծով կոնֆերենցիաներ կազմակերպեն, նպատակ ունենալով ի մի ամփոփել ընթացիկ տարվա բամբակային կամպանիայի արդյունքները և միջոցներ մշակել բերքատվության բարձրացման և 1932 թվի բամբակային կամպանիային նախապատրաստվելու համար:

Հողժողկոմատը հունվար ամսվա ընթացքում պետք է հրավիրի հանրապետական բամբակային լայն խորհրդակցություն, նպատակ ունենալով ի մի ամփոփել ընթացիկ տարվա բամբակային կամպանիայի արդյունքները և քննության առնել 32 թվի պլանները:

3. Հողժողկոմատն ու կուսակցության շրջկոմները, համաձայն ցանքերի տարածության պլանների, պետք է ապահովեն լավագույն հողերը բամբակի տակ դնելու խնդիրը, հողերի ընտրության պատասխանատվությունը գցելով ՄՏ կայանների և հողբաժինների վրա:

Հողժողկոմատը պետք է համապատասխան հրահանգ տա շրջաններում, գյուղերում ու կոլտնտեսություններում այդ միջոցառումն իրագործելու համար:

4. Ցանքերի տարածության հաշվառման գործը լավագույն ձևով կազմակերպելու նպատակով անհրաժեշտ համարել ինստրումենտալ չափման լիակատար կիրառումը: Հողժողկոմատին առաջարկվում է յեղած փորձի հիման վրա, ժամանակին անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք կատարել չափման գործը կազմակերպելու և կիրառելու

ուղղությամբ, այդ գործին լայնորեն մասնակից անելով կոլտնտեսական ակտիվը

5․ Նպատակ ունենալով լիովին ապահովել մինչ ցանքի մշակության և ցանքի բարձր վորակը, Տրակտորկենտրոնին առաջարկվում է ապահովել ՄՏ կայաններում ուսերատիվ-որացույցային պլանների կազմումը վարի ու ցանքի կատարման համար, վճռականորեն վերացնելով արտադրական աշխատանքների բոլոր ողակներում գոյություն ունեցող դիմազրկությունը: Միջոցներ ձեռք առնել բամբակացան շրջանների կենդանի քաշող ուժի ճիշտ հաշվառման ու պլանային ոգտագործման համար:

6․ Մինչև վարն սկսելը Կենտկոմի վորոշման համաձայն կազմակերպել տրակտորիստների ու դեկվորների վերապատրաստման կուրսեր:

. 7․ Նկատի ունենալով գիշերային վարի բոլոր թերությունները հանձնարարել Հողժողկոմատին ու Տրակտորկենտրոնին մշակել գիշերային վարի հարցը, ամեն կերպ բարելավելով լուսավորությունը:

8․ Բամբակի բերքատվության բարձրացման վճռական պայմաններից մեկը համարել ցանքը ժամանակին կատարելը: Պարտավորեցնել Հողժողկոմատին և Տրակտորկենտրոնին, յելնելով ցանքի սահմանված ժամկետներից, յուրաքանչյուր շրջանին ու գյուղին որացույցային ժամկետներ տալ ցանքն սկսելու և ավարտելու մասին, վորի համապատասխան էլ բաշխել յեղած ինվենտարն ու քաշող ուժը:

Անպայմանորեն անհրաժեշտ համարել ցանքն առաջին հերթին կատարել այն հողերում, վոր հատկացված են «նավրոզկի» տեսակին, այն հաշվով, վոր այդ ցանքերը վերջանան վոչ ուշ մայիսի 5-ից:

9․ Առաջարկել Կոլտնտկենտրոնին ու Տրակտորկենտրոնին միջոցներ ձեռք առնել ցանողներ պատրաստելու կոլտնտեսականներից և մըշտական հսկողություն սահմանել ցանքի վորակի վրա:

10․ Պարտավորեցնել բամբակագործարանների դիրեկցիաներին լաբորատորային կոնտրոլով պարզել սերմացվի վորակը և ժամանակին միջոցներ ձեռք առնել 1932 թվի ցանքերի ․տարածությունը լավորակ սերմով ապահովելու համար:

11․ Առաջարկել Հողժողկոմատին ու Տրակտորկենտրոնին, յելնելով առանձին գյուղերի հողային ու այլ պայմաններից, փորձային հիմնարկությունների և ագրոպերսոնալի տվյալների հիման վրա դիֆերենցիացիայի յենթարկել բերքատվության բարձրացման միջոցառումները, մշակել հաշվառման գործի դրվածքը, ագրոկոմպլեկսի տված եֆեկտի հարցը, մասնավորապես բարելավել առանձին հանքային պարարտացումների եֆեկտավորությունը, ըստ առանձին հողերի և պարարտացման չափերն առանձին հողամասերում:

12․ Առաջարկել Հողժողկոմատին յերկու շաբաթվա ընթացքում հայերեն ու թուրքերեն լեզուներով հրատարակել հանրամատչելի բրոշյուրների մի սերիա բամբակի մշակության խնդիրների շուրջը:

13․ Առաջարկել Հողժողկոմատին ու Կոլտնտկենտրոնին միջոցներ ձեռք առնել կոլտնտեսություններում շիթիլավոր բամբակի պլանը լիովին իրականացնելու համար, ապահովելով առաջին հերթին ջուր տրամադրելը, միջշարային մշակության լիակատար մեքենայացումը և անհրաժեշտ քանակության ուժի լիակատար տրամադրումը:

Պարտավորեցնել ՈԲՎ-ին շիթիլավոր բամբակի ցանքերը վերցնել
իր հատուկ հսկողության տակ:
14․ Անդրտրակտորկենտրոնի Հայաստանի բաժանմունքին առաջարկել․
ա) Հողժողկոմատի ու կոլտնտկենտրոնի հետ միասին տասն որվա
ընթացքում մանրամասն պլան կազմել բամբակի մշակության մեքենա-
յացման նշված առաջադրանքները իրականացնելու համար․
բ) ապահովել գոյություն ունեցող ամբողջ տրակտորային պարկի
լիակատար պատրաստականությունը գարնանային դաշտային աշխա-
տանքների հենց սկզբին, վորի համար ժամանակին կատարել տրակ-
տորների ու կցվող ինվենտարի համապատասխան ու հոգատար նորո-
գումները՝ կենտկոմի վորոշման հիման վրա:
15․ Առաջարկել Տրակտորկենտրոնին ու ՄՏ կայաններին՝ ագրո-
նոմներին իրապես պատասխանատու դարձնել բերքատվության բար-
ձրացման համար, նրանցից յուրաքանչյուրին բամբակային կամպա-
նիայի սկզբից մինչև վերջը կցելով վորոշ հողամասերի, խստորեն սահ-
մանագծել նրանց իրավունքները ու պարտականությունները, տալով
նրանց գործունեության լայն նախաձեռնություն:
16․ Առաջարկել Հողժողկոմատին ու Տրակտորկենտրոնին ագրո-
պերսոնալի հոսունությունը վերացնելու և նրանց յերկար ժամանակով
վորոշ աշխատանքի կցելու նպատակով մշակել խրախուսանքի միջոցա-
ռումներ, վճռականորեն վերջ տալով նրանց հանախակի փոխադրու-
թյունից մի աշխատանքից մյուսը:
17․ Տրակտորկենտրոնին ու կոլտնտկենտրոնին առաջարկել—ան-
հրաժեշտ միջոցներ ձեռք առնել ՄՏ կայաններում արտադրական խոր-
հրդակցությունների աշխատանքն անհրաժեշտ բարձրության վրա
դնելու և սոցմրցումն ու հարվածայնությունը ծավալելու ուղղու-
թյամբ, ինչպես ՄՏ կայանների ներսում, այնպես էլ կոլտնտեսություն-
ների միջև:
18․ Առաջարկել Հողժողկոմատին ու ՈԲՎ-ին—միջոցներ ձեռք առ-
նել պայքար կազմակերպելու վնասատուների և հիվանդությունների
դեմ, բամբակի ցանքի ամբողջ տարածության վրա:
ՈԲՎ-ի Հայաստանի բաժանմունքին պարտավորեցնել—ապահովել
անհրաժեշտ քանակով թույն և ապարատներ իր ժամանակին տեղերը
հասցնելու գործը, ինչպես և ժամանակին տեխպերսոնալի շտատ կազ-
մակերպելու աշխատանքը:
Առաջարկել կոլտնտկենտրոնին ապահովել կոլտնտեսությունների
կողմից անհրաժեշտ չափով ու առանց ընդհատումների բանվորական
ուժ տրամադրելու գործը, վնասատուների դեմ պայքարելու համար,
վորի համար աշխատանքային պլաններում պետք է համապատասխան
նարյադներ նախատեսել:
19․ Պարտավորեցնել ՈԲՎ-ին բամբակենու վնասատուների ու հի-
վանդությունների դեմ պայքարելու ուղղությամբ լայն չափով փորձա-
ցուցադրական աշխատանք դնել:
20․ Հաշվի առնելով այս տարվա մշակման կամպանիայի դասերն
ու թերությունները—առաջարկել Հողժողկոմատին, Կոլտնտկենտրոնին

ու Տրակտորկենտրոնին—սահմանել մշակման ժամկետներ և բոլոր կոլտնտեսություններում լայն կամպանիա ծավալել, նպատակ ունենալով վերացնել այդ ասպարեզում յեղած թերությունները, հսկողություն սահմանել վորակի և ժամկետներին կատարման գործի վրա:

21· Առաջարկել Մատծողկոմատին և Հայկոոպին—ստուգել բամբակացաններին մատակարարելու գործը, ճշել ապրանքներ ուղարկելու որացույցային պլանը, միջոցներ մշակել բամբակային շրջաններին ժամանակին ու առանց ընդհատումների արդյունաբերական ապրանք ու հաց մատակարարելու համար:

Առաջարկել Սայուզգյուղմեքենային միջոցներ ձեռք առնել կենտկոմի վորոշման համաձայն կերով ապահովելու բամբակացան շրջանների քաշող ուժը և կատարած աշխատանքի մասին հատուկ զեկուցում ներկայացնել կենտկոմին:

22· Բացառիկ տնտեսա-քաղաքական նշանակություն տալով բամբակային կամպանիային նախապատրաստվելու և այդ աշխատանքը կատարելու գործին, վորպես կոլտնտեսությունները կազմակերպչորեն-տնտեսապես ամրապնդելու, բամբակացան շրջաններում համատարած կոլեկտիվացումն ավարտելու և այդ հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու կարևորագույն ետապ, կենտկոմը պարտավորեցնում է կուսակցական, կոմյերիտական, խորհրդային, արհմիութենական և կոլտնտեսական կազմակերպություններին՝ առավելագույն ուշադրություն կենտրոնացնել և կոնկրետ աջակցություն ցույց տալ կոլտնտեսություններին տարեկան արտադրական պլանները կազմելու գործին, ինչպես և բամբակային կամպանիայի յուրաքանչյուր ետապի (հերկ, արաթ, ցանք, մշակություն, բերքահավաք) կոնկրետ պլանը կազմելու գործին, ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՊՐՈՑԵՍՆԵՐՈՒՄ ԸՆԿ· ՍՏԱԼԻՆԻ 6 ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎՐԱ, վճռականապես վերացնելով դիմազրկությունը՝ արտադրական բրիգադները կցելով առանձին հողամասերի, սկսած 32 թ· բամբակային կամպանիայի սկզբից մինչև վերջը, կոլտնտեսություններում կիրառելով տնտհաշվարկը, ամեն կերպ արմատավորելով գործարքը, պայքարելով հավասարության դեմ, ստեղծելով կոլտնտեսական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա և անողոք պայքար ծավալել կոլտնտեսություններում կուլակային ազդեցության բոլոր յերևույթների դեմ:

—

ՈԶԱՆՅԱՆ

ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՈՒՐ ԲՐԻԳԱԴՆԵՐ

Անցյալ տարվա բամբակի ցածր բերքատվության պատճառների մանրամասն ուսումնասիրությունից պարզվեց, որ դիմազրկությունը, վատ խնամքը, բամբակի մշակման բազմաթիվ այլ թերությունները հետևանք են գլխավորապես կոլտնտեսական աշխատանքի վատ, սխալ կազմակերպության:

Ճիշտ է, որ անցյալ տարի յել աշխատանքի կազմակերպության ձևերում գլխավոր տեղը գրավել է բրիգադը, սակայն բրիգադները կազմակերպվել են ընդհանրապես սխալ: Բրիգադները կազմվել են ոչ թե արտադրական նշանի, այլ հաճախ մեխանիկական բաժանմամբ, նրանց կազմը յեղել է հոսուն, բրիգադները կցված չեն յեղել վորոշ հողամասի, վոչ մի բրիգադ չի անցել տնտեսաշվարկի, *բերքի պակասության համար վոչ բրիգադիրը և վոչ բրիգադը պատասխանատու չեն յեղել. բրիգադները չեն ունեցել վորոշակի մշտական պարտականություններ, նարյադներ տրվել են խիստ կարճատև աշխատանքների համար, բրիգադների կազմում մեծ քանակությամբ թաքնված ավելորդ բանվորներ են պահվել, գործարքը կենսագործվել է մեխանիկորեն և փորձեր են յեղել անհատական գործարքի պրոգրեսիվ-պրեմիալ ձևերը կիրառել առանց այն բխեցնելու կոլտնտեսական արտադրության պայմաններից, մեխանիկորեն կոլտնտեսություն փոխադրելով արդյունաբերության մեջ կիրառվող անհատական գործարքի ձևերը և այլն:*

Այսպես օրինակ Ղուրդուղուլու, Շահրիարի, Գեչրլվի, Սարդարապատի և այլ կոլխոզներում, կոլխոզին տված բամբակի պլանի տարածությունը մեխանիկորեն բաժանելով մասերի (ընդհանրապես համասար մասերի), ըստ դրա յել բաժանել են աշխատող ձեռքերը, նշանակել բրիգադիր և դրանով բավականացել, յեթե սկզբում այդ բրիգադները կցվել են վորոշ հողամասի, հետագայում այդ կարգը խախտվել է, բրիգադները շրջվել են հողամասից-հողամաս: Այդպիսի սխալներ կան և այլ բազմաթիվ կոլտնտեսություններում: Այդպիսով կոլտնտեսական բրիգադի ամրապնդումը ուշադրության կենտրոնում չի յեղել:

Ահա ինչու այժմ «բրիգադը պետք է լինի հիմնական ողակը կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրապնդման համար ձեռք առնվող միջոցառումների մեջ» *(ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարի 4-ի վորոշումից), վորից պետք է ամուր կառչել կոլտնտեսական սիստեմի վողջ աշխատանքները հաջող առաջ մղելու համար:*

Գարնանացանի նախապատրաստության գործում ինչպես բոլոր կոլտնտեսություններում, նույնպես և բամբակացան կոլտնտեսություն-

ներում պետք է կիրառել ճիշտ կերպով Կենտկոմի վորոշումը, այն է՝ «կազմակերպել գյուղատնտեսական բրիգադներ, կոլտնտեսականների մշտական կազմով, այն հաշվով, վոր այդ բրիգադները վորպես կանոն, գյուղատնտեսական հիմնական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում կատարեն վորոշ հողամասերում: Կոլտնտեսությունն այդ բրիգադներին նրանց աշխատանքի ժամանակամիջոցին հատկացնում է անհրաժեշտ մեքենաներ, ինվենտար, լծկան, վորոնց դրության համար ամբողջովին պատասխանատու յե բրիգադը»:

Բրիգադների կազմակերպման խնդրում ղեկավարվելով Համկոմկուսի Կենտկոմի այդ դիրեկտիվով և հաշվի առնելով թամբակի կուլտուրայի առանձնահատկությունները մեզ մոտ, պետք է ձեռնարկել կոլտնտեսություններում բրիգադների կազմակերպմանը, աշխատանքի վերաբաշխմանը: Բրիգադները պետք է կազմակերպվեն արտադրական սկզբունքով: *Սակայն բրիգադների կազմակերպումը հեշտ գործ չէ և պահանջում է հաշվի առնել տեղական պայմանները, վորպեսզի ապահովվի դիմազրկության լիկվիդացիան, իսկ այդ նշանակում է, վոր կոլտնտեսական* բրիգադը պետք է կցվի վորոշ հողամասի և պատասխանատու լինի վոչ միայն այդ հողամասի ցանքի համար, այլև բարձր բերքատվության համար: *Հողամասի ցանքի մեծությունը պետք է վերցնել այնպես, վոր նրա վրա* աշխատող մշտական բրիգադն ունենա մշտական, լրիվ աշխատանքային ծանրաբեռնվածություն:

Կոլտնտեսականների մասնագիտացման համար չափազանց կարևոր է, վորպեսզի յուրաքանչյուր բրիգադ մեկ հիմնական կուլտուրայի մշակությամբ զբաղվի: Սակայն այն դաշտամասում, ուր թամբակից բացի այլ կուլտուրաներ ևս կան, կարելի յե բրիգադներից յուրաքանչյուրին մեկից ավելի կուլտուրա տալ, բայց այդ չպիտի մեխանիկորեն կատարել, այլ միայն բրիգադը աշխատանքով հագեցնելու համար, այնպես վոր բրիգադում ազատ բանվորական ուժ չմնա: Բացի դրանից, յերբեք չպիտի թույլ տալ, վոր վորևե բրիգադի մասը, ցրված հողաշերտեր տրվի մշակելու: *Բրիգադի կազմը պիտի լինի մշտական, ամբողջ տարվա համար, վորպեսզի բրիգադի կոլտնտեսականներն իրենց մշտապես պատասխանատու զգան մշակույթի բերքատվության համար, սակայն տեղական պայմաններից յելնելով, առանձին դեպքերում կարելի յե բրիգադը հողամասի կցել գյուղատնտեսական* աշխատանքի վորոշ ժամանակաշրջանի համար (*ցանք, քաղհան, չանաք*):

Կոլտնտեսության հողերը բրիգադային հողամասերի բաժանելուց հետո, անհրաժեշտ է ունենալ մշակված արտադրանքի նորմաներ, վորպեսզի հնարավոր լինի պարզել, թե տվյալ բրիգադի դաշտի համար քանի բանվոր է հարկավոր: Ուղղելով նորմավորման անցյալ տարվա սխալները, պիտի հիշել, վոր այդ նորմաները հիմնականում պետք է վերցվեն բարեխիղճ աշխատող, լավագույն կոլտնտեսականների աշխատանքի մասսայական փորձից: *Հողամասի վրա կատարելիք աշխատանքը հաշվելով, նորմաներով պիտի համալրել բրիգադներն ըստ աշխատանքային պահանջի, սակայն այնպես, վոր* վոչ մի իզուր թափառող, ավելորդ մարդ չմնա բրիգադում, վորպեսզի կոլխոզը հնարավորին չափ շատ արտագնացներ տա արդյունաբերությանը: *Բրիգադների թվական*

կազմը չպետք է անսահման իրար հավասար լինի, բացի այդ, մեր պայմաններում չպետք է վոչ շատ խոշոր (50-ից ավել) և վոչ էլ շատ փոքր բրիգադներ (25-ից փոքր) կազմել, առաջին դեպքում դժվարանում է բրիգադիրի գործը, նա չի կարող հսկել ու ղեկավարել մեծ թվով կոլտնտաշխատավորների, յերկրորդ դեպքում դժվարանում է արտադրական պրոցեսը, աշխատանքի մեխանիզացիան և բրիգադների ղեկավարումը կոլվարչության կողմից:

Բրիգադի կազմը լրացնելու համար, անհրաժեշտ քանակով կոլտնտեսականներ պիտի ընտրել, հաշվի առնելով նրանց վորակավորումը, ըստ հնարավորին յուրաքանչյուր բրիգադի կազմում ապահովելով թամբակի վարի, մարկսելու, ցանելու, քաղհանելու, նոսրացնելու, ջրելու և չանաքի տեխնիկային ծանոթ աշխատող ձեռներով: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել աշխատանքի (փունկցիաների) բաշխմանը բրիգադի ներսում, աշխատելով մաքսիմալ չափերով օգտագործել յուրաքանչյուրի մասնագիտությունը. այդ նպատակով հատուկ արտադրական խորհրդակցություններ պիտի հրավիրել: Բրիգադի կազմը պետք է կայուն լինի և ամեն կերպ պիտի խուսափել տեղափոխություններից:

Բրիգադին վորոշ հողամաս-ցանք պիտի տալ, վերացնելով հողի դիմազրկությունը. բրիգադը պետք է հողն օգտագործի ամենանպատակահարմար ձևով, պիտի հաշվի առնել հողակտորների առանձնահատկությունները, իմանալ վոր հողը ինչպես է շահագործվել մինչ այժմ, քանի տարի յե թամբակի տակ յեղել, ինչպիսի մշակում, ինչպիսի պարարտացում կամ վար է պահանջում: Բրիգադը, վորպես կանոն, հողամասին պիտի կցվի ամբողջ տարին (միայն առանձնահատուկ պայմանների դեպքում կարելի յե բացառություններ անել և բրիգադին աշխատանք տալ սեզոնով), պատասխանատու դարձնելով նրան վոչ միայն հողի մշակման, այլև հատկապես բերքատվության համար:

Բրիգադին պիտի տալ անհրաժեշտ ինվենտարը աշխատանքի համար պետք յեղած ժամանակամիջոցում օգտագործելու: Վարի, ցանքի ժամանակ բրիգադը պիտի նշանակի մաճկալներ, տրակտորին վառելիք, ջուր բերողներ, տրակտորիստներին ճաշ բերողներ և պիտի հսկի վարի ու կրկնավարի վորակի վրա (վարի վորոշ խորությունը, ցեխակտորները փխրացնելը և այլն ապահովելով):

Սրաթի, կուլտիվացիայի, քաղհանի, մարկսման և այլ աշխատանքների ժամանակ էլ բրիգադին պիտի տրվի անհրաժեշտ գործիքներ և ինվենտար՝ բահեր, կուլտիվատորներ, քաղհանիչներ, չարքաշաններ, չպաղաթ, ձիեր, յեզներ, լծասարք, վորոնց անվնաս պահպանման, խնամքի, կերակրման համար պատասխանատու յե բրիգադը: *Բրիգադի ներսում աշխատանքների բաժանում է կատարվում, բրիգադը խմբերի բաժանելով և նրանց հանձնելով աշխատանքի համար անհրաժեշտ ինվենտարը և լծկանները, վորոնց վիճակի համար անմիջականորեն պատասխանատու յեն այն կոլտնտեսականները, վորոնք աշխատում են այդ լծկաններով և ինվենտարով:*

Աշխատանքի բաժանումը, փունկցիաների, ինվենտարի բաշխումը կատարում է բրիգադիրը, վորն ինքը կոլտնտեսությունից ստանում է

առաջադրանք—նարյադ և հատուկ ցուցակով գործիքներ, մեքենաներ, լծկան և այլն:

Բրիգադին տված առաջադրանքի մեջ կոլվարչությունը պարտավոր է մատնանշել՝

1. Կատարելիք աշխատանքի քանակը (վարել-ցանել բամբակ այսքան հեկտար, մարկոսել, պարարտացնել, արատ անել, ջուր տալ, քաղհանել, կուլտիվացիա անել, նոսրացնել, չանաքել, տեղափոխել և այլն, առաջադրանքներ թվերով, քանակն ու որակը):

2. Աշխատանքի ամեն մի տեսակը սկսելու և ավարտելու ժամկետները:

3. Ագրո-արտադրական պահանջները և որակն ըստ աշխատանքի տեսակի (բամբակի հերկի, մարկոսման, ցանելու, պարարտացման, ջրելու, քաղհանելու, նոսրացման, չանաքի) և վերջին հաշվով սպասվող բերքի մոտավոր չափը:

4. Արտադրանքի նորմաներն աշխատանքի յուրաքանչյուր տեսակի համար (տրակտորիստի, մաճկալների, մարկոսողների, ջրողների, քաղհանողների, նոսրացնողների, չանաքողների նորմաները):

5. Արտադրական ամբողջ առաջադրանքն իրագործելու համար բրիգադի կատարելիք աշխատանքի յուրաքանչյուր տեսակի գնահատումն աշխօրերով և աշխօրերի ընդհանուր թիվը:

Թույլ չտալով բրիգադի անդամների միջև աշխօրերը հավասարապես բաժանելու որևէ փորձ, կոլտնտեսականի աշխատանքի գնահատությունը պետք է ավելանա կամ նվազի ոչ միայն իր աշխատանքի որակի ու քանակի համեմատ, այլև նայած ամբողջ բրիգադի աշխատանքի արդյունավետության, ըստ որում պահանջված քանակից ավել բամբակ հանձնելու դեպքում ավելացվելու յե բրիգադի աշխօրերի արժեքը և ընդհակառակը պակաս բերք տալու դեպքում աշխօրերի արժեքը նվազեցվելու յե:

Այսպիսով, աշխատանքի կազմակերպման կարևորագույն օղակը կոլտնտեսություններում բրիգադն է. ստեղծելով կայուն, մշտական արտադրական բրիգադներ, կցելով նրան հողամաս և ինվենտար, պատասխանատու դարձնելով բրիգադին գույքի պահպանման և բերքատվության համար, ճիշտ կիրառելով գործարքն ու աշխատանքի գնահատությունը, մենք կարող ենք բարձրացնել բամբակի մշակության որակն ու ապահովել բարձր բերքատվությունը:

Ագրոնոմ Գ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐԱԹԸ ՎՈՐՊԵՍ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Օր ավուր աճող և զարգացող սոցիալիստական գյուղատնտեսության առաջ ավելի քան հրամայական պահանջ է դրվում, տեխ. կուլտուրաների տարածությունը լայնացնելու հետ միասին՝ ուշադրության կենտրոնը դարձնել բերքատվության բարձրացման խնդիրները: Այս տեսակետից արաթը, վորպես բերքի բարձրացման միջոցառումներից մեկն ունի մեզ համար խոշոր նշանակություն: Մանավանդ յեթե նկատի ունենանք մեր ջրասակավ պայմանները ջրի ռացիոնալ ու խնայողաբար օգտագործման հարցը: Այս տեսակետից արաթը կլրացնի այն պակասը, վոր մենք ունենք ջրի խնդրում և կնպաստի բերքատվության բարձրացման գործին:

Գյուղատնտեսական բույսերն իրենց նորմալ զարգացման համար ջուր պահանջում են անընդհատ, իսկ մթնոլորտային տեղումները լինում են ընդհատումներով, վոչ միշտ: Սրա հետևանքով բույսերը շատ հաճախ չեն գտնում հողում անհրաժեշտ քանակությամբ խոնավություն, խանգարվում է նրանց զարգացման նորմալ ընթացքը և տեղի յե ունենում բերքի զգալի կորուստ: Ջրի պակասն առանձնապես մեծ վնասներ է պատճառում այն ժամանակ, յերբ դա տեղի յե ունենում գարնանացանների թփակալումից մինչև նրանց հասկակալումը: Այդ բանը մեզ մոտ տեղի յե ունենում մայիս— հունիս ամիսներին:

Այս դրությունից խուսափելու և բույսերի անընդհատ պահանջը բավարարելու համար մենք պետք է գործադրենք մեր տրամադրության տակ յեղած բոլոր միջոցները հողում ջուր ամբարելու, այն խնայողաբար ծախսելու և բույսերի տրամադրության տակ դնելու այն ժամանակ, յերբ նրանք զգում են դրա կարիքը:

Այդ դեպքում միայն բույսերի զարգացման մեջ տեղի չեն ունենում ընդհատումներ, նա աճում է զարգանում է անընդհատ և տալիս է բարձր բերք, ի հարկե, յերբ ջրի հետ միասին նա ստանում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ընդհանրապես ամեն մեկ բույսի զարգացման համար (լույս, ջերմություն, օդ, սննդանյութեր):

Ջրի դերն առանձնապես մեծ է տաք և ջրապակաս շրջաններում, ուր մթնոլորտային տեղումների պակասության, օդի ջերմաստիճանի բարձրության և նրա չորության հետևանքով գյուղատնտեսությամբ կարելի յե զբաղվել արհեստական վոռոգման միջոցով միայն:

Նման շրջաններ են նաև մեր բամբակագործական շրջանները, ուր ցանքերի լայնացման և բերքատվության բարձրացման ամենակարևոր պայմաններից մեկն էլ ջուրն է:

1932 թվին մենք ունենալու յենք 30.000 հեկտար բամբակ, վորը նախորոք պետք է ապահովված լինի անհրաժեշտ քանակությամբ ջրով: Այս նպատակին հասնելու համար մնացած բոլոր ձեռնարկումների հետ միասին շատ կարևոր է ոգտագործել նաև աշնան և վաղ գարնան ջրերը, վորոնք մեր պայմաններում համարյա բոլորովին չեն ոգտագործվում: Դրա համար անհրաժեշտ է կատարել արաթ, վորը հողերը վոռոգելու և ջուրը խնայողաբար ծախսելու շատ կարևոր յեղանակ է:

Այս յեղանակն ընդունված է յեղել և այժմ էլ կիրառվում է Փոքր Ասիայի բամբակացան շրջաններում, իսկ մեզ մոտ կիրառվում է Վեդի-Բասարի շրջանում: Գարնանը, բամբակի ցանքից առաջ:

ԻՆՉ Է ԱՐԱԹԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արաթը՝ դա հողին ջուր տալն է նախքան նրա մեջ ցանք կատարելը, վորով բացի հողում ջուր կուտակելուց հեշտացվում են մեր աշխատանքները ցանքից հետո և բարենպաստ պայմաններ են ստեղծվում բամբակի զարգացման համար: Արաթը լինում է յերկու տեսակի՝ աշնան և գարնան, վորոնց մասին կխոսենք առանձին-առանձին, վորովհետև նրանք եֆեկտի տեսակետից միատեսակ չեն:

ԱՇՆԱՆ ԱՐԱԹԸ

Աշնան արաթը կատարվում է սովորաբար վաղ գարնանից սկսած մինչև ուշ ձմեռ: Արաթը չի կարելի կատարել միայն սառած հողում, վորովհետև ջուրը սառած հողի մեջ թափանցել չի կարողանում: Յերբ արաթը կատարվում է աշնանացանների համար (մեր նախալեռնային և լեռնային շրջանների ջրովի մասերում), ապա դա պետք է կատարել այն հաշվով, վորպեսզի ցանքի ժամանակը չուշանա: Մոտավորապես ցանքից 10-15 որ առաջ կատարած արաթը հնարավորություն կտա մեզ ժամանակին կրկնահերկ և ցանք կատարելու:

Բամբակի համար կատարվող աշնան արաթը պետք է սկսել բամբակի վերջին բերքը հավաքելուց անմիջապես հետո և շարունակել մինչև հողի սառչելը:

Թե բամբակացան և թե մյուս շրջաններում ամռան վերջում սովորաբար հողերը գտնվում են աննպաստ պայմաններում, վորովհետև նրանց մեջ մշակվող կուլտուրական բույսերը մինչ այդ հողից խլած են լինում նրա մեջ յեղած ջուրը և սննդանյութերի զգալի մասը: Բացի դա հողը լինում է պնդացած, վորի հետևանքով պակասում է նաև նրա մեջ յեղած ոդի պաշարը:

Այս բոլորի հետևանքով թուլանում է հողում յեղած ոգտակար բակտերիաների աշխատանքը, պակասում է հողի հողմնահարությունը և ժամանակավորապես ընկնում է նրա բերրիությունը: Յերբ մշակվող բույսերի բերքահավաքից հետո անմիջապես չի կատարվում խոդանահերկ, ապա այս բոլոր բացերի վրա ավելանում է նաև հողի փոշիացում, վորը պատճառ է դառնում կեղև կապելուն և ունենում է մի շարք ուրիշ անցանկալի հետևանքներ:

Ահա այս բոլոր բացերն ուղղելու և հողում յեղած բակտերիաների աշխատանքի ոպտիմալ պայմաններ ստեղծելու համար, անհրաժեշտ է կատարել խոդանահերկ և ապա աշնան արաթ, վորը նախապատրաստում է հողը գարնան բամբակի ցանքի համար դաշտավարական շրջաններում և աշնան ու գարնան այլ կուլտուրաների համար նախալեռնային և լեռնային ջրովի մասերում:

Մեզ մոտ համարյա բոլոր շրջաններում, ուր մշակվում են կուլտուրական բույսեր, մենք զգում ենք ջրի մեծ կարիք: Արեգակի ուժեղ ջերմության և ոդի չորության պատճառով մենք մեր ցանքերը նայած բույսին ստիպված ենք լինում ջրել 2-ից մինչև 7-8 անգամ:

Պարզ է, վոր վոռոգելու համար ջրի նման հսկայական պահանջը մենք մեր տրամադրության տակ ունեցած ջրային ռեսուրսներով բավարարել չենք կարող, յեթե արաթը և մի շարք այլ ագրո-տեխնիկական պրիոմներ, վորոնք նպաստում են հողում ջուր ամբարելու մեզ ոգնության չգային: Դրանք մեղմացնելով մեր կարիքը ջրի նկատմամբ միաժամանակ հանդիսանում են կարևոր պայմաններ ցանքերի տարածությունների լայնացման և բերքի բարձրացման խնդրում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ԱՐԱԹԸ

Արաթ պետք է կատարել բոլոր տեսակի հողերում, բացի թեթև, թույլ հզորություն ունեցող և խոնավ ճահճոտ հողերից: Առաջին յերկու տեսակի հողերում արաթը յուր նպատակին չի հասնում այն պատճառով, վոր մինչև ցանքը նման հողերում ջուր պահել չեն կարողանում և ցանքից հետո մենք ստիպված ենք լինում նորից արաթը ջրելու, իսկ ծանր—կավային և խոնավ հողերում արաթը պատճառ է դառնում հողերի ուշ տաքանալուն, աերացիայի անկման, բակտերիաների աշխատանքի թուլացման և ցանքի ուշանալուն:

Աշնան արաթի դեպքում հողերը պետք է վարել 15-18 սմ. խորությամբ և հնարավոր չափով լայն շերտերով, սակայն այնպես պետք է անել, վորպեսզի «խամ» (չվարված) շերտեր (огреки) չմնան: Արաթի նպատակն այն է, վորպեսզի ստացվի արաթի մակերեսի ավելի մեծ խորթ ու բորթություն, կազմվեն ակոսներ, վորոնց միջով և պետք է բաց թողնվի ջուրը: Պարզ է, վոր վարից հետո արտը չպետք է փոցխել: Համեմատաբար նեղ ակոսներով վար պետք է կատարել ծանր և ամուր հողերը, վորովհետև նրանք ունենում են վատ ջրաթափանցիկություն և շատ ջուր ծծել չեն կարողանում, յերբ հողի շերտերը մեծ են լինում: Ի հարկե, խնամքով, ջրի փոքր և դանդաղ հոսանքով կատարած արաթը նման հողերում ևս տալիս է մեծ արդյունք: Իսկ լայն ակոսներով վարը բացի հողի մեծ մակերես կազմելուց ունի նաև այն նշանակությունը, վոր բարձրացնում է գութանների աշխատանքի արտադրողականությունը:

Արաթ անելիս ջուրը պետք է բաց թողնել այնպես, վոր նա հոսի ակոսներով դանդաղ, անընդհատ և թույլ հոսանքով: Նման ձևով արաթ արած արտում ջուրը ծծվում է հողի խոր շերտերը և յերկար ժամանակ արտը ջրելու կարիք չի զգում: Ընդհակառակն արագ հոսող ջուրը հոսում է հողի վրայով, հողի մեջ չի մտնում, վորովհետև հողում

1932 թվին մենք ունենալու յենք 30·000 հեկտար բամբակ, վորը նախորոք պիտի ապահովված լինի անհրաժեշտ քանակությամբ ջրով։ Այս նպատակին հասնելու համար մնացած բոլոր ձեռնարկումների հետ միասին շատ կարևոր է օգտագործել նաև աշնան և վաղ գարնան ջրերը, վորոնք մեր պայմաններում համարյա բոլորովին չեն օգտագործվում: Դրա համար անհրաժեշտ է կատարել արաթ, վորը հողերը վոռոգելու և ջուրը խնայողաբար ծախսելու շատ կարևոր յեղանակ է:

Այս յեղանակն ընդունված է յեղել և այժմ էլ կիրառվում է Փոքր Ասիայի բամբակացան շրջաններում, իսկ մեզ մոտ կիրառվում է Վեդի-Բասարի շրջանում: Գարնանը, բամբակի ցանքից առաջ:

ԻՆՉ Է ԱՐԱԹԸ ՑԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արաթը՝ դա հողին ջուր տալն է նախքան նրա մեջ ցանք կատարելը, վորով բացի հողում ջուր կուտակելուց հեշտացվում են մեր աշխատանքները ցանքից հետո և բարենպաստ պայմաններ են ստեղծվում բամբակի զարգացման համար: Արաթը լինում է յերկու տեսակի՝ աշնան և գարնան, վորոնց մասին կխոսենք առանձին-առանձին, վորովհետև նրանք եֆեկտի տեսակետից միատեսակ չեն:

ԱՇՆԱՆ ԱՐԱԹԸ

Աշնան արաթը կատարվում է սովորաբար վաղ գարնանից սկսած մինչև ուշ ձմեռ: Արաթը չի կարելի կատարել միայն սառած հողում, վորովհետև ջուրը սառած հողի մեջ թափանցել չի կարողանում: Յերբ արաթը կատարվում է աշնանացանների համար (մեր նախալեռնային և լեռնային շրջանների ջրովի մասերում), ապա դա պիտի կատարել այն հաշվով, վորպեսզի ցանքի ժամանակը չուշանա: Մոտավորապես ցանքից 10–15 օր առաջ կատարած արաթը հնարավորություն կտա մեզ ժամանակին կրկնահերկ և ցանք կատարելու:

Բամբակի համար կատարվող աշնան արաթը պիտի սկսել բամբակի վերջին բերքը հավաքելուց անմիջապես հետո և շարունակել մինչև հողի սառչելը:

Թե բամբակացան և թե մյուս շրջաններում ամռան վերջում սովորաբար հողերը գտնվում են աննպաստ պայմաններում, վորովհետև նրանց մեջ մշակվող կուլտուրական բույսերը մինչ այդ հողից խլած են լինում նրա մեջ յեղած ջուրը և սննդանյութերի զգալի մասը: Բացի դա հողը լինում է պնդացած, վորի հետևանքով պակասում է նաև նրա մեջ մեղած օդի պաշարը:

Այս բոլորի հետևանքով թուլանում է հողում յեղած օգտակար բակտերիաների աշխատանքը պակասում է հողի հողմնահարությունը և ժամանակավորապես ընկնում է նրա բերրիությունը: Յերբ մշակվող բույսերի բերքահավաքից հետո անմիջապես չի կատարվում խոդանահերկ, ապա այս բոլոր բացերի վրա ավելանում է նաև հողի փոշիացում, վորը պատճառ է դառնում կեղև կապելուն և ունենում է մի շարք ուրիշ անցանկալի հետևանքներ:

Այս բոլոր բացերն ուղղելու և հողում յեղած բակտերիաների աշխատանքի օպտիմալ պայմաններ ստեղծելու համար, անհրաժեշտ է կատարել խոդանահերկ և ապա աշնան արաթ, վորը նախապատրաստում է հողը գարնան բամբակի ցանքի համար դաշտավարական շրջաններում և աշնան ու գարնան այլ կուլտուրաների համար նախալեռնային և լեռնային ջրովի մասերում:

Մեզ մոտ համարյա բոլոր շրջաններում, ուր մշակվում են կուլտուրական բույսեր, մենք զգում ենք ջրի մեծ կարիք: Արեգակի ուժեղ ջերմության և օդի չորության պատճառով մենք մեր ցանքերը նայած բույսին ստիպված ենք լինում ջրել 2-ից մինչև 7-8 անգամ:

Պարզ է, վոր վոռոգելու համար ջրի նման հսկայական պահանջը մենք մեր տրամադրության տակ ունեցած ջրային ռեսուրսներով բավարարել չենք կարող, յեթե արաթը և մի շարք այլ ագրո-տեխնիկական միջոցառումներ, վորոնք նպաստում են հողում ջուր ամբարելու մեզ ոգնություն չցույց տան: Դրանք մեղմացնելով մեր կարիքը ջրի նկատմամբ միաժամանակ հանդիսանում են կարևոր պայմաններ ցանքերի տարածությունների ընդարձակման և բերքի բարձրացման խնդրում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ԱՐԱԹԸ

Արաթ պիտի կատարել բոլոր տեսակի հողերում, բացի թեթև, թույլ հզորություն ունեցող և խոնավ ճահճոտ հողերից: Առաջին յերկու տեսակի հողերում արաթը յուր նպատակին չի հասնում այն պատճառով, վոր մինչև ցանքը նման հողերում ջուր պահել չեն կարողանում և ցանքից հետո մենք ստիպված ենք լինում նորից արաթը ջրելու, իսկ ծանր—կավային և խոնավ հողերում արաթը պատճառ է դառնում հողերի ուշ տաքանալուն, աերացիայի անկման բակտերիաների աշխատանքի թուլացման և ցանքի ուշանալուն:

Աշնան արաթի դեպքում հողերը պիտի վարել 15–18 սմ. խորությամբ և հնարավոր չափով լայն չերտերով, սակայն այնպես պիտի անել, վորպեսզի «խամ» (չվարված) չերտեր (огрехи) չմնան: Սրա նպատակն այն է, վորպեսզի ստացվի արաթի մակերեսի ավելի մեծ խորթ ու բորթություն, կազմվեն ակոսներ, վորոնց միջով և պիտի բաց թողնվի ջուրը: Պարզ է, վոր վարից հետո արտը չպիտի փոցխել: Համեմատաբար նեղ ակոսներով վար պիտի կատարել ծանր և ամուր հողերը, վորովհետև նրանք ունենում են վատ ջրաթափանցելիություն և չատ ջուր ծծել չեն կարողանում, յերբ հողի չերտերը մեծ են լինում: Իհարկե, խնամքով, ջրի փոքր և դանդաղ հոսանքով կատարած արաթը նման հողերում էս տալիս է մեծ արդյունք: Իսկ լայն ակոսներով վարը բացի հողի մեծ մակերես կազմելուց ունի նաև այն նշանակությունը, վոր բարձրացնում է գութանների աշխատանքի արտադրողականությունը:

Արաթ անելիս ջուրը պիտի բաց թողնել այնպես, վոր նա հոսի ակոսներով դանդաղ, անընդհատ և թույլ հոսանքով: Նման ձևով արաթ արած արտում ջուրը ծծվում է հողի խոր չերտերը և յերկար ժամանակ արտը ջրելու կարիք չի զգում: Ընդհակառակն արագ հոսող ջուրը սահում է հողի վրայով, հողի մեջ չի մտնում, վորովհետև հողում

պնդված օդը թույլ չի տալիս ջրին ներս թափանցելու: Սրա հետևանքով ջրի քիչ թե շատ զգալի պաշար չի հավաքվում հողի մեջ և արաթը յուր նպատակին չի հասնում:

Բացի ջրի թույլ հոսանքից պետք է աշխատել արաթը այնպես կատարել, վորպեսզի ջուրը թմբերի վրայից չանցնի, այլ բարձրանա մինչև թմբերի յերկու յերրորդը: Թմբերի վերին մասը պետք է մնա չոր, վորի մեջ սակայն հետագայում ջուրը ծծվում է հողի ցածի թրջված շերտերից մազական անոթների միջոցով:

Ակոսներով և այն էլ ջրի թույլ և դանդաղ հոսանքով արաթ կատարելն արաթի հաջողության գրավականն է: Այս պայմանը խախտվելու դեպքում արաթը կարող է տալ և տալիս է բացասական հետևանք և ահա թե ինչու:

Յերբ արաթը կատարվում է այնպես վոր ջուրը ծածկում է հողի մակերեսը, ապա նախ, ինչպես արդեն ասվեց, հողի մեջ ջուրը լավ չի թափանցում և ջրի մեծ պաշար չի կուտակվում: Բացի դա վորոշ ժամանակ անցնելուց հետո առանձնապես փոշիացած հողերում արտի յերեսին կազմում է կեղև, վորը մեկ կողմից խանգարում է հողին յուրացնելու աշնան և գարնան անձրևներից և ձմռան ձյունից առաջացած ջուրը և մյուս կողմից նպաստում է հողի մակերեսից ջրի արագ գոլորշիացմանը: Այսպիսով ընդունվում է քիչ և ծախսվում է շատ ջուր, վորը բոլորովին էլ ցանկալի չի մեզ համար:

Ձմռանը և վաղ գարնանը ակոսներով և խնամքով կատարած արաթի դեպքում ջրով չծածկված, բայց մազական անոթների միջոցով թրջված շերտը յենթարկվում է պարբերաբար ցրտի և ջերմության ազդեցության: Դրա հետևանքով հողի այդ մասը փխրվում և թափվում է ակոսների մեջ, կազմում է հողի մակերեսային մի փոքր շերտ, վորով թույլ չի տալիս հողի մակերեսին կեղևակալելու, ուստի և խանգարում է հետագա գոլորշիացմանը: Այս բոլոր ասածից դժվար չի տեսնել, վոր սխալ կատարած արաթը կարող է տալ միայն բացասական հետևանքներ, վորը տեղի ունեցավ մեզ մոտ անցյալ 1931 թվին բամբակի դաշտերի նկատմամբ: Անցյալ տարի ակոսներով արաթ համարյա վոչ մի տեղ չի կատարվել: Արաթը սովորաբար կատարվել է վատ վորակի վարից, ժարկով սովորական թմբեր և մարգեր պատրաստելուց հետո: Ջուրը կատարվել է այնպես, ինչպես կատարվում է բամբակի ցանքերի ջուրը: Ջրի հոսանքը յեղել է ուժեղ և արագ: Յեղել են նույնիսկ դեպքեր, վոր արաթ կատարելու համար պատրաստվել են բանջարանոցների «լաքաների» պես թմբեր և ջուրը բաց է թողնվել այդ «լաքաների» մեջ ճիշտ այնպես, ինչպես մեր գյուղացիները «գյոլ» են անում: Միքանի տեղերում դրանով էլ չեն բավականացել, այլ թողել են, վոր ջուրը հոսի մարգերի միջից 7–10 որ անընդհատ (չալթուկի ջրի պես):

Պարզ է, վոր նման ձևով կատարված արաթները թյուրիմացության արդյունքներ են և վոչ մի դեպքում դրական արդյունքներ տալ չեն կարող: Բացի դա արաթ կատարելիս ի նկատի չեն առնվել տարբեր հողերի առանձնահատկությունները և բոլոր հողերում էլ (նույնիսկ խոնավ-ճահճային) կատարվել է ստանդարտ ձևի արաթ:

Անցյալ տարվա սխալները չկրկնելու համար անհրաժեշտ է արաթը կատարել այնպես, ինչպես ասվեց և խուսափել արաթ կատարելուց թույլ, խոնավ-ճահճային և քիչ հզորություն ունեցող հողերում:

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀՈՂՈՒՄ ՇՆՈՐՀԻՎ ԱՐԱԹԻ

Ըստ ինժեներ Կրիլովի ջուրը բնության մեջ «ջերմային» յերևույթ է: Վորովհետև ջուրը գոլորշիանալու համար կլանում է հսկայական քանակությամբ արեգակի ջերմություն: Ուստի ամառը և գարնանը բույսերի զարգացման ժամանակ գոլորշիանալով նա դառնում է բույսերին «սառեցնող» կարևոր գործոն:

Հայտնի յե, վոր բույսերի կողմից գործադրվող ջրի մոտ 97–98 տոկոսը ծախսվում է գոլորշիացման և միայն 2–3 տոկոսն է գործադրվում չոր նյութ պատրաստելու վրա: Յեթե չլիներ այդ գոլորշիացումը, ապա ամառվա ջերմությունը մահացու կլիներ բույսերի համար:

Հաճախ տաք օրերին օդի 3–5 աստիճան սառեցումը պատճառ է դառնում, վորովհետև դրա հետևանքով բարձրանում է օդի հարաբերական խոնավությունը, պակասում է բույսերի գոլորշիացումը և արմատների կողմից հասցրած ջուրը բավականացնում է բույսերին: Այն ամենը, ինչ, վոր նպաստում է արեգակի ջերմության կլանման, օդի սառեցման և հողի ջերմության տատանումների նվազեցման, մեծապես ազդում է և հողի ջերմության ռեժիմի վրա, նաև հողի ջրային ռեժիմի վրա և ստեղծում է նորմալ պայմաններ բույսերի զարգացման համար: Իսկ հողի ջերմության տատանումների նվազեցման կարևոր գործոններից մեկն էլ ձմռան արաթն է: Արաթ արած ջուրը սառչելով հողի խոր շերտերում, գարնան և ամռան տաք օրերում կլանում է արեգակի ջերմության զգալի մասը (0-աստիճանի սառույցը նույն աստիճանի ջուր դառնալու համար կամ 100 աստիճանի ջուրը նույն աստիճանի գոլորշի դառնալու համար կլանվում է մեծ քանակությամբ ջերմություն, վորը կոչվում է «թաղնված» ջերմություն, վորովհետև չի հայտնաբերվում ջերմաչափի միջոցով), մեղմացնում է հողի ջերմաստիճանի տատանումները, պակասեցնում է ջրի գոլորշիացումը հողի մակերեսից, ապա և կանոնավորում է հողի ջրային ռեժիմը:

Հայտնի յե, վոր յերբ հողը ձմեռը սառչում է խոր, ապա դա լավ է ազդում գարնանացան բույսերի վրա այն պատճառով, վոր հողում խոնավությունը լավ է պահվում, թեև մակերեսից հողը լինում է ուժեղ տաքացած:

1. Ամերիկյան փորձերը ցույց են տալիս, վոր ձմռան արաթը կատարած արտերում ամառվա ընթացքում հողերի ջերմությունը 3-ից մինչև 6 աստիճան պակաս է լինում համեմատած ձմռանից չջրված հողերի ջերմության հետ:

2. Արաթ արած հողերում ջուրը կարող է մի քանի օրվա ընթացքում իջնել հողի խոր շերտերը (մինչև մեկ մետր, նայած հողերի հատկության), մնալ այնտեղ և հետագայում ծառայել մշակվող կուլտուրական բույսերի կարիքների համար:

3. Ճիշտ արաթ արած հողերում վաղ գարնան տաք յեղանակներին ուժեղանում է հողում յեղած օրգանական նյութերի քայքայումը, հան-

քային նյութերի հողմնահարումը և ոռնդանյութերով հարուստ միջավայր է ստեղծվում բույսերի համար: Դրա հետ մեկտեղ չի պակասում նաև հողում լեղած օդի քանակը, որը բռնում է հողի վոչ մաղական անոթները:

4. Աշնանից հողը վարված և ջրված լինելու դեպքում կոճղարմատների և կոճղեղների միջոցով բազմացող մոլախոտերի արմատները յենթակա յեն լինում ձմռան ցրտի ազդեցության և կամ մեռնում են կամ ուժեղ չափով թուլանում է նրանց աճելու ընդունակությունը: Իսկ մոլախոտերի սերմերը նման հողում միանգամայն նպաստավոր պայմաններ են գտնում իրենց համար վաղ գարնանը ծլելու, վորը մեզ համար չատ ձեռնտու յե, վորքան նրանք շատ և շուտ ծլեն, այնքան լավ, վորովհետև գարնան կրկնահերկի ժամանակ այդ բոլորն էլ վոչնչացվում են:

Գարնան վաղ կրկնահերկը չատ կարեվոր է նաև այն պատճառով, վոր փշրում է կազմված կեղևը, խախտում է մաղական անոթների վերին մասը և այդպիսով թույլ չի տալիս, վորպեսզի հողից ջրի ուժեղ գոլորշիացում կատարվի: Յեթե սրանց վրա ավելացնենք նաև այն, վոր արաթի դեպքում գարնանացան բույսի համար հողը վարվում է աշնան, վորով ժամանակի ու ուժերի խնայողություն է տեղի ունենում. գարնան վարի ցանքի և մյուս աշխատանքների ժամանակ, ապա պարզ կլինի այն մեծ նշանակությունը, վորն ունի աշնան արաթը:

Կրկնավարը խոր չպիտի կատարել, վորովհետև վորքան չատ հողաշերտ չարժենք, այնքան էլ ավելի շուտ և ավելի խոր կչորանա հողը և աշնանից կատարած արաթը յուր նպատակին չի ծառայի: —

Գարնան կրկնավարը կարելի յե անել բազմախոփանիներով կամ կուլտիվատորներով 8–10–12 ս. մ. խորությամբ (նայած հողին):

Այսքան խորությունը բավական է և նորածիլ մոլախոտերին վոչնչացնելու և հողում յեղած ջուրը ջրի գոլորշիացման դեմն առնելու համար: Յեթե գարունը շուտ է վրա հասնում և հողը սկսում է չորանալ ցանքից շատ առաջ, ապա նման հողում կրկնահերկի փոխարեն ավելի լավ է գոլորշիացման դեմն առնելու համար նախ արտը փոցխել, իսկ կրկնահերկ կատարել այն ժամանակ, յերբ հնարավոր է դրանից անմիջապես հետո ցանք կատարել:

Ձե վոր արաթի ամենակարեվոր կողմն այն է, վոր սերմերը ցանելուց հետո մենք արտը նորից չենք ջրում, կամ ինչպես ընդունված է ասել «սախուվար» չենք անում: Վորովհետև սերմերն ընկնում են արդեն ջրով հարուստ հողի մեջ և ծլելու համար գտնում են միանգամայն նպաստավոր պայմաններ: Յերբ ցանվում են թրջված սերմեր, ապա նրանց ծիլերը յերևում են համահավասար (дружно), վորովհետև հողում կա և ջուր, և օդ և ջերմություն, իսկ մյուս կողմից էլ հողի կեղևի բացակայության հետևանքով նրանք չեն հանդիպում ուժեղ դիմադրության:

Պարզ է, վոր այս բոլորը չի լինի յեթե կրկնահերկը կատարվի ցանքից շատ առաջ:

Նման ձևով ցանված արտում բամբակի զարգացման նախնական շրջանում մոլախոտերը քիչ են լինում, հետագայում էլ նրանց պատճա-

ռած վնասներն այնքան մեծ չեն լինում, վորքան այն արտերում, ուր մոլախոտերն ուժեղ զարգանում են հենց առաջին իսկ որերից: Դա բացատրվում է նրանով, վոր բամբակի զարգացման առաջին շրջանը յուր խոր կնիքն է դնում նրա հետագա զարգացման ամբողջ ընթացքի վրա: Վորքան նա ավելի նորմալ պայմաններում աճի սկզբում, այնքան ավելի նա առողջ և ուժեղ կլինի հետագայում և բերքատվությունը կլինի նա ավելի առատ:

Այս բոլորի հետևանքով աշնան արաթի դեպքում գարնան ցանքերը պահանջում են 1–2 ջուր պակաս արաթ չարած հողերի համեմատությամբ և մոտ այդքան էլ քաղհան էլ պակաս պահանջում:

Այս բոլորից դժվար չի յեզրակացնել, վոր ջուր խնայելու, մոլախոտերի դեմ կռվելու, ցանքերի արագացման, բերքի բարձրացման, աշխատանքների ռացիոնալ դասավորման, մշակելի տարածության լայնացման տեսակետից աշնան արաթն ունի մեծ նշանակություն և պիտի կիրառվի այն բոլոր տեղերում, ուր դա հնարավոր է:

Այս աշխատանքների շուրջը պիտի ստեղծվի լայն հասարակական կարծիք և դարձնել այն մեր կարեվոր ագրոտեխնիկական աշխատանքներից մեկը:

Իսկ ի՞նչ ունենք մենք մինչև այժմ արաթի նկատմամբ: Ծրագրված 10.000 հեկտարի դիմաց աշնան արաթ կատարված է ընդամենը 840 հեկտար, վորն ըստ շրջանների դասավորվում է այսպես՝

№№	Շրջաններ.	Աշնանը պիտի կատարվեր արաթ	Կատարվել է	Մնում է կատարելու գարնանը
1	Ղուրդուղուլի	4100	700	3400
2	Ղամարլու	3100	75	3025
3	Վաղ-դաա	2300	65	2235
4	Վեդի	500	—	500
	Ընդամենը	10.000	840	9160

Բերված թվերը ցույց են տալիս, վոր աշնան արաթի տապալվում մենք ունենք խոշոր ճեղքվածք, ուստի չատ կարեվոր է, վորպեսզի մենք այս ճեղքվածքն ուղղենք և լրացնենք վոչ թե միայն տված պլանները, այլ նաև գերկատարենք այն հենց այս գարնանը:

ԳԱՐՆԱՆ ԱՐԱԹԸ

Գարնան արաթ կատարելու դեպքում հողը պիտի վարել 18–20 ս. մ. խորությամբ, յեթե այն աշնանից վարված չի յեղել: Այս վարի դեպքում արդեն արտի մեծ մակերեսը և նրա խորթ ու բորթությունը ձեռնտու չե մեզ համար, վորովհետև վորքան սրանք չատ լինեն, այնքան էլ հողի մակերեսից ջուր չատ կգոլորշիանա: Հողի քիչ խորթ ու բորթության առնելու համար վարը պիտի կատարել խոր և համեմատաբար

նեղ չերտերով—ակոսներով: Նման վարի դեպքում հողի մակերեսը մնում է հավասար և կոկ: Սրանից բացի խոր վարը մեծ նշանակություն ունի նաև մոլախոտերի դեմ կռվելու և ցանվող բույսերի արմատների նորմալ զարգացման համար: Սակայն այս բոլորի հետ միասին հաջող արաթ կատարելու համար վարի խորությունը և ակոսների լայնությունը այնպես պետք է հարմարեցնել, որպեսզի հնարավոր լինի առաջացած ատամների միջով ջուր բաց թողնել: Այստեղ ես ջուրը բաց պետք է թողնել ակոսների միջով և այնպես, որ նա թրջի նրանց մոտ ⅔ մասը: Ջուրը բաց թողնել անընդհատ և թույլ հոսանքով, հակառակ դեպքում կառաջանա կեղև և տեղի կունենա ջրի կորուստ: Այս հանգամանքի վրա պետք է առանձնակի ուշադրություն դարձնել այն դեպքում, երբ արաթը կատարվում է վաղ գարնանը: Սխալ արաթ կատարելու դեպքում հողում անհրաժեշտ քանակությամբ ջուր մինչև ցանքը չի մնա և մենք ստիպված կլինենք ցանքից առաջ նորից արաթ կատարել կամ, որ ավելի վատ հետևանքներ կարող է ունենալ, սերմերը կցանենք ջրով աղքատ հողում: Նման դեպքում սերմերը երկար ժամանակ չեն ծլի, ծլելիս էլ համահավասար չեն ծլի, այդպիսով տեղի կունենա վեգետացիայի կրճատում և բերքի անկում: Իսկ եթե սրա վրա ավելացնենք նաև այն, որ ցանքի նման վիճակը մեզ պետք է հարկադրի ժամանակից շատ առաջ տալ ջրել, որը ոչ «սափուլար» և ոչ էլ «խաքավաջուր» է և որը բացասական կերպով է ազդում բամբակի արմատային սիստեմի զարգացման վրա և այդպիսով նվազեցնում է բերքը, ապա պարզ կլինի, թե որքան կարևոր է խնամքով, ճիշտ և յուր ժամանակին կատարել արաթը և հետագա աշխատանքները:

Վաղ գարնան արաթի դեպքում՝ ուշի ուշով պետք է հետևել հողերին և քերը գալուն պես պետք է փոցխել թե գոլորշիացման առաջն առնելու և թե մոլախոտերի դեմ պայքարելու համար: Կրկնահերկ կատարել ցանքից առաջ, որից անմիջապես հետո կատարել ցանքը: Եթե գարնան արաթին հատկացված արտը վարված է աշնանից, ապա գարնանը, երբ դեռ ջրերն առատ են և հողն էլ այնքան է չորացել, որ կարելի է լինում նրա մեջ մտնել և աշխատանք կատարել հողը պետք է վարել 13–15 ս. մ. խորությամբ և արաթ կատարել արդեն նկարագրված ձևով: Երբ որևէ պատճառով արաթն ուշացել է և կատարվում է ցանքից առաջ, ապա այստեղ ավելի քան զգույշ պետք է լինել և հողի մակերեսի չորանալուց և քերը գալուց հետո անմիջապես պետք է փոցխելով կամ կուլտիվատորներով հողի երեսը փխրեցնել և իսկույն կատարել բամբակի ցանքը: Գարնան ճիշտ կատարած արաթի դեպքում նույնպես տեղի է ունենում ջրի զգալի խնայողություն, որի հետևանքով հետագայում բամբակին տրվում է դարձյալ մոտ 1–2 ջուր պակաս: Մոլախոտերի մի մասն ևս այս դեպքում ոչնչացվում է նախ քան ցանքը, սակայն ոչ այնքան շատ, որքան դա տեղի է ունենում աշնան արաթի դեպքում: Որքան գարնան արաթը ուշ կատարվի, այնքան էլ մոլախոտերի սերմերը քիչ ժամանակ կունենան ծլելու, ուստի այնքան էլ նրանք քիչ կոչնչացվեն ցանքին նախորդող կրկնահերկի, փոցխի և ուրիշ աշխատանքների ժամանակ: Բացի դա ուշ արաթի դեպքում հողը չորանում է, նրա մեջ եղած օրգանական նյութերի քայքայումը և հանքային մասերի հողմնա-

հարումն ավելի պակաս է կատարվում, որը բացասական կերպով է անդրադառնում բամբակի զարգացման վրա:

Այս բոլորի պատճառով, ինչպես նաև վաղ գարնանային ջրերն օգտագործելու և աշխատանքների ավելի ռացիոնալ դասավորման նկատառումներով գարնան արաթը պետք է կատարել որքան կարելի է շուտ: Իհարկե, ասածս չի վերաբերվում թեթև և քիչ հզորություն ունեցող հողերին, որոնք նախ կարող են առանց արաթի էլ մշակվել և ապա եթե նրանց վրա գարնան արաթ կատարելու լինենք, ապա դա պետք է կատարենք ուշ, այսինքն՝ ցանքից մոտ 7–10 օր առաջ:

Այս բոլորի հետ միասին անհրաժեշտ է ասել, որ մինչև այժմ արաթի ձևերը, ժամանակները և ընդհանրապես նրան վերաբերող խնդիրները դեռ գիտականորեն ուսումնասիրված չեն և շատ կարևոր է, որպեսզի այս խնդիրների ուսումնասիրության վրա Հողժողկոմատի գիտա-հետազոտական բաժինն ավելի մեծ ուշադրություն դարձնի, քան թե դարձել է մինչև այժմ:

Արաթի վրա մեծ ուշադրություն պետք է դարձնեն սովխոզները և կոլխոզները թե բամբակացան շրջաններում և թե Հայաստանի մյուս շրջաններում:

Արրաթ պետք է գործադրվի բոլոր կարևոր կուլտուրաների նկատմամբ, նա հողում ջուր պետք է կուտակի թե բամբակի և թե ձմեռ մաս մշակվող մնացած բույսերի համար:

ՊՐՈՖ. Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ԿԱՊԱՀՈՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԸ

Բամբակի ֆրոնտում այս տարվա մեր ամենամեծ անելիքը պետք է լինի ոչ միայն ցանքսի պլանի լրիվ կատարելը, այլ նաև բամբակի բերքի ավելացումը, որովհետև բավական չէ պլանով նախատեսված դաշտերը ցանել, այլ պետք է բոլոր միջոցները ձեռնարկել ապահովելու պլանով նախատեսված միջին բերքը և նույնիսկ ավելացնել այն: Ուրիշ խոսքով մենք այս տարի ոչ միայն պետք է աշխատանքների քանակական կողմի վրա դարձնենք մեր ուշադրությունը, այլև գլխավորապես որակականի վրա:

Բամբակի, ինչպես նաև այլ կուլտուրական բույսերի բերքի քանակը կախված է մի շարք պայմանների կիրառումից, ինչպես սերմերի որակը, փոփոխակը, առողջական դրությունը, հողի ֆիզիկական և քիմիական դրությունը և սրանց նպատակահարմար փոփոխությունները՝ հողի մշակությունը, պարարտացումը և բույսերի խնամքը: Ներկա հոդվածում մենք կանգ կառնենք հատկապես բերքի բարձրացման մեկ պայմանի—հողի պարարտացման վրա: Հողի պարարտացումը և բամբակենու խնամքը, ինչպես նաև հողի պատրաստելը (վարը, փոցխելը և այլն) սերտ կերպով կապված են միմյանց հետ և հողի լավ մշա-

կությունն ու բույսերի խնամքն են, վոր հնարավոր են դարձնում պարարտանյութերի լրիվ օգտագործումը: Միայն լավ նախապատրաստված և բույսերի զարգացման ընթացքում կանոնավոր մշակվող հողերում է, վոր բույսերը հնարավորություն են ստանում լիակատար օգտագործել հողի մեջի և պարարտացման միջոցով հողը մտցվող սննդանյութերը: Հակառակ դեպքում, վատ մշակված հողերում բերքի քանակը վորոշող ֆակտորներ հանդիսանում են վոչ թե սննդանյութերը, այլ հողի ֆիզիկական դրությունը:

Այսպես՝ վատ վարված և անխնամ, անկանոն մշակված հողերում պարարտանյութերը վոչ մի նշմարելի ազդեցություն չեն գործում բերքի քանակի և վորակի վրա և իզուր տեղը կորչում են: Հետևապես պարարտանյութերի լրիվ օգտագործման համար, անհրաժեշտ է հողի կանոնավոր մշակություն, նրան մոլախոտերից ազատ և փուխր պահելը, վորպեսզի բույսերն էլ նորմալ պայմանների շնորհիվ ուժեղ զարգանան և նրանց արմատներն էլ քիչ էներգիա գործադրելով տարածվեն հողի մեջ և այնտեղի սննդանյութերը լրիվ կերպով օգտագործեն:

Իսկ սա տեղի չի ունենում գլխավորապես այն դեպքում, յերբ հողը ժամանակին և կանոնավոր կերպով վարվում է ցանքսի համար պատրաստվում է փոցխի և կուլտիվատորի օգնությամբ: Պարարտանյութերի ազդեցության համար մեծ նշանակություն ունի նաև պարարտանյութերի կանոնավոր հողը մտցնելը, այսինքն՝ պարարտացման ժամանակը, ձևը և պարարտանյութերի քանակն ու նրանց հողը մտցնելու խորությունը:

Անցյալ տարվա մեր մասսայական պարարտացումներն այն էֆեկտը չեն տվել, մասամբ վատ մշակության, մասամբ էլ պարարտացումն անկանոն կատարելու հետևանքով: Այս տարի նախատեսվում է պարարտացնել ութ հազար հեկտար բամբակ: Անցյալ տարվա սխալներից խուսափելու, նորից այդ բնագավառում ճեղքվածքներ չտալու համար, անհրաժեշտ է պարարտացումը կատարել կանոնավոր, վորպեսզի այդ նյութերն իրենց լրիվ ազդեցությունը հայտնաբերեն և բերքն էլ համապատասխան չափով ավելացնեն:

Ինչ վերաբերում է անցյալ տարի պարարտացրած 16·000 հեկտարին, պետք է ասել, վոր անցյալ տարվա պարարտանյութերը հողի կանոնավոր մշակության դեպքում այս տարի ավելի լավ էֆեկտ կտան, քան թե անցյալ տարի նրանք տվին, վորովհետև ինչպես գիտենք, շնորհիվ մեր յերկրի կլիմայական չոր պայմանների, սննդատու էլեմենտները մեր հողերից չեն լվացվում, այլ մնում են հողի մեջ և լավ մշակության դեպքում նրանք իրենց ազդեցությունը կգործեն:

Լավ պարարտացման միջոցով հողերի բերքը, մանավանդ յերկար տարիներ անընդհատ մշակության յենթարկվող հողերի բերքն ուժեղ կերպով բարձրանում է, այդ ցույց են տալիս բոլոր կուլտուրական գյուղատնտեսություն ունեցող յերկրների թե փորձնական աշխատանքները և թե լայն գյուղատնտեսական պրակտիկան: Այդ փորձերից ամենացայտուն արդյունքները տվել են Ռոթամստեդի հռչակավոր փորձնական կայանի հիսունից ավելի տարիներ տևող փորձը, վորտեղ մի հողակտոր մշակվել է առանց վորևէ պարարտացման, իսկ մեկն էլ ամեն տարի

տացել է լրիվ պարարտացում (N P K): Այդ հողակտորները տվել են ցորենի հետևյալ բերքը կիլոգրամներով՝ հեկտարից:

Տարիներ	Լրիվ պարարտացում	Չպարարտացված	Տարիներ	Լրիվ պարարտացում	Չպարարտացված
1845—1848	1905	1320	1873—1876	2266	690
1849—1852	2040	1170	1877—1880	3109	655
1853—1856	2632	1031	1881—1884	2735	873
1857—1860	2680	1167	1885—1888	2576	881
1861—1864	3254	1100	1890—. .	2358	820
1865—1868	2738	895	1898—. .	1978	833
1869—1872	2535	875	1900—. .	2673	889

Այս տախտակը պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպես լրիվ պարարտացման միջոցով ցորենի բերքը 55 տարվա ընթացքում 1905 կիլոգրամից հասնում է 2673 և էլ ավելի, իսկ առանց պարարտացման մշակելու դեպքում հողի բերքը 1320 կիլոգրամից իջնում է 889-ի: Նման բերքի բարձրացում մենք ունենք վոչ միայն հացահատիկների, այլ նաև բոլոր կուլտուրական բույսերի, հատկապես բամբակի մշակության մեջ:

Այսպես հնագույն բամբակագործական յերկրում Եգիպտոսում բամբակի պարարտացման փորձերը ցույց են տվել, վոր բամբակի բերքը այնտեղ ևս պարարտացման միջոցով համարյա կրկնապատկվում է, ինչպես այդ յերևում է հետևյալ տախտակից.

ՄԱՔՐԱԾ ԲԱՄԲԱԿ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՑ (կիլոգրամ)

	O	NP	NPK
Առաջին սերիա 5 փորձի միջինը	215	248	274
Յերկրորդ » » »	391	346	457

Նման հետևանքներ տվել են նաև Ամերիկայում կատարած բազմաթիվ փորձեր, վորոնք ցույց են տալիս, վոր լրիվ պարարտացման դեպքում բամբակի բերքն ավելանում է 50–60 տոկոսով, իհարկե, յեթե միաժամանակ հողերի մշակությունը կատարվում է կանոնավոր կերպով:

Խորհրդային Հայաստանում Հողժողկոմատի պարարտացման ցանցի յերեքամյա բազմաթիվ փորձերը նույնպես ցույց են տվել, վոր հողի կանոնավոր մշակության դեպքում պարարտանյութերի ազդեցության տակ բամբակի բերքը միջին հաշվով բարձրանում է 30–45 տոկոսով, իսկ անցյալ՝ 1931 տարվանը միմիայն 19 տոկոսով: Իսկ մենք արդեն գիտենք թե ինչպիսի սխալներ ենք կատարել անցյալ տարի բամբակի մշակության ասպարեզում, վորի հետևանքով վոչ միայն մեր

բամբակի ամբողջ բերքն է պակաս լինել, այլև պարարտացման արդյունքները:

Այսպիսով ուրեմն մեր նպատակն է պարարտացման միջոցով բամբակի բերքը բարձրացնել, իսկ նրա համար պարարտացումը պետք է կատարել կանոնավոր ձևով և այն սննդատու էլեմենտներով, վորոնց կարիքը մեր հողերում կա: Այս տեսակետից մոտենալով մեր հողերին պետք է ասել, վոր յերեք գլխավոր սննդատու էլեմենտներից՝ ազոտ, ֆոսֆոր և կալիում վերջինիս, այսինքն՝ կալիումի կարիքը մեր հողերում չկա, ուստի մենք մեր հողերը պետք է պարարտացնենք միմիայն ազոտով և ֆոսֆորով:

Թեև մեր հողերում ֆոսֆոր էլ չատ կա, սակայն նա մեծ մասամբ մեր կուլտուրական բույսերի կողմից այնքան էլ չի օգտագործվում, ուստի մեր բամբակագործական չրջանների հողերը ֆոսֆորային պարարտանյութեր ստանալով, բերքն ավելացնում են: Բայց այդ միմիայն ազոտային պարարտանյութերի օգտագործման դեպքում բամբակի վեգետացիան կարող է յերկարել և նրա հասունանալն ուշանալ, ուստի այս տեսակետից էլ անհրաժեշտ է վորոշ քանակությամբ ֆոսֆորաթթվային պարարտանյութեր էլ մտցնել մեր հողերը, սակայն այս դեպքում ֆոսֆորի դոզան կարելի յե ավելի փոքր ընդունել, այն է՝ յեթե մենք մի հեկտարին տալիս ենք 60 կիլոգրամ ազոտ (վորը հավասար է 300 կիլոգրամ կիրազոտի կամ ամոնիում սուլֆատի) այդ դեպքում ֆոսֆոր պետք է տալ վոչ ավելի քան 45 կիլոգրամ (վորը հավասար է 375 կիլոգրամ 12 տոկոսանոց սուֆերֆոսֆատի): Ինչպես մեր պարարտացման փորձերը ցույց են տվել ազոտի և ֆոսֆորի այդ հարաբերությունը $N:P_2O_5 = 6:4{,}5$ մեզ մոտ կարող ենք առայժմ ընդունել վորպես հիմնական դոզաներ, մինչև այդ հարցերի ավելի մանրամասն ուսումնասիրությանն ավարտելը:

Այս հարաբերությունը խախտելու դեպքում կամ բամբակի հասունանալը կուշանա և բամբակը պակաս բերք կտա, յեթե ազոտը չատ տանք, կամ յեթե ֆոսֆոր չատ տանք, նա հողում կմնա առանց օգտագործվելու և ավելորդ ծախք կլինի:

Ինչ վերաբերում է պարարտացման ժամանակին, պետք է ասել, վոր պարարտացումը պետք է այնպես կատարել, վոր բամբակենին այդ նյութերի կարիքի ժամանակ, այն է մինչև ծաղկելը դրանցով ապահոված լինի: Բամբակենու զարգացման ընթացքում նրա սննդանյութերի կարիքը վորոշված են մի չարք անգամներ, դրանցից բերենք յերկուսը: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում իր կատարած ուսումնասիրության ժամանակ Ֆեսկա-ն ստացել է հետևյալ տվյալները:

ԲԱՄԲԱԿԵՆԻՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՉՈՐ ՆՅՈՒԹԵՐ (տոկոսներով)

Բամբակենու զարգացման չրջանը	Ազոտ	Մոխիր	Ֆոսֆոր	Կալի	Կիր	Մագնեզի
Մատղաշ բույս յերկու տերևով 3.VI	3,82	17,36	3,55	2,69	5,34	1,28
Մատղաշ բույս 23.VI	3,93	16,21	2,10	1,96	4,70	1.15
Հասուն բույս	1,46	5,81	0,44	1,32	1,42	0.25

Այս թվերը ցույց են տալիս, վոր բամբակենին սննդանյութերի մեծ կարիք զգում է հատկապես յուր զարգացման սկզբնական չրջանում մինչև ծաղկելը, իսկ դրանից հետո նրա պահանջն արդեն պակասում է:

Միջին Ասիայում Բլագովեշչենսկու կատարած փորձերը տալիս են նման հետևանքներ, ինչպես այդ յերևում է հետևյալ թվերից:

«Նավրոցկի» տեսակի մի բույս պարունակում է ազոտ գրամներով՝

16/VI	8/VII	8/VIII	30V/III	30/IX
0.004	0.014	0.019	—	0.018

Ուրեմն բամբակի պարարտացումը պետք է այնպես կատարել, վոր բույսերն իրենց զարգացման սկզբնական չրջանում հողի մեջ մեծ քանակությամբ լուծվող սննդանյութեր ունենան իրենց տրամադրության տակ: Վորպեսզի բամբակենին իր զարգացման սկզբնական չրջանում սննդանյութերով ապահովված լինի պետք է պարարտանյութերը հողը մտցնել ցանքսից մի քանի որ առաջ կամ ցանքսի ժամանակ, մանավանդ կրազոտը, վորովհետև ինչպես մեր փորձերը ցույց են տվել, կրազոտի նիտրիֆիկացիան մեր հողերում մոտ մեկ ամսով հետ է ընկնում, այդ պատճառով էլ պետք է ասել, վոր ցանքսից մի քանի որ առաջ տալու դեպքում նա մինչև բամբակի ծաղկելը կդառնա նիտրատներ և բույսերի կողմից ասիմիլյացիայի կենթարկվի:

Ինչ վերաբերում է պարարտացման ձևին, պետք է ասել, վոր պարարտացումը կարելի յե կատարել թե ձեռքով և թե մեքենաներով: Այս տարի պարարտանյութ ցրող մեքենաներ չունենալու պատճառով պարարտանյութերը պետք է խառնել յերկու անգամ ավելի խոնավ հողի հետ և հավասարապես ցանել հողի յերեսին, ինչպես ձեռքով ցորեն ցանելու ժամանակ: Վոչ մի դեպքում չի կարելի պարարտանյութերը կույտերով թողնել հողի վրա, ինչպես այդ տեղի յե ունեցել անցյալ տարի: Անհավասար, մանավանդ կույտերով պարարտացնելու դեպքում ստացվում է հողի խայտաբղետություն և չատ անգամ նույնիսկ բերքի անկում, իսկ մյուս մասն էլ այնքան չատ է ստանում, վոր այնտեղ աճող բույսերը տուժում են սննդանյութերի չատությունից: Ուրեմն պետք է պարարտանյութերը լավ խառնել հողի հետ և խնամքով հավասարապես ցանել հողի վրա:

Պարարտանյութերը ցրելուց հետո նրանց պետք է մտցնել հողի մեջ տարածելով հավասարապես վարելաշերտի մեջ: Սակայն այս աշխատանքը պետք է այնպես կատարել, վոր պարարտանյութերը չատ խոր չընկնեն, վորովհետև, ինչպես գիտենք բամբակենու սնող արմատները հողի վերին չերտում են, վարելաշերտում, 15–20 սանտիմետր խորությամբ: Պարարտանյութերն էլ պետք է մտցնել հենց այդ խորությամբ. ավելի խոր մտցնելու դեպքում նրանք անմատչելի յեն դառնում բամբակենու սնող արմատների համար և բերքը չեն ավելացնում:

Պարարտանյութերը ցրելուց հետո հողի մեջ մտցնելու աշխատանքը պետք է կատարել հետևյալ ձևով: Յեթե պարարտացնում ենք աշնանը վարած հողերը, պետք է պարարտանյութերը ցրել կրկնավարից առաջ և կրկնավարը կատարել ու հողը լավ փոցխել: Իսկ յեթե կրկնավար չենք անում՝ այդ դեպքում պարարտանյութերը ցրելուց հետո հողը պետք է մշակել կուլտիվատորով և ապա փոցխել, կամ փոցխել յերկու անգամ:

Իսկ յեթե պետք է պարարտացնել աշնանից չվարված հողը՝ այդ դեպքում կարելի յե պարարտանյութերը ցրել վարելուց առաջ, յեթե վարը 15–18 սանտիմետրից խոր չի կատարվում, խոր վարելու դեպքում պարարտանյութերը պետք է ցրել վարելուց հետո և ապա փոցխել, այդ դեպքում ես ավելի լավ է փոցխել յերկու անգամ, վորպեսզի պարարտանյութերը հավասարապես խառնվեն հողի հետ:

Այս ձևով պարարտացած հողերի բերքն անպայմանորեն կավելանա և ավելացումն այնքան շատ կլինի, վորքան հողերն ավելի լավ են վարված և հետագա մշակությունն էլ խնամքով է կատարվում:

Պարատանյութերը բացի բերքի քանակն ավելացնելուց ազդում են նաև նրա վորակի վրա և պետք է ասել, վոր տարբեր պարարտանյութեր տարբեր ձևով: Այսպես՝ միակողմանի ազոտային պարարտանյութերը վատացնում են բամբակի թելի վորակը, նույնն է անում նաև մեծ քանակությամբ գործածվող գոմաղբը: Ազոտի այդ վատ հատկությունը, սակայն չեզոքանում է ֆոսֆորաթթվի և կալիումի օգնությամբ. մեզ մոտ բավական է միայն ազոտին ավելացնել ֆոսֆորաթթու, վորպեսզի բերքի վորակը ես բարձրանա:

Թե ինչպես են ազդում տարբեր պարարտանյութեր բերքի վորակի վրա՝ յերևում է թելիկների դիմացկանության վորոշելու տվյալներից: Ըստ այդ տվյալների բամբակի թելիկների դիմացկանությունը հավասար է՝

Չպարարտացրած	6.92	գրամի
Գոմաղբով պարարտացրած . . .	5.75	»
Արհեստական պարարտանյութերով պարարտացրած	9.57	»

Այսպես ուրեմն մենք տեսնում ենք, վոր կանոնավոր պարարտացման դեպքում ավելանում է ոչ միայն բերքի քանակը, այլ նաև նրա վորակը, հետևապես մեր բամբակացան շրջանների կոլեկտիվ տնտեսությունները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն պարարտացման գործի վրա, հրահանգներ տալով պարարտացնող բրիգադներին այդ աշխատանքն առանձին հոգատարությամբ և խնամքով կատարելու համար:

Ինչ վերաբերում է յուրաքանչյուր հեկտար հողին տրվելիք պարարտանյութերի քանակին, պետք է նշել, վոր մենք դեռևս բոլոր շըրջանների համար ոպտիմալ դոզաներ չենք վորոշել և այդ աշխատանքը յերկար ժամանակ է պահանջում ու դա հողժողկոմատի պարարտացման ցանցը մենակ կատարել չի կարող: Այստեղ պետք է օգնության գան իրենք կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները, փորձեր դնելով իրենց տնտեսություններում: Առհասարակ պետք է ասել, վոր ար-
ուհետև փորձնական գործը ես պետք է դառնա սոցիալիստական տնտե-
սորի հիմնական աշխատանքներից մեկը: Վորովհետև այդ տնտեսությունները այն ժամանակ կարող են հաջողությամբ տանել իրենց աշխատանքները, յերբ նրանք իրենց հողերը շատ լավ են ճանաչում, յերբ նրանք կպարզեն թե նրանց վատ հողակտորն ինչպիսի հատկություններ ունի և

ինչ պարատանյութերի կարիք ունի և ինչ չափով: Արդեն ժամանակն է այդ աշխատանքներն սկսել և դա պետք է կատարվի տեղական ագրոնոմների և պարարտացման ցանցի հրահանգիչների ղեկավարությամբ ու նրանց ցուցմունքներով:

Պարատանյութերն իրենց լրիվ ազդեցությունը կատարում և բամբակի բերքն ավելացնում են միայն այն դեպքում, յերբ բամբակի հողերը կանոնավոր և ժամանակին վարվել ու նախապատրաստվել են ցանքի համար և յերբ բամբակենու խնամքը նրա քաղհանը, կուլտիվացիան. նոսրացումը, ջրելը և այլն, նույնպես խնամքով և ժամանակին են կատարվել:

ՊՐՈՖ. Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՏԻՐԱՊԵՏԵԼ ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Բամբակի ֆրոնտում անցյալ տարվա մեր ունեցած ճեղքվածքների գլխավոր պատճառը հանդիսանում է այդ գծով զբաղվող թե՛ մեր կենտրոնական մարմինների և թե՛ տեղական կազմակերպությունների կողմից այդ աշխատանքը վատ կազմակերպված լինելը և դրա հետևանքով առաջացած մի շարք ագրոնոմիական սխալները, վորոնք իրենց հերթին ավելի վատ ազդեցություն ունեցան, շնորհիվ վաղահաս աշնան սառնամանիքներին:

Յեթե բամբակի մշակության ամբողջ աշխատանքը լավ և ժամանակին կազմակերպված լիներ, վաղահաս սառնամանիքները և առհասարակ անցյալ տարվա կլիմայական աննպաստ պայմաններն այնքան ծանր հետևանքներ չէյին ունենալ: Այդ ցույց է տալիս մի շարք կոլեկտիվ տնտեսությունների օրինակը, վորոնք աշխատանքի ճիշտ կազմակերպման և բամբակի հաջող մշակության շնորհիվ բարձր բերք ստացան:

Այժմ, ընդհանուր գծերով տեսնենք մեր թույլ տված ագրոնոմիական սխալները և այն միջոցառումները, վորոնց կիրառմամբ մեզ կհաջողվի տնտեսական այդ կարևոր ֆրոնտի պլանները կատարել, գերակատարել և բամբակի անկախության համար՝ մեզ տված սոցիալական պատվերը լրիվ իրականացնել:

Այս հոդվածում յես կանգ եմ առնելու մի շարք զուտ ագրո-տեխնիկական մոմենտների վրա, վորովհետև, ինչպես անցյալ տարվա փորձը ցույց տվեց, մեր տեղական աշխատողները խիստ թերագնահատել են բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ այն ձեռնարկումների կիրառումը և դրանով նպաստել բերքի անկմանը և այդ խոշոր ճաղրվածքի առաջանալուն:

Պետք է այստեղ նշել նաև այն հանգամանքը, վոր մեր թույլ տված մի քանի սխալները մեր դասակարգային թշնամիներն աշխատում են օգտագործել բամբակի պլանների դեմ մղվող ագիտացիայի համար:

Ագիտացիայի նյութ են հանդիսանում նաև հողերի ճշտման և ցանքաշրջանառության բացակայության մոմենտը, վոր, սակայն, ինչպես կտեսնենք, բամբակի պլանի կատարման համար առանձին դժվարություններ չի առաջացնում։

Ինչ վերաբերում է առաջին հարցին պետք է ասել, վոր իրոք վորոշ տեղ բամբակ ցանվել է այնպիսի հողերում, վորոնք բամբակի համար պիտանի չեն, սակայն այդպիսի հողերի տարածությունն այնքան էլ մեծ չէ և դուցե բամբակի ամբողջ տարածության 2 տոկոսը հազիվ կազմի։

Բանն այն է, վոր ինչպես հայտնի յէ, բամբակենին այն բույսերի թվին է պատկանում, վորոնք դեպի հողն այնքան էլ մեծ պահանջ չունեն և այդ բույսը հաջողությամբ աճում է ամեն տեսակ հողերում, բացի ճահճային և շատ ծանր կավային հողերից։ Առաջին տիպի հողերում, յերբ բամբակի արմատները հասնում են ջրատար շերտին, արագությամբ փտում են, ուստի այնպիսի հողերում, վորոնց ստորերկրյա ջրերը 1–1½ մետրից բարձր են բամբակ ցանել չի կարելի։ Այսպիսի հողերի ստորերկրյա ջրերն անպայման պետք է դրենաժի միջոցով իջեցնել առնվազն մինչև մեկ մետր. ավելի լավ է 1½ մետր խորության և ապա նոր բամբակ ցանել։ Այստեղ պետք է ավելացնել, վոր մեր բամբակագործական շրջանների կիսաճահճները և բարձր ստորերկրյա ջրեր ունեցող հողերը, այսպես կոչված «չիմանները» ըստ իրենց ֆիզիկական և քիմիական հատկությունների հանդիսանում են բամբակի մշակության համար առաջնակարգ հողեր և սրանց միակ պակասությունն ստորերկրյա ջրերի բարձր լինելն է, վորի դեմ պայքարն այնքան էլ դժվար չէ և այժմ Հայջրտնտեսությունն զբաղված է այդ հողերի ուսումնասիրությամբ և նրանց չորացնելու նախագծերը մշակելով։ Մինչև այդ աշխատանքի ավարտելը, չիմանների մեծ մասը բամբակի համար ոգտագործել չի կարելի, հատկապես այն չիմանների, վորոնք մայիսին դեռ ջրով ծածկված են լինում, իսկ այն չիմանները, վորոնք ապրիլի յերկրորդ կեսին արդեն չորանում են, կարելի յե և պետք է բամբակ ցանել։

Յերկրորդ տիպի՝ ծանր կավային հողեր մենք նույնպես ունենք մեր բամբակագործական շրջաններում, վորոնցից ամենաարտահայտվածները՝ Վաղարշապատի և Սարդարաբադի շրջանների այսպես կոչված «բողահողերն», վորոնք շնորհիվ իրենց կավային մասի շատության և վորոշ չափով էլ ջրի պակասության, չորանալու դեպքում պինդ և հաստ կեղև են կապում, վորի ջրի գոլորշիացումը հսկայական չափեր է ընդունում, ոդի փոխանակությունը դադարում է։ Իսկ մենք գիտենք, վոր բամբակենին թեև դեպի հողն. առանձնապես պահանջկոտ չէ, սակայն նա խիստ պահանջկոտ է հողի ոդի վերաբերմամբ։ Վորովհետև բամբակի արմատներն ուժեղ շնչառություն են կատարում, ուստի նրանք ոդի մեծ կարիք են զգում, և յեթե հողերի ոդի փոխանակության աերացիան) թույլ է՝ այդ դեպքում բամբակի արմատներն ոդի պակասության հետևանքով խեղդվում են և բույսը նորմալ աճել չի կարողանում, մնում է թույլ, յերբեմն էլ չորանում է, պակաս բերք տալիս։

Ահա այսպիսի դրություն գոյություն ունի շատ ծանր կավային

հողերում, վորի դեմ կռվելու համար, կամ պետք է լայն չափերով գործածել որգանական պարարտանյութեր (գոմաղբ), կամ սրանց բացակայության դեպքում, կիրառել վորոշ ցանքաշրջանառություն։ Յեվ այդ տիպի հողերի ցանքաշրջանառությունը պետք է այնպես կազմակերպել, վոր բամբակից առաջ ցանվող բույսերը հողում մեծ քանակությամբ որգանական նյութ թողնեն։

Այս տեսակետից ամենալավ բույսերն հնդավորների ընտանիքին պատկանողներն են, վորոնց արմատները և խոզանը միասին հավասար են վերերկրյա հնձվող մասերի 50-ից 10 տոկոսին, մինչդեռ հացահատիկների մնացորդները 20 տոկոսից ավելի չեն լինում։

Հետևապես ընդավորներն ավելի շուտ կարող են հողի ֆիզիկական դրությունը լավացնել, նրան որգանական նյութերով հարստացնելով և նրա ջրի ու ոդի թափանցիկությունը մեծացնելով։

Ուրեմն, այդ ծանր՝ բամբակի համար աննպաստ հողերի ցանքաշրջանառությունը պետք է այնպես կազմակերպել, վոր նա արագությամբ լավացնի հողի հատկությունները և բամբակի համար այդ պիտանի դարձնի։ Միամյա հնդավորներից այդ տեսակետից առաջին տեղը բռնում են մաշը, սոյան, թավոտ վիկը (ձմեռվա վիկը) և սովորական վիկը, իսկ բազմամյաներից՝ առվույտը և կորնգանը։ Վորովհետև մեզ հարկավոր է ամենայն արագությամբ այդ ծանր հողերը լավացնել, ուստի անհրաժեշտ է վերը հիշած հատկապես միամյա բույսերը և առաջին հերթին մաշը մտցնել ցանքաշրջանառության մեջ և դրանով թե՛ բամբակի տարածությունը և թե՛ նրա բերքը մեծացնել։ Թեև մեզ մոտ այդ նպատակով մեծ չափերով առվույտ է ցանվում, վորը, պետք է նշել, նույնպես հողեր լավացնող առաջնակարգ բույս է, սակայն, վորովհետև նա բազմամյա բույս է, ուստի նրա մշակության միջոցով մենք արագությամբ բամբակի հողեր չենք կարող պատրաստել, մինչդեռ մաշն այդ տեսակետից այն առավելությունն ունի, վոր նա մի տարվա ընթացքում արդեն հողերն այնքան է լավացնում, վոր այնտեղ արդեն բամբակի մշակությունը հնարավոր է դառնում. էլ չեմ խոսում մաշի մյուս առավելությունների մասին, նրա սննդարժեքի մասին, վորպես մարդկանց սնունդ և վորպես կենդանիների կեր։

Սակայն այստեղ պետք է ասել, վոր բոլոր ծանր հողերը լավացնելու կարիքը միատեսակ չէ, սրանց մեջ կան նաև այնպիսիները, վորտեղ վորոշ ագրիկուլտուր. ձեռնարկումների շնորհիվ կարելի յե հենց այս տարվանից բամբակ ցանել։

Այս ձեռնարկումներից ամենակարևորը ցանքսի և ջրելու ձևի փոխելն է։ Այսպիսի հողերի վրա բամբակն անպայման պետք է ցանել ակոսների բարձր յեզրերին և ջրել անպայման ակոսներով։ Այդ դեպքում հողի յերեսը ջրելու ժամանակ չի թրջվի, հետևապես և կեղև չի կապի, ուստի աերացիան ավելի լավ կլինի և բամբակենու ոդի պահանջը կբավարարի։

Ինչ վերաբերում է մնացած՝ բամբակի համար պիտանի հողերին, պետք է ասել, վոր առանց յերկյուղի կարելի յե բամբակ ցանել առանց վորևէ ցանքաշրջանառության, վորովհետև բամբակը պատկանում է այնպիսի բույսերի շարքին, վորոնք առանց բերքը պակասեցնելու բա-

նում են միևնույն տեղը երկար տարիներ: Այս դեպքում միայն անհրաժեշտ է երկու հանգամանքի վրա ուշադրություն դարձնել, նախ հողը պետք է անպայման պարարտացնել և երկրորդ հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարն ուժեղացնել:

Բանն այն է, որ բամբակը երկար տարիներ միևնույն տեղը ցանելով, մենք բավականին արագությամբ հողը կաղքատացնենք սննդատու էլեմենտներից, որովհետև բամբակենին 250 կիլոգրամ մաքրած բամբակի բերք տալու դեպքում հողից վերցնում է հետևյալ քանակությամբ սննդանյութեր:

Բույսի մասեր	Զոր քաշը կիլ. գ	Ազոտ կիլոգ	Ֆոսֆ. թթու կիլ.	Կալի կիլ.	Կիր կիլ.	Մագն. կիլ.
Թել	250	0.85	0.25	1.15	0.47	0 20
Սերմ	545	17,⁽5	6,92	6.37	1,37	3,0
	795	17.90	7.17	7.52	1 84	3,20
Կոճղուններ	337	8.57	3 25	6.10	1.72	1 30
Տերևներ	480	15.40	5.70	8 65	21.30	4 17
Ցողուններ	547	8 00	3.22	7.72	5.30	2,30
Արմատներ	207	1.90	[illegible].07	2.65	1.32	0 80
Ընդամենը	2306	51,77	20,41	32,64	31.48	11,87

Այսպիսով, ուրեմն, անընդհատ մշակության դեպքում բամբակի բերքը սննդանյութերով ապահովելու համար անհրաժեշտ է հողերը պարարտացնել երեք գլխավոր պարարտանյութերով՝ ազոտով, ֆոսֆաթթվով և կալիով:

Ինչ վերաբերում է Հայաստանի հողերին, պետք է նշել, որ ինչպես ցույց են տվել Հողժողկոմատի պարարտացման ցանցի երեք տարվա փորձերը՝ սրանք կարիք ունեն առաջին հերթին ազոտի, ապա ֆոսֆորաթթվի: Կալիումի կարիքը մեզ մոտ չկա, նա նույնիսկ երբեմն բերքը պակասեցնում է, շնորհիվ այն հանգամանքի, որ մեր հողերն առանց այն էլ լուծվող աղերով հարուստ են և կալիում էլ մտցնելով՝ հողի լուծույթի կոնցենտրացիան էլ ավելի ենք մեծացնում և դրանով դժվարեցնում ենք բույսերի ջուր ծծելու և սննդառության աշխատանքը: Եթե ի նկատի ունենանք նաև մեր հողերի կալիումի պարունակությունը —մինչև 4 տոկոս, կտեսնենք, որ այդ պարարտանյութով բամբակի դաշտերը պարարտացնելու կարիքը երկար ժամանակ մենք չենք ունենալու:

Ինչ վերաբերում է մյուս պարարտանյութերին, ազոտին և ֆոսֆորին, ինչպես վերն էլ ասացինք, մեր փորձերը ցույց են տվել դրանց կարիքի գոյությունը մեր հողերում և իրոք այդ նյութերի կանոնավոր գործածության դեպքում մեր հողերի բամբակի բերքը ավելանում է մոտ 30 տոկոսով, ինչպես այդ երևում է հետևյալ տախտակից:

Բամբակի բերքի հավելումը՝ ազոտով և ֆոսֆորով պարարտացնելու հետևանքով

Շրջանները	N	P	NP
Ղամարլուի շրջան	3 տոկոս	4 տոկոս	18 տոկ.
Ղուրդուղուլու »	24 »	15 »	38 »
Զանգիբասարի »	32 »	13 »	32 »
Հրազդանի »	30 »	16 »	37 »
Էջմիածնի »	4 »	15 »	31 »
Միջին . . .	18 տոկոս	11 տոկոս	31 տոկոս
1930 թ.			
Ղամարլու	27 տոկ.	21 տոկ.	32 տոկ.
Ղուրդուղուլի	11 »	12 »	13 »
Հրազդան	19 »	14 »	15 »
Զանգիբասար	46 »	18 »	56 »
Էջմիածնի			
Միջին	26 տոկ.	16 տոկ.	19 տոկ.
1931 թ.			
Ղամարլու	9 տոկոս	8 տոկոս	13 տոկոս
Ղուրդուղուլու	18 »	3 »	21 »
Հրազդանի	26 »	21 »	21 »
Զանգիբասարի	16 »	17 »	21 »
Էջմիածին			
Միջին	17 տոկոս	12 տոկոս	19 տոկոս

Վերը բերված տախտակը ցույց է տալիս, որ մեր բամբակագործական շրջանների հողերը առաջին հերթին ազոտի կարիք են զգում և ապա ֆոսֆորի, իսկ ինչ վերաբերում է բերքի տոկոսային հավելումներին, պետք է ասել, որ 1929 և 1930 թ. բերքը պարարտացումից ավելանում է 30 տոկոսով, իսկ 1931 թ. միայն 19 տոկոս: Մենք տեսնում ենք մեր անցյալ տարվա կատարած սխալների արդյունքները նաև պարարտացման փորձերի հետևանքների մեջ, որովհետև ինչպես ամենուրեք, այստեղ ևս արտահայտվել են այն սխալները, որ արվել են հողի մշակության, ցանքսի, քաղհանի և այլ ասպարեզներում:

Անհրաժեշտ է այստեղ մի անգամ ևս ասել, որ պարարտացումը միայն այն ժամանակ է լրիվ ազդեցություն անում և հողի բերքը զգալիորեն ավելացնում, երբ նա մտցվում է կանոնավոր մշակված հողերի մեջ և բույսերի ամառվա խնամքը կատարվում է ժամանակին և կանոնավոր կերպով. հակառակ դեպքում պարարտանյութերը ոչ միայն դրական ազդեցություն չեն անում, այլև կարող են բերքը պակասեցնել: Վերջինս կարող է տեղի ունենալ հատկապես այն դեպքում, երբ պարարտանյութը հավասար չեն տարածում հողերի վրա և երբ պարարտացրած հողերը լավ չեն քաղհանվում: Այսպիսի դեպքում մոլախոտերը օգտագործելով պարարտանյութերն ուժեղ աճեցության

են ունենում և բամբակից խլելով ջուրը, օդը և սննդանյութերը, բամբակենուն ճնշում են և բերքի անկման պատճառ դառնում: Նման դեպքեր տեղի յեն ունեցել անցյալ տարի շատ տեղերում:

Հատկապես անկանոն է յեղել պարարտանյութերի ցրելը հողում: Շատ տեղերում փոխանակ պարարտանյութերը հավասար կերպով շաղ տալու հողերի յերեսին, կույտերով թափել են հողերի վրա և այնպես թողել. սա միանգամայն անթույլատրելի յե, վորովհետև հողի մեծ մասը պարարտանյութ չի ստանում, իսկ մյուս մասի բույսերն էլ տուժում են պարարտանյութերի չափազանցությունից:

Պարարտանյութերից լրիվ եֆեկտ ստանալու համար, անհրաժեշտ է պարարտանյութերը հավասար կերպով շաղ տալ հողերի վրա յեթե հարկավոր է վարից առաջ և ապա վարել, իսկ յեթե պարարտացնում ենք արդեն վարված հողերը, այդ դեպքում պետք է պարարտանյութերը հավասար կերպով շաղ տալուց հետո մի լավ փոցխել և այն խառնել հողի հետ: Փոցխելը ավելի լավ է կատարել յերկու անգամ: Կիրառումով (կալցիում ցիանամիտ) պարարտացնելու դեպքում պետք է հող տանել նաև, վոր պարարտացման ժամանակ հողերը չոր չլինեն, վորպեսզի այդ պարարտանյութն անհրաժեշտ քայքայման յենթարկվի և բույսերին մատչելի սնունդ տա:

Պարարտանյութերը բամբակի վրա ազդելու համար, անհրաժեշտ է նաև, վոր հողերը մոլախոտերից ազատվեն, այսինքն՝ քաղհանը կանոնավոր և, վոր գլխավորն է ժամանակին կատարվի, վորովհետև քաղհանը ուշացնելու դեպքում ինչպես վերը ասացինք՝ մոլախոտերն ուժեղ կերպով կարող են զարգանալ և թե բամբակին խեղդել: Մյուս
կողմից էլ քաղհանն ուշացնելու դեպքում մոլախոտերն այնքան են զար-
դանում, վոր արդեն անհնար է դառնում նրանց դեմ կռվելը:

Այժմ անցնենք վարի աշխատանքներին: Պետք է ասել, վոր անցյալ տարվա վարը եռ անբավարար է յեղել, հատկապես գարնան վարը, վորը կատարվել է մեծ մասամբ հողերի թաց ժամանակ:

Չոր հողը վարելու դեպքում փոշիանում է, սակայն այս յերևույթի վնասակար հետևանքները կարելի յե ուղղել դաշտերի քաղհանի և փխրեցման աշխատանքների ժամանակ: Բոլորովին այլ հետևանք ենք ստանում թաց հողերը վարելու դեպքում:

Թաց հողերը վարելու դեպքում հողը պինդ կոշտեր է առաջացնում, վորը արդեն, մանավանդ կավային հողերում այլևս մանրացնել չի կարելի և հողի վերին 18–20 սանտիմետրանոց շերտը բաղկացած է լինում
արդեն այսպիսի կոշտերից: Եվ վորովհետև բամբակենու սնող արմատ-
ները տարածվում են հատկապես հենց այդ շերտում, ուստի արմատնե-
րի մեջ լավ տարածվել չեն կարողանում: Կոշտերով հարուստ հողերի
ջրային ռեժիմը եռ նորմալ չի մնում, այդպիսի հողերը ջուր պահել
չեն կարողանում: Սրանց հետևանքը լինում է այն, վոր բամբակենու
սննդառության գործը միանգամայն խանգարվում է հետևապես բերքն
էլ համապատասխան չափով ցածր է լինում:

Անհրաժեշտ է հողերը վարել «բեշը գալու» ժամանակ, այսինքն յերբ հողը թաց չի այլևս, բայց այնքան էլ չի չորացել, վոր վարելու ժամանակ փոշիանայ: Թեև, կրկնում եմ, յերկրորդի՝ փոշիանալու հե-

տևանքները կարելի յե ուղղել հետագա մշակության ընթացքում,
առաջինը այլևս նույն տարին լավացնել չի կարելի և հետագայում ինչ-
քան էլ լավ մշակելու լինենք, հողի [illegible] բարձրացնել
չենք կարող և այդ դեպքում պարարտացումն էլ եֆֆեկտ չի տալ,
պարդյուն կանցնի:

Այս գարնան վարի հրջանում ագրոնոմները պետք է լուրջ ուշա-
դրություն դարձնեն վարի ժամանակին և վորակի վրա և պետք է աշ-
խատեն վոչ մի դեպքում թույլ չտալ թաց հողերի վարը, վորովհետև
այդ սխալը արդեն անուղղելիորեն կփչացնի հողերի ֆիզիկական դրու-
թյունը և բացասաբար կանդրադառնան հողի բերքատվության վրա:

Հետևյալ մոմենտը, վոր ուժեղ կերպով ազդում է բերքի քանակի և վո-
րակի վրա, դա ցանքսի ժամանակն է: Վաղ ցանքսը ուժեղ կերպով ավե-
լացնում է բամբակի բերքը, ինչպես այդ յերևում է բամբակացան յեր-
կրների բազմամյա փորձից. այսպես՝ Տաճկաստանում կատարված փոր-
ձերը տվել են հետևյալ արդյունքը:
Ցանքը կատարված է հողի ջերմաստիճանը 15 աստիճանի հասնելուց
սկսած յուրաքանչյուր 10–14 որից հետո. առաջին ցանքսի բերքը հաշ-
ված է 100, ըստ այնմ էլ հաշված են հետո ժամկետների բերքը:

Ցանքսի ժամանակը	Բերք	Բերքի տոկոսներն ըստ չանաքի	
		1-ին չանաք	Հետագա չանաք՝ եր
Վաղացանքս	100	63,5	36,5
Հետևյալ ժամկետի ցանքսը	115	60,5	39,5
Ուշ ցանք	79	46,3	53,3
Շատ ուշ ցանք	54	19,0	81,0

Այս տախտակի թվերը ցույց են տալիս, վոր չատ վաղ անքսը թեև
լավ բեր է տալիս, (համեմատած ուշ ցանքսի հետ 46 տոկոսով ավե-
լի), սակայն հետևյալ ժամկետի բերքը առաջինից 15 տոկոսով ավելի
յե: Առաջին յերկու ժամկետների ցանած բամբակի բերքի մոտ յերկու
յերրորդը ընկնում է առաջին չանաքին և միայն մեկ յերրորդը հետև-
յալ բոլոր չանաքներին, մինչդեռ վորքան ցանքսը ուշանում է այնքան
էլ բերքը պակասում է, միաժամանակ պակասում է նաև բերքի առա-
ջին չանաքի տոկոսը, այսինքն թե բերքի քանակն է պակասում և թե
նրա վորակն է ընկնում:

Սակայն չատ վաղ ցանել, առանց հաշվի առնելու հողի ջերմաս-
տիճանը նույնպես չի կարելի, վորովհետև բամբակի ծլելու համար ան-
հրաժեշտ է 15–16 աստիճան տաքություն: Ցուրտ հողերում ցանելու
դեպքում սերմերը ուշ են ծլում և տուժում են վոչ միայն ցրտից, այլև
ավելի չատ են յենթարկվում զանազան սնկային հիվանդությունների, վո-
րոնք պակաս չեն նպաստում բերքի անկմանը:
Հողի ջերմաստիճանի ազդեցությունը սերմերի ծլելու արագության

վրա յերևում է հետևյալ յեգիպտական փորձերից, վորոնք պարզ կերպով ցույց են տալիս թե վորպիսի հսկայական նշանակություն ունի հողի ջերմաստիճանը ծլելու արագության և ծլած սերմերի քանակի վրա։

Հողի ջերմությունը	Ծլած սերմերի տոկոսներն ըստ օրերի							Գումար
	4 օր	5 օր	6 օր	7 օր	8 օր	9 օր	10 օր	
Նախորդ տարվա (13 աստճ.	—	—	—	—	—	20	30	50
սերմեր (19 աստճ	2	50	22	4	—	—	—	78
Թարմ սերմեր (14 աստճ.	—	—	—	—	8	30	27	65
(9 աստճ	2	26	46	10	10	—	—	94

Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել նաև մի կարևոր խնդրի վրա։ Գիտենք, վոր բամբակի ցանքը պետք է սկսել այն ժամանակ, յերբ հողի ջերմաստիճանը հասնում է 15–16–ի։ Իսկ մեզ մոտ ընդունված է բամբակը ցանել չոր հողում և ապա ջրել։ Սովորաբար այս ձևը կիրառում ենք առանց ի նկատի առնելու ջրի ջերմաստիճանը և հաճախ, ավելի ճիշտ կլինի ասել, միշտ ցանված հողերը ջրում ենք սառը ջրով, վորովհետև մեր դաշտային վոռոգման ջուր մատակարարող գետերը բոլորն էլ լեռնային գետեր են սառը ջրով։ Ահա այսպիսի սառը ջրով ջրելով 15–16 աստիճան ունեցող հողերը մենք նրանց ջերմաստիճանը նորից իջեցնում ենք յերբեմն բավականին ուժեղ կերպով և այսպիսով մի քանի օրով հետաձգում սերմերի ծլելը։

Սրա առաջն առնելու միակ միջոցը արաթն է։ Ցեթե մենք արաթ անենք, այդ դեպքում հողի ջերմաստիճանը 15–16 աստիճան կհասնի վոչ թե չոր դրությամբ, այլ խոնավ, վորտեղ և անմիջապես կարող ենք ցանել առանց ցանքսը ջրելու և առանց հողի ջերմաստիճանը իջեցնելու։ Այսպիսի հողում սերմերը արագությամբ կծլեն, ինչպես այդ յերևում է վերը բերած օրինակից, վորտեղ 19 աստիճանի հողի մեջ սերմերը արդեն սկսում են ծլել 4–րդ օրը, իսկ 6–րդ օրը արդեն սերմերի 74 տոկոսը ծլած է լինում։

Հետևապես վաղ ցանելու և սերմերը արագ ծլեցնելու համար, անհրաժեշտ է այս գարնանը արաթ կատարել լայն չափերով և ապա սերմերը ցանել խոնավ և տաք հողում առանց ծլաջուր տալու։ Սա մեզ թե աշխատանքի և ջրի խնայողություն կտա և թե միաժամանակ կնպաստի սերմերի արագ ծլելուն, հետևապես մենք կունենանք առողջ բամբակ բարձր բերքով։ Ուրեմն աշխատել, վորքան կարելի յե լայն չափերով կիրառել արաթով ցանելու սերմերը, համենայն դեպս ՄՏԿ–ի պլանով նախատեսված 30 տոկոսանոց արաթը պետք է աշխատել վոչ միայն լրիվ կերպով իրագործել, այլև գերակատարել, հասցնելով այն մաքսիմումի և դրանով ապահովել բամբակի բերքի բարձրացումը։

Բամբակի բերքատվության համար անհրաժեշտ ձեռնարկումներից ամենակարեվորներից պետք է համարել բամբակենու խնամքը՝ նրա քաղհանը և հողի փխրացումը, մի աշխատանք, առանց վորի բամբակը նորմալ աճել և տանելի բերք տալ չի կարող։ Մեր անցյալ տարվա կատարած սխալներից խոշորագույնը հենց այդ ապարիգումն է։

Բանն այն է, վոր ինչպես բոլորս էլ գիտենք, բամբակը սիրում է
մոլախոտերից ազատ և օդով հարուստ հողեր, իսկ հողերի այդպիսի
դրությունը մենք կարող ենք առաջացնել լավ մշակության և քաղհանի
միջոցով։ Քաքհանը և հողի փխրացումն ունեն յերեք նշանակություն
բամբակի աճեցողության համար։ Առաջինը՝ մոլախոտերի վոչնչացումն
է։ Մոլախոտերը մեծ քանակությամբ ջուր, սննդանյութ և օդ են վերցնում հողից և բամբակենուն զրկում զարգացման այդ անհրաժեշտ պայմաններից։ Մյուս կողմից նրանք ուժեղ և արագ աճելով, ծածկում են
բամբակի, սկզբնական շրջանում դանդաղ աճող ծիլերը և ստվեր ձգելով նրանց վրա, զրկում են նրանց արևի լույսից։ Հետևապես վոչնչացնելով մոլախոտերը՝ մենք ապահովում ենք բամբակենուն անհրաժեշտ
ջրով, օդով, սննդանյութերով և արևի լույսով։

Քաղհանի և հողը փխրացնելու յերկրորդ նշանակությունը ջրի խնայողությունն է, վորովհետև հողի վերին շերտը փխրացնելով՝ մենք
խախտում ենք հողի մազականությունը, վոչնչացնում հողի ներքին
չերտերի և նրա մակերեսի կապը և այդպիսով խանգարում ջրի հողի մակերեսը հասնելուն և գոլորշիանալուն, պակասեցնելով այդպիսով ջրի
վոչ պրոդուկտիվ գոլորշիացումը հողից։

Այդ աշխատանքի յերրորդ նշանակությունն էլ այն է, վոր հողը
փխրացնելու միջոցով մենք ուժեղ չափով նպաստում ենք օդի փոխանակությանը, հողի ներացիային և այդ ձևով ապահովում բամբակենին
անհրաժեշտ օդով, առանց վորի, ինչպես վերը տեսանք, բամբակը արագությամբ խեղդվում է և բերք չի տալիս։

Քաղհանի և հողը փխրացնելու աշխատանքը պետք է սկսել շատ
շուտ յերբ արդեն մոլախոտերը սկսում են զարգանալ և ծածկել հողի
յերեսը։ Սկզբնական շրջանում այդ աշխատանքը պետք է կատարել ձեռքով, վորպեսզի բամբակի նոր ծլած բույսերը հողով չծածկվեն, իսկ
հետագայում այդ աշխատանքը կարելի յե կատարել մեքենաներով։

Փխրացումը սկզբում պետք է խոր անել, իսկ հետո, յերբ արդեն
բամբակենին ուժեղ արմատակալում և արմատները տարածում է հողի վերին շերտում, փխրացումը 5 սանտիմետրից խոր չպետք է անել,
վորպեսզի բամբակի արմատները չվնասվեն։

Ինչ վերաբերում է քաղհանի քանակին, պետք է ասել, վոր դա
կախված է հողի հատկությունից, մոլախոտերի քանակից և անձրևներից կամ ջրելուց։

Վորքան հողը ծանր է և կեղև կապելու հակումն ուժեղ, այնքան
շատ պետք է քաղհանել։ Նույնը պետք է ասել նաև մոլախոտերի մասին՝ վորքան մոլախոտերը շատ են, այնքան էլ շատ պետք է քաղհանել
և հողը մաքրել դրանցից։

Համենայն դեպս քաղհանը պետք է այնքան և այնպես կատարել,
վոր հողը մոլախոտերից ազատ լինի և հողի վերին շերտը փուխր լինի,
իսկ սրան կարելի յե հասնել շուտ քաղհանելու միջոցով։ Առհասարակ
պետք է ասել, վոր քաղհանը բերքատվության բարձրացման ամենակարևոր և ազդեցիկ գործոններից մեկն է, ինչպես ցույց են տալիս այդ
ուղղությամբ կատարված բազմաթիվ փորձերը, վորոնցից բերենք մեկ
օրինակ.

ա) վարկով՝ բարձրակ և լավ տեսակի սերմացու, յուրաքանչյուր հեկտարին 55 կիլոգրամ, իսկ յեթե ցանքը կատարվելու յե ըստ սավ-ռուվարի՝ յուրաքանչյուր հեկտարին տրվող սերմացուի նորման ավելացնել 5 կ. գր., այսինքն՝ ընդամենը՝ 60 կիլոգրամ.

բ) դրամական կանխավճարներ, նկատի ունենալով կոնտրակտացված բամբակի քանակը, յուրաքանչյուր տոնն միջին հաշվով 56 ռ. (ընդամենը կոնտրակտացված բամբակի արժեքի 10 տոկոսը), բաշխելով կանխավճարի չափն ըստ կոլտնտեսությունների, և անհատական տնտեսությունների, այն հաշվով, վոր կոլտնտեսություններին տրվի 30 տոկոսով ավելի կանխավճար, նաև ավելի մեծ գումարի կանխավճարներ՝ սածիլավոր բամբակի ցանքերի համար:

Հանձնարարել Հողժողկոմատին՝ 2 օրվա ընթացքում կազմել բաշխման աղյուսակն ըստ հատվածների:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կուլակային և ունևոր տնտեսություններին կանխիկ դրամ չի տրվում. նրանք բամբակ են ցանում չրջգործկոմների և գյուղխորհուրդների տված կայուն առաջադրությունների կարգով:

7. Բաց թողնված սերմացուի գինը սահմանել՝ մեկ կիլոգրամը 4 կոպեկ, բամբակ հանձնելու տեղում: Բամբակի սերմի արժեքը չի մըտնում տրվող կանխավճարի մեջ, այլ գանձվում է բամբակն ընդունելու ժամանակ: Կուլակային և ունևոր տնտեսություններին սերմացուն տրվում է կանխիկ դրամով, կիլոգրամը 6 կոպեկ:

8. Բամբակի ցանքարարներին տրվող կանխավճարի անհրաժեշտ ֆոնդը սահմանել 1.058.000 ռուբլի:

9. Կանխավճարներ տալ հետևյալ կարգով՝

ա) կոնտրակտացիայի յենթարկված արտադրանքի արժեքի 4 տոկոսը պայմանագրեր կնքելու ժամանակ.

բ) Ցանելուց հետո և ցանքն ստուգելուց հետո արտադրանքի արժեքի 9 տոկոսը.

գ) 2-րդ քաղհանի և նոսրացումից հետո՝ արժեքի 6 տոկոսը:

10. Առաջարկել Պետբանկին Հայաստանի գրասենյակին՝ Տրակտորկենտրոնի ՀՍԽՀ բաժանմունքի հայտերի համաձայն, կանխավճարների համար սահմանված ֆոնդը (1.058.000 ռ.) բաշխել ըստ շրջանների:

1. Ընդունելով, վոր կոնտրակտացիայի պայմանագիրը հանդիսանում է կարևորագույն մի ակտ և յերկու կողմերի վրա դնում է վորոշ պարտականություններ, բամբակի ցանքարարների հետ կնքվող պայմանագրի մեջ մտցնել հետևյալ պարտավորությունները բամբակի ցանքարարների (կոլտնտեսությունների և չքավոր ու միջակ տնտեսությունների) համար՝

ա) բամբակ ցանելու համար պատշաճ ձևով և ժամանակին ներկել և պատրաստել հողը.

բ) կոնտրակտացված ամբողջ տարածության վրա բամբակի ցանել խնամքով, ավարտելով ցանքն առանձին շրջանների համար Հողժողկոմատի կողմից սահմանված ժամկետներից վոչ ուշ.

գ) սահմանված ժամկետներում խնամքով կատարել ցանքերի

առաջին, յերկրորդ և յերրորդ քաղհանը, մշակումն ու նոսրացումը.

դ) անպայման ջրել բամբակի ցանքերը, պահպանելով վոռոգման ժամկետներն ու նորմաները. ամենուրեք վոռոգումը կատարել գիշեր և ցերեկ. – գումըը․և$՝մ

ե) սահմանված ժամկետներում հավաքել բամբակն ըստ տեսակների, այն հաշվով, վոր բամբակի ամբողջ քանակը գնման կայաններին հանձնվի սահմանված ժամկետներում.

զ) բամբակի դաշտերը հերկելու, ցանելու, նաև բամբակի քաղհանի, մշակման և բերքահավաքի ժամանակամիջոցում բամբակի ցանքարարները պետք է լրիվ օգտագործեն ՄՏԿ-ի օգնությունն ու ղեկավարությունը՝ սեփական բանող ուժի և լծկան անասունի աշխատանքի նկատմամբ.

ը) ցանքարարները պետք է լրիվ չափով և սահմանված ժամկետներում վերադարձնեն կոնտրակտացիայի կարգով բոլոր վճարումները, և այն գումարները վորոնք հասնում են ՄՏԿ. տրակտորային աշխատանքներ կատարելու համար.

թ) այն դեպքում, յերբ ցանքարարները չեն կատարում կոնտրակտացված տարածության վրա բամբակ ցանելու և մշակելու վերաբերյալ ստանձնած պարտավորությունները, նրանք պետք է վերադարձնեն բնամթերքով և դրամով ստացած կանխավճարները, նաև վճարեն պայմանագրերում նախատեսնված 10 կոպ. տույժ, չհանձնված յուրաքանչյուր կիլո բամբակի համար, յեթե մեղավոր են ցանքարարները:

12. Ցանքարարների հանդեպ Տրակտորկենտրոնի ՀՍԽՀ բաժանմունքի և բամբակազտիչ գործարանների համար սահմանել հետևյալ պարտականությունները՝

ա) ցանքարարներին պետք է տալ ժամանակին բամբակի սերմացուն սահմանված նորմաների համաձայն.

բ) կազմակերպել և կիրառել բամբակի ցանքերի ագրոսպասարկումը.

գ) համապատասխան շրջաններում կոնտրակտացիայի ժամանակամիջոցում ցանքարարներին վարկով բաց թողնել խառն պարարտանյութեր.

դ) հանձնված բամբակի վերաբերյալ ժամանակին կատարել հաշվարկումներ.

ե) սահմանված նորմաներով ցանքարարներին ապահովել հացամթերքով.

13. Պարտավորացնել վնասատուների դեմ Պայքարող Ընկերությանը՝ կազմակերպել և պայքար մղել վնասատուների և հիվանդությունների դեմ, նաև կիրառել նախազգուշական միջոցներ:

Ցանքարարներին ձրիաբար բաշխել վնասատուների համար անհրաժեշտ քանակությամբ թույն:

14. Պարտավորացնել Տրակտորկենտրոնի Հայաստանի բաժանմունքին՝ ՄՏԿ-ի կատարած աշխատանքի համար կոլտնտեսությունների, չքավոր ու միջակ տնտեսությունների ամբողջ հին պարտքը մարելու նպատակով, յուրաքանչյուր նվագ տրվող կանխավճարից պահել 1932 թ. կանխավճարների 20 տոկոսից վոչ ավելի:

15. Կոնտրակտացված յուրաքանչյուր ցենտներ բամբակի համար հացի մատակարարման միջին նորման սահմանել 55 կիլոգրամ:

Հացամթերքը մատակարարել կոնտրակտացված և փաստորեն հանձնված բամբակի քանակի համապատասխան:

16. Հանձնարարել Մատակարարման ժողկոմատին՝ Կոլտնտկենտրոնի, Սայուզխլեբի և Տրակտոր կենտրոնի Հայաստանի բաժանմունքների հետ միասին, հինգ օրվա ընթացքում սահմանել ներմուծվող հացամթերքի անհրաժեշտ քանակն ըստ շրջանների, հիմք ունենալով ԱՍՖԽՀ ժողկոմխորհի մշակած պլանը, որի համաձայն ՀՍԽՀ պետք է ներմուծվի 10.500 տոնն հացամթերք, և ներկայացնել ժողկոմխորհին ի հաստատություն:

17. Հացամթերքը մատակարարել համապատասխան արտադրական հիմնական աշխատանքների և նրանց կատարման որակի հետևյալ չափերով՝

ա) պայմանագրեր կնքելու ժամանակ՝ 10 տոկոս.

բ) ցանելուց հետո և ցանքն ստուգելուց հետո՝ 12 տոկոս.

գ) առաջին քաղհանն անելուց հետո՝ 15 տոկոս. մինչև հուլիսի մեկը՝ 37 տոկոս.

դ) յերրորդ քաղհան անելուց հետո՝ 10 տոկոս.

8. Հացամթերքի մնացած քանակը տրվում է բամբակը հանձնելուց հետո, այն հաշվով, վոր տրվող հացամթերքի ընդհանուր քանակը համապատասխան լինի սահմանված նորմային:

Հացամթերք մատակարարելու վերաբերյալ վորոշված ժամկետների համեմատ սահմանել, վոր առաջին յեռամսյակում տարեկան ֆոնդից պետք է տրվի 10 տոկոս, յերկրորդ յեռամսյակում՝ 27 տոկոս, յերրորդ յեռամսյակում՝ 10 տոկոս և չորրորդում՝ մնացած 53 տոկոսը:

Առաջարկել Հողժողկոմատին և Սյուզխլեբին՝ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի հացամթերքը ժամանակին փոխադրվի բամբակագործական շրջանները:

19. Հանձնված յուրաքանչյուր տոնն բամբակի դիմաց ցանքարարներին պետք է տալ՝

ա) 5 կիլոգրամ բամբակի ձեթ (փոխարինելով համապատասխան արժեքի սապոնով).

բ) 10 կիլոգրամ քուսպ:

20. Հանձնարարել Մատակարարման ժողկոմատին՝ Հողժողկոմատի, Տրակտորկենտրոնի Հայաստանի բաժանմունքի, Կոլտնտկենտրոնի և Հայկոոպի հետ միասին, կազմել ներմուծվող արդ. ապրանքների պլանը՝ ըստ շրջանների և տեսակների, հիմք ունենալով ԱՍՖԽՀ ժողկոմխորհի վորոշումը, վորի համաձայն ՀՍԽՀ համար արդ. ապրանքների ֆոնդը սահմանված է 2.913.000 ռ. չափով: Արդյունաբերական ապրանքների թվում ներմուծել՝ 10.750 կիլոգրամ թեյ և 372 տոնն շաքար: Ցանքարարներին արդյունաբերական ապրանքներ մատակարարել սպառկոոպերացիայի ցանցի միջոցով ընդհանուր կարգով:

21. Հանձնարարել Մատակարարման ժողկոմատին՝ 10 օրվա ընթացքում սահմանել ներմուծվող արդ. ապրանքների քանակն ըստ յեռամսյակների:

22. Պարտավորեցնել Մատժողկոմատին և Հայկոոպին՝ բամբակագործական շրջանների համար հատկացված արդյունաբերական ապրանքները ժամանակին մատակարարել ցանքարարներին:

23. Հանձնարարել շրջգործկոմներին, ՄՏԿ-ին և շրջանային կոլտնտմիություններին՝ սիստեմատիկ հսկողություն ունենալ, վորպեսզի արդ. ապրանքները կանոնավոր մատակարարվեն ցանքարարներին, և այն բոլոր դեպքերի մասին, յերբ բամբակագործության շրջաններում հատկացված արդյունաբերական ապրանքները կոգտագործվեն այլ նպատակներով, հաղորդել Բանգյուղտեսչության ժողկոմատին ու դատախազությանը՝ մեղավորներին պատասխանատվության յենթարկելու համար:

24. Բամբակ ցանելու, մշակելու, հավաքելու և պայմանավորված քանակությամբ հանձնելու նկատմամբ իրենց պարտականությունները ժամանակին ու լրիվ կատարող կոլտնտեսություններին, չքավոր ու միջակ տնտեսություններին խրախուսելու նպատակով, առաջարկել Հողժողկոմատին և Մատակարարման ժողկոմատին՝ նախատեսել արդ. ապրանքների հատուկ ֆոնդ 200.000 ռուբլի գումարի չափով:

25. Պարտավորեցնել հանրապետական և տեղական բոլոր կազմակերպություններին՝ կոնտրակտացիայի կամպանիան անցկացնելու ժամանակ նշանաբան ունենալ՝ կոլտնտեսական և չքավոր ու միջակ ցանքարարների լայն մասսաների բոլոր ուժերը և ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել կամպանիայի հարցերի շուրջը, ապահովելով այդ մասսայի լիակատար մասնակցությունը կամպանիայի ընթացքում:

Մասսայական-բացատրական լայն աշխատանքներ ծավալել կոնտրակտացիայի պայմանագրերի նշանակության շուրջը, վորպես կարևորագույն մի ակտի, վորով սահմանվում են յերկկողմանի պարտականություններ:

Միաժամանակ այս կամպանիայի կիրառման ղեկավարությունը հանձնել շրջգործկոմներին, գյուղխորհուրդներին և շրջանային կոլտնտեսություններին, պարտավորեցնելով նրանց, ակտիվ օժանդակություն ցույց տալ ՄՏԿ-ին և աչալուրջ հսկողություն ունենալ այն պարտականությունների կատարման վրա, վորն ստանձնել են կոլտնտեսությունները և անհատական, միջակ ու չքավոր տնտեսությունները:

26. Կոնտրակտացիայի կամպանիայի գործառնական ղեկավարությունը դնել Տրակտորկենտրոնի Հայաստանի բաժանմունքի և բամբակաղտիչ գործարանների վրա, պարտավորեցնելով նրանց, սիստեմատիկաբար ստուգել բամբակի ցանքի, մշակման և բերքահավաքի կամպանիայի բոլոր հիմնական ձեռնարկումների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարումը:

Միաժամանակ պարտավորեցնել շրջգործկոմներին և դատախազության մարմիններին՝ խիստ հսկողություն ունենալ, վորպեսզի կուլակային և ունեվոր տնտեսությունները կատարեն բամբակի ցանքի մշակման և հանձնելու վերաբերյալ նրանց տված կայուն պարտականությունները (առաջադրանքները):

27. Կոնտրակտացիայի կամպանիայի կատարման ընդհանուր հսկողությունը դնել Հողժողկոմատի վրա, պարտավորեցնելով Տրակտորկենտրոնի Հայաստանի բաժանմունքին և բամբակազտիչ գործարաններին ներկայացնել Հողժողկոմատին՝ սահմանված ձևերով գործառնական ամփոփումներ:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահի տեղակալ՝ Ն. ԿՈՒՐՍԵԼ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
գործերի կառավարիչ՝ Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Յերևան.

—

Ա. ԽԱՆՋՅԱՆ

ԱՐԱԳԱՑՆԵԼ ՎՈՌՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՄՊԸ*)

Ընկերնե՛ր, մեր գյուղատնտեսության վերակառուցման, նոր,
բարձրարժեք կուլտուրաների տարածման կարևորագույն լծակների
թվում առաջին տեղերից մեկը բռնում են վոռոգման աշխատանքները:
Ընկ. Լենինն իր ժամանակին հատկապես դրեց Անդրկովկասի կուսակ-
մակերպությունների առաջ վոռոգման խնդիրը, վորպես մի խնդիր, վոր
«կվերստեղծի յերկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրացնի
անցումը դեպի սոցիալիզմ»: Կենտկոմը Հոկտեմբերի 31-ի իր վորոշ-
ման մեջ մասնավորապես ընդգծեց, վոր «կենտրոնական խնդիրը, վորից
կախված է Անդրկովկասի գյուղատնտեսական տեխնիկական վերակա-
ռուցման հաջողությունը ջրային տնտեսության վճռական վերակառու-
ցումն է,—տնտեսություն, վոր դարձել է նեղ տեղ գյուղատնտեսության
վերելքի փորձում»:

Պարզ է, ուրեմն, բացառիկ այն ուշադրությունը, վոր պետք է դարձնել ջրային տնտեսության, մասնավորապես նոր վոռոգումների աշխատանքի վրա: Վոր այս ասպարեզում մենք բավական աչքի ընկնող աշխատանք արդեն կատարել ենք՝ այդ մասին վկայում են թվերը. 1925 թվին ջրվող 87.000 հեկտարի փոխարեն, այս տարի ունենք վոռոգվող 144.600 հեկտար, վորից դաշտային շրջաններում՝ մոտ 69.000 հեկտար: Աչքի յե ընկնում վոռոգման աշխատանքների ծավալի լայնացումը, մանավանդ վերջին տարիներում: Անցյալ տարի վերջացավ Փոքր Սարդարաբադի ջրանցքի կառուցումը, վորը վոռոգում է 25.000 հեկտար, վորից նոր հողեր՝ մոտ 8000 հեկտար: Վերջացավ վերջապես Կարճևանի ջրանցքի կառուցումը, լայն թափով առաջ են գնում Ղուերի վոռոգման աշխատանքները: Այսպիսով, անվիճելի յեն մեր նվաճումները վոռոգման գծով: Սակայն այս ասպարեզում ունենք նաև մի շարք աչքի ընկնող թերություններ. ամենից առաջ՝ վատ է տեղական ցանցի դրությունը, մինչդեռ լավացնելով տեղական ցանցի վորակը՝ ավելի լավ օգտագործելով գոյություն ունեցող ջրային հնարավորությունները՝ կարելի յե առանց մեծ ծախսերի ավելացնել վոռոգվող հողերի տարածությունը. Իզուր չէ, վոր Համկոմկուսի Կենտկոմը մասնանշում է, թե ջրային աշխատանքների ասպարեզում «ամենամոտիկ խնդիրը հանդիսանում է գոյություն ունեցող վոռոգման ցանցի վճռական բարելավումն ու ռացիոնալացումը (ջրային ուղիների մաքրելն ու

*) Հատված Հայկոմկուսի 8-րդ համագումարում տված զեկուցումից:

կարգի բերելը, ջրհանների վերասարքավորելն ու մեքենայացնելը, ջրոռոգման սիստեմի կազմակերպելը և այլն)»: Պետք է ընդունենք, վոր շրջանային կուսակցական և խորհրդային օրգանները դեռ մինչև այժմ էլ թերագնահատում են աշխատանքի այս կողմը: Չափազանց թույլ է տեղական ուժերի միջոցների մոբիլիզացիան ջրային ուղիների մաքրման, լայնացման, կարգի բերելու, ջուրը տնտեսելու համար: Ամենափոքր աշխատանքի համար, վոր կարելի յե շատ անգամ անել մի գյուղխորհրդի նախաձեռնությամբ և գյուղի ուժերով, մարդիկ սպասում են պետական բյուջեյից հատկացումների. մինչդեռ Կենտկոմը պարտավորեցնում է մեզ՝ «այս գործի համար մոբիլիզացիայի յենթարկել ՏԵՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ»: Այս աշխատանքների թուլությունը բացատրվում է նաև շրջանային նորակազմ ջրային ապարատի թուլությամբ: Պետք է պահանջել շրջաններից ավելի յեռանդուն աշխատանք՝ բարելավելու համար տեղական ցանցի դրությունը, օգտագործելով այդ նպատակով տեղական միջոցներ. պետք է պահանջել Հայջրտնտեսությունից՝ ուժեղացնել ղեկավարությունը ջրային շրջանային ապարատի նկատմամբ՝ ամենից առաջ շեշտը դնելով գոյություն ունեցող ջրային ցանցի վորակը բարձրացնելու և բարելավելու խնդրի վրա:

Յերկրորդ — վոռոգման մի շարք աշխատանքներ սկսվել են առանց նախնական լուրջ ուսումնասիրության: Տնտեսական պարտիզանականության և անպլանության օրինակ կարող է հանդիսանալ Կարճևանի ջրանցքը, վորը վերջապես ավարտվեց հսկայական քաշքշումներից և նախահաշվով սահմանված գումարից ուղղակի անհավատալի չափով գերածախս կատարելուց հետո: Գործը մինչև վերջ չհասցնելու և կատարված ծախսերի դեմ եֆեկտ չտալու օրինակ կարող է տալ Եղվարդի ջրանցքը, վորի վոռոգելիք մոտ 2000 հեկտարը դեռ մինչև այժմ էլ մնում է անմշակ, հողի լավացման և մելիորատիվ մի շարք աշխատանքներ չկատարելու հետևանքով:

Յերրորդ — թույլ է նոր վոռոգման ցանցի լիակատար իրացման գործը. Այղր-լճի ջրանցքը, վոր համաձայն նախագծի պետք է ջրեր 6000 հեկտար, հող, ջրում է մինչև այժմ 2000 հեկտարից վոչ ավելի. անբավարար պետք է համարել նաև Փոքր Սարդարաբադի ջրանցքի վոռոգելիք նոր տարածությունների իրացման տեմպը: Ինչ վերաբերում է վոռոգման ներկայումս ընթացող ամենախոշոր աշխատանքներին՝ Ղաբի վոռոգմանը՝ ապա հայտնի յե, վոր այդ աշխատանքների ներկա թափը նույնպես շատ հեռու յե բավարար լինելուց. գրեթե լրիվ ծախսելով անցյալ տարվա պլաններով նախատեսված գումարը՝ Ջրային Տնտեսությունը՝ վերջացրեց տարին՝ աշխատանքների պլանի խոշոր թերակատարումով՝ վտանգելով այս տարի սպասվող նոր տարածությունների վոռոգումը: Ինչպես շինարարության մեջ, այստեղ ևս թերակատարման պատճառը թույլ ղեկավարությունն է, աշխատանքի մի շարք տղակներում ինքնահոսի տիրապետությունը, բանվորական ուժի հավաքագրման, աշխատանքի մեքենայացման խնդրում ընկ. Ստալինի ցուցումների կենսագործման միանգամայն անբավարար ընթացքը: Պետք է շեշտել նաև այն հանգամանքը, վոր շրջանային կուսակցական և խորհրդային օրգանները սովորություն են դարձրել ինչքան կարելի յե հեռու մնալ ջրաշինարարական աշխատանքների կոնկրետ ղեկավարումից.

մի յերևույթ, վոր առանձնապես աչքի յե ընկնում Կոտայքի և Ղամարլուի շրջաններում:

Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումը պահանջում է վերևից մինչև ներքև ուժեղացնել ղեկավարությունը ջրաշինարարական աշխատանքների նկատմամբ. կուսակցական և հասարակական կազմակերպությունները պետք է մտնեն այս աշխատանքներին այնպես, ինչպես նրանք մոտից հետևում են առանձին գործարանների արդֆինպլանների կատարման ընթացքին, և այս աշխատանքներում նույնպես ապահովեն ստալինյան պայմանների անշեղ կենսագործումը, շինպլանների լրիվ կատարումը:

1932 թիվը պետք է անցնի վոռոգման աշխատանքների ծավալը զգալի չափով լայնացնելու նշանաբանի տակ: Լայն ֆրոնտով շարունակելու յենք Ղաբի շինարարությունն այն հաշվով, վորպեսզի 33 թվին վերջնականապես ավարտենք այդ աշխատանքները: Ավարտելու յենք Զանգիբասարի և Սև-Ջրի ճահիճների չորացման և վոռոգման նախապատրաստական աշխատանքները: Կարիք չկա բացատրելու այս աշխատանքների տնտեսական նշանակությունը. կատարելով այդ աշխատանքները՝ մենք բերրի դաշտերի կվերածենք Արարատյան դաշտում տասնյակ հազարավոր հեկտար ճահճացած կամ աղով պատած հողեր, մենք կառողջացնենք մալարիայի դարավոր բույները, հսկայական զարկ կտանք տեխնիկական բույսերի՝ բամբակի, այգեգործության զարգացմանը: Համագումարը պետք է պահանջ դնի՝ արագացնել ջրաշինարարական և վոռոգման աշխատանքների տեմպը: Միաժամանակ, Սևանի պրոբլեմի լուծման զուգակցությամբ, պետք է, վոր Հայջրտնտեսությունն արագացնի մեծ Սարդարաբադի վոռոգման խնդրի ուսումնասիրությունը և նախագծումը: Հայաստանի հողերի վոռոգման այս վերջին և ամենախոշոր պրոբլեմը պետք է կազմի յերկրորդ հնգամյակի վոռոգման աշխատանքների հիմնական մասը: Մեծ աշխատանքների յերկրորդ հնգամյակը պետք է վերածնի վողջ Արարատյան դաշտը կոլտնտեսային և խորհտնտեսային, բամբակի և այգեգործության ծաղկած մի յերկրի:

Կ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԿՏԱՆՔ 30 ՀԱԶԱՐ—ԻՆՉ ԵՎ ՎՈՐ ԼԻՆԻ

ԱՊԱՀՈՎԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՄԲԱԿՈՎ

Մեր յերկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության վերակառուցումը և մեր գործարանների ու ֆաբրիկաների աճումը թեթև արդյունաբերության հումույթի բազա ստեղծելու հարցն են դնում մեր առաջ:

Բանվորների, կոլտնտեսականների կուլտ-կենցաղային պայմանները տարեց-տարի բարելավելու համար պետք է մատակարարել նրանց արդյունաբերական ապրանքներ և առաջին հերթին՝ մանուֆակտուրա:

Գյուղատնտեսության հիմնական խնդիրներից մեկը ներկայումս հանդիսանում է տեխնիկական մշակույթների շրջանների մասնագիտացումը, այդ մշակույթների ծավալումը մեծ չափով: Այս տեսակետից Խոր. Հայաստանն արագ թափով զարգացող արդյունաբերության տեխնիկական մշակույթների հումույթի բազա հանդիսանալու բոլոր տվյալներն ունի: Մեր գյուղատնտեսության մեջ բամբակը հիմնական տեղ է բռնում: Կուսակցության լոզունգը՝ «բամբակի անկախություն կապիտալիստական յերկրներից»—հանդիսանում է մեր յերկրի զարգացման մարտական լոզունգներից մեկը:

Ընթացիկ հնգամյակում պետք է հիմնականում ապահովենք մեր արդյունաբերությունը բամբակով և լիակատար հնարավորություն ունենանք արտաքին շուկա դուրս գալու մեր սեփական արտահանությամբ:

30·000 Հ. ՄՇԱԿՄԱՆ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆ

Հայաստանի բամբակագործության աճման ընթացքը ցույց է տալիս, վոր մենք առաջիկա տարվա 30·000 *հեկտար բամբակի մշակումն ապահովելու լիակատար հնարավորություն ունենք:* 1930 *թվին ունեյինք* 16·000 *հեկտար,* 1931*-ին՝* 25–000 *հեկտար, իսկ* 1932 *թվի համար կուսակցության Կենտկոմը վորոշեց* 30·000 *հեկտար բամբակի ցանք ունենալ:*

30·000 *հեկտար բամբակի մշակումը մարտական խնդիր է: Միայն տխմար օպորտունիստները կարող են չհավատալ այդ պլանի կատարման հնարավորությանը: Բամբակագործության զարգացման հիմնական լծակներն ակներև են: Հող ու ջուր ունենք: Հայաստանի ջրաշինարարական տասնամյա աշխատանքը լիովին կապահովի այս տարածությունը: Աջ օպորտունիստները և նրանց դաշնակից դարձած «ձախ»-երը չեյին հավատում* 1931 *թվի* 25·000 *հեկտարի պլանին նույնպես:*

ՉԿՐԿՆԵԼ ԱՆՑՅԱԼ ՏԱՐՎԱ ՍԽԱԼՆԵՐԸ

Բամբակացան կամպանիայի հաջող կիրառումը հիմքից գեն շպրտեց օպորտունիստների «հիմնավորումները»: Բամբակի ցանքի տարածությունը 9000 *հեկտարով ավելացավ: Բամբակի ցանքերը լիովին ապահովված եյին ջրով: Այդ խնդրում մենք դժվարություններ չունեցանք և յեթե այսոր խայտառակորեն բամբակի մթերումը հետ է մնացել, դրա պատճառն այն չէ, վոր մենք բոլոր հնարավորությունները չունեյինք, այլ այն, վոր մեր տեղական կազմակերպությունները և ՄՏ կայանները չկարողացան աշխատանքը կազմակերպել: Բամբակի մթերման պլանի թերակատարումը բացատրվում է մի շարք պատճառներով: Այդ պատճառներն են՝ վատ հերկը, բամբակն իր ժամանակին չմշակելը, ՄՏ կայանների թույլ ղեկավարությունը (վորոնք չկարողացան ընդգրկել բամբակի մշակության ագրո-տեխնիկական բոլոր պրոցեսները), կոլխոզների աշխատանքի վատ կազմակերպումը, անհատական գործարքայինն ուշ կիրառելը, իսկ ամենագլխավորը, վոր տեղական կազմակերպությունները տոկոսների հետևից ընկնելով ընդգրկեցին աշխատանքի միայն տեխնիկական կողմը՝ լուրջ ուշադրություն չդարձնելով կոլտնտեսությունների տնտեսական, կազմակերպչական, քաղաքական ամրացմանը, վոր կոլխոզ-շինարարության ներկա ետապի ամենահիմնական խնդիրն է: Սրան պետք է ավելացնել նաև այս տարվա մթնոլորտային պայմանները, վոր բերքատվության վրա վատ ազդեցին:*

Միանգամայն հասկանալի յե, վոր բամբակի մշակման կամպանիայի ցանքից մինչև հավաքը՝ բոլշևիկորեն աշխատելու դեպքում, կլիմայական պայմաններն այս աստիճան չեյին կարող նվազեցնել բերքատվությունը: «Օբյեկտիվիզմով» բացատրվող նման տեսակետ կարող են ունենալ միայն օպորտունիստները, վորոնք այս կամ այն ֆրոնտում իրենց ունեցած անհաջողությունների մասին օպորտունիստական յեզրակացություններ են անում, վորպեսզի հենվելով այդ յեզրակացությունների վրա՝ մեր տեմպերի դեմ դուրս գան:

ԳԼԽԱՎՈՐԸ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է

Բամբակի ցանքերի տարածության ընդարձակմանը զուգընթաց, անպայման ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐԸ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է: *Սրա վրա պետք է կենտրոնացնել ագրո-տեխնիկայի գլխավոր ուշադրությունը, բայց չի կարելի միայն բերքատվության բարձրացման կողմնակից լինել. բոլոր տվյալները հաստատում են այն, վոր տարածության ընդարձակումը և բերքատվության բարձրացումը միաժամանակ իրականանալի և հնարավոր են մեր յերկրում:*

ԱՊԱՀՈՎԵՆՔ ԲԱՄԲԱԿԸ ՋՐՈՎ

Բամբակի ցանքերի ընդարձակման հիմնական ազդակ է վոռոգումը: 1932 *թ. ցանքերի տարածությունը* 25·000 *հեկտարից* (1931 *թ.*) *հասցվելու յե* 30·000 *հեկտարի: Այս աճման զուգընթաց աճում է նաև*

մեծ և փոքր շինարարությունը, վորով պիտի բարելավվի գոյություն ունեցող վոռոգման սիստեմը: Այս խնդրում Ղուերի շինարարությունն ամենագլխավոր նշանակությունն ունի:

Պիտի ասել, վոր Ղուերի շինարարության ներկա տեմպերը լրիվ յորաշխիք չեն տալիս ընթացիկ տարում ամբողջ աշխատանքն ավարտելու մասին: Աշխատանքը ղեկավարողների ոպորտունիստական ղեկավարության շնորհիվ կան լուրջ ճեղքվածքներ: ՀայԿ(բ)Կ կենտկոմը, իր ժամանակին, այս բանի վրա ուշադրություն դարձրեց և օգոստոսի 13-ի վորոշմամբ փոխեց Ղուերի հին ղեկավարությունը և պլանը կատարելու համար պարզ ու վորոշ դիրեկտիվներ տվեց: Թեև սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին (31 թ.) աշխատանքի տեմպերը լավացան, նույնիսկ նոյեմբերին 14 տոկոսով ամսական պլանը գերակատարվեց, բայց և այնպես շինարարությունը բանվորական ուժով ապահովելու գործը թույլ է ընթանում և հետագա ամիսներին Ղուերում մենք անմխիթար դրություն ունենք: Բանուժի թույլ մատակարարման հետ միասին յերկաթի, ցեմենտի և այլ շինանյութերի մատակարարումը սպառնալի դրության մեջ է: Շինանյութերի և տեխնիկական կահավորման պլանի կատարումն Անդրբամբակմիությունը 1931 թվին ձախողության մատնեց, և միայն վերջերս 15 տոկոսով բավարարվեց պլանով նախատեսված պահանջը: Անդրբամբակմիության մատակարարման գործում բացարձակ ոպորտունիստական վերաբերմունքը նույնպես հարվածում է 32 թվի բամբակի ցանքերի ընդարձակման գործը: Անհրաժեշտ է հենց այժմվանից կատարել մատակարարումը 100 տոկոսով, այլ կերպ Ղուերի շինարարության պլանի կատարումը լուրջ վտանգի տակ է:

Բացի խոշոր շինարարության շնորհիվ ստացվող նոր հողերից, ջրաշինարարական փոքր աշխատանքները ևս բամբակի մշակության համար պետք է տան 2000 հեկտար: Սակայն այս աշխատանքը ևս դանդաղ է ընթանում: Վոռոգման սիստեմի կառուցման աշխատանքներն անհրաժեշտ է ուժեղացնել:

ՊԼԱՆԸ ԿԿԱՏԱՐԵՆՔ ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ

30·000 հեկտար բամբակը կուսակցության և խորհրդային իշխանության մարտական խնդիրն է: Հողժողկոմատը, Հայջրտնտեսությունը, տեղական կուսկազմակերպություններն ու ՄՏ կայանները պետք է բոլշևիկորեն հաշվի առնեն 1931 թվի փորձը, հարվածային տեմպով նախապատրաստական աշխատանքների ձեռնարկեն՝ 30·000 հեկտարն ապահովելու համար:

Այս պլանն իրականանալի յե, քանի վոր դրա համար կան բոլոր հնարավորությունները և այն պետք է կենսագործել բոլշևիկորեն:

ԻՆԺ. Գ. ՇԻՐՄԱԶԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՊՐՈԲԼԵՄՆ ՈՒ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս տարվա բամբակի բերքատվության պլանների կատարումը խոշոր չափով կախումն ունի ջրային տնտեսության, վոռոգման ցանցի կանոնավորումից: Սոցիալիստական հիմունքներով վերակառուցվող, խոշոր ու մեքենայացվող գյուղատնտեսությունը նոր մարտական պահանջներ է դնում ջրային տնտեսության առաջ:

Անցած 10–11 տարիների ընթացքում Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռք է բերել զգալի հաջողություններ ջրային տնտեսության բնագավառում: Սակայն այդ հաջողություններով հանդերձ՝ ջրային տնտեսության վերակառուցման գործը, նրա սոցիալիստական գյուղատնտեսության հարմարեցման խնդիրը տակավին շատ հետ է մնում ընդհանուր սոցիալիստական շինարարության տեմպերից:

Հենց այդ նկատի առնելով, ՀամԿ(բ)Կ կենտկոմը 1931 թ. հոկտեմբերի 31-ի իր պատմական վորոշումների շարքում խոշոր ուշադրություն է դարձնում ջրաշինարարության վրա:

«ՀամԿ(բ)Կ կենտկոմը գտնում է, վոր կենտրոնական այն խնդիրը, վորից կախումն ունի Անդրկովկասի գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման հաջողությունը, ջրատնտեսության վըն-ռական վերակառուցումն է, վորը դարձել է նեղ տեղ գյուղատնտեսության վերելքի գործում»:

Եվ քանի վոր ջրատնտեսությունն Անդրկովկասի պայմաններում հանդիսանում է գյուղատնտեսության վերելքի համար նեղ տեղ, ապա Խորհրդային Հայաստանի պայմաններում, ուր առանց արհեստական վոռոգման, վո՛չ դաշտավայրում և վո՛չ էլ նախալեռնային ու լեռնային շրջաններում անհնարին է զարգացնել բարձր տեխնիկական բույսերի մշակույթը, նա (ջրատնտեսությունը) վողջ գյուղատնտեսության կարևորագույն ողակն է: Ուստի ջրաշինարարական վոռոգման աշխատանքներին անհրաժեշտ է տալ բոլշևիկյան տեմպեր: Անհրաժեշտ է ջրոգտագործումը, վոռոգումը հիմնական ռեկոնստրուկցիայի յենթարկել վերակառուցվող սոցիալիստական գյուղատնտեսությանը լիովին սպասարկելու համար:

Բամբակի անկախության համար մղվող պայքարը պահանջում է ցանքերի լայնացում՝ խոշոր չափերով, վոր պետք է լրիվ ապահովվեն ջրով 1932 թ. դաշտավայրի ընդարձակման (29·000 հեկտար) բամբակադաշտերն ու մոտ 20·000 հեկտար այլ տեխնիկական (այգիներ, բանջարանոցներ և այլն) կուլտուրաները հնարավոր կլինի ջրով ապահովել

կատարելով միայն մի շարք կարևորագույն աշխատանքներ, այն է՝ Ջրօգտագործման և կապիտալ և մանր շինարարություններ ու նրա ռացիոնալ օգտագործումը:

Կապիտալ շինարարության գծով, ինչպես հայտնի յե, ամենակարևոր աշխատանքը, վորը տարվում է այժմ ամենահարվածային կարգով, դա Ղռերի վոռոգման գործի շինարարությունն է, վորը գալիք գարունը ջրով պետք է ապահովի Ղամարլվի շրջանում մոտ 4·000 հեկտար հող, վորից յերեք հազար հեկտարը բամբակի տակ է գրվելու:

Ղռերի շինարարությունն իր խոշոր տնտեսական նշանակությամբ հատուկ տեղն ունի և հատուկ ուշադրությունն է գրավում մեր շինարարությունների շարքում:

Ու չնայած մի շարք խոշորագույն տեխնիկական ու այլ դժվարությունների, այնուամենայնիվ շնորհիվ ձեռք առնված ու առնվող միջոցների, շինարարության բանվորների, ինժեներա-տեխնիկական կադրերի անձնվեր աշխատանքի, շինարարությունը ժամանակին (մինչև հունիսի մեկը) Զանգվի գետի ջուրը կհասցնի մինչև Գյառնի գետն ու դրանով իսկ կատարած կլինի Կենտկոմի մարտական պահանջը:

Բայց բավական չէ ջուրը հասցնել Գյառնի գետի ավազանը, անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծել հասցնել այն Ղամարլվի շրջանի դաշտերին: Ինչպես հայտնի յե, այդ տարածություններն այժմ վոռոգվում են տեղական ցանցով, վորը յերկար դարերի ընթացքում անցկացված է Գյառնի գետից: Սակայն հասկանալի յե, վոր անցկացված լինելով առանձին գյուղերի ու կալվածատերերի կողմից, անհատական տնտեսությունների սպասարկման նպատակով, այդ ցանցը՝ առաջին հերթին մանր ու մանրագույնը՝ պետք է յենթարկվի հիմնական վերակառուցման: Նույնը դժբախտաբար անհրաժեշտ է ասել և նոր կառուցված ինժեներական ջրանցքների, ինչպես Շիր-ջրանցքի, Այդրլըի, Սարդարաբադի ջրանցքի և ուրիշների մասին: Միանգամայն հասկանալի յե, վոր ամբողջ ցանցի հիմնական վերակառուցման գործը, բարդ տեխնիկա և խոշոր ներդրումներ պահանջող մի աշխատանք է: Այսոր մեր առաջ խնդիր է դրված առանձին շրջանների (Ղուրդուղուլու, Վաղարշապատի) մանր ու մանրագույն ցանցի վերակառուցման խնդիրը: Այստեղ անհրաժեշտ է նկատել, վոր այդ աշխատանքը հանգում է վորոշ դժվարության, մանավանդ այն պատճառով, վոր այդ աշխատանքը բոլորովին նոր է վոչ միայն մեր պայմաններում, այլև յեվրոպական ու այլ յերկրներում:

Յեվ այժմ, յերբ մանր ու մանրագույն ցանցի հիմնական վերակառուցման խնդիրը դրված է մեր առաջ, ինչպես անմիջապես լուծվելիք խնդիր՝ պետք է անմիջապես պարզվեն այնպիսի կարևոր ու հիմնական հարցեր, ինչպես նոր ցանցի չափը, ձևը, վոռոգվող տարածության քանակը և այլն: Դեռ մինչև այժմ վերջնականապես վորոշված չեն, թե ամեն մի վոռոգիչի սահմանում պետք է աշխատի մի՞ տրակտոր, թե՞ մի քանիսը՝ կոլոնաներով, տրակտորների թիվը կոլոնաների մեջ, կամուրջների, ճանապարհների ձևը և այլն:

Այս բոլոր հարցերը դրված է այսոր մեր ու նախ և առաջ Մեքենա-Տրակտորային Կայանների առաջ: Ինչպես հայտնի յե, համաձայն Ժողկոմխորհի վորոշման՝ մանր ու մանրագույն ցանցի սպասարկման ու

վերակառուցման գործն այժմ հանձնված է ՄՏ Կայաններին, վորոնք և պետք է անմիջապես ծավալեն անհրաժեշտ աշխատանք այդ ուղղությամբ: Պետք է այս տարի ապահովվի մոտ 7000 հեկտարի վոռոգման ցանցի վերակառուցումը Ղուրդուղուլու ու Վաղարշապատի շրջաններում: Այդ ուղղությամբ թե՛ անցյալ տարի և թե՛ այժմ աշխատանքը տարվում է Ղուրդուղուլու շրջանում, սակայն թե՛ ըստ իր վորակի և թե՛ ըստ իր տեմպի անբավարար չափով:

Այդ աշխատանքների թերակատարման պատճառներից մեկն անշուշտ հարկավոր է համարել այն, վոր տեղի կազմակերպությունները այդ կարևոր խնդրի վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել, չեն մասսայականացրել այդ ու չեն ներգրավել այդ գործի մեջ կոլտնտեսական լայն մասսաները: Անցյալ թերությունները վերացնելու, յեղած փորձն օգտագործելու համար, անհրաժեշտ է, վոր կատարված ու կատարվող աշխատանքների արդյունքները մանրամասն ուսումնասիրվեն, հաշվի առնվեն վոչ միայն գյուղատնտեսների, ջրային տնտեսության աշխատողների կողմից, այլև խորհտնտեսությունների բանվորների ու կոլտնտեսական, չքավոր ու միջակ մենատնտեսների լայն մասսաների կողմից:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ջրի հոսանքի չափին՝ խոշոր տնտեսության պայմաններում: Վերացնելով մի շարք մանր ու ավելորդ առվակներ, փոխարինելով այդպիսիներն առանձին մեծ առուներով, հնարավորություններ ու նախապայմաններ են ստեղծվելու տրակտորի աշխատանքի, գյուղատնտեսական բոլոր պրոցեսների մեքենայացման համար:

Բացի այդ՝ ցանցի վերակառուցումն ընդարձակելու է մշակվող տարածությունը, վերացվելու են մեծ քանակությամբ ավելորդ առուներ, ճանապարհներ, միջնակներ և այլն:

Այդպիսով, տեսնում ենք, վոր ջրային ցանցի վերակառուցումը, հնարավորություններ ստեղծելով գյուղատնտեսության մեքենայացման համար, միաժամանակ տալու յե նոր հողային յելույթներ ու ամենակարևորը՝ տնտեսելու յե վոռոգման ջուրը:

Ինչպես արդեն նկատեցինք, այս տարի ցանցի վերակառուցումը կատարվելու յե միայն Ղուրդուղուլու ու Վաղարշապատի շրջաններում, իսկ ինչ վերաբերում է Ղամարլվի ու Վեդիի շրջաններին, ապա այստեղ այդպիսիները կապված լինելով Ղռերի աշխատանքների հետ, կատարվելու յեն գալիք տարի:

Սակայն այժմ Ղամարլվի շրջանում շատ պետք է կատարվի յեղած վոռոգման ցանցի լայնացումը, վորպեսզի հնարավոր լինի ապահովել ընդարձակված տարածությունը: Այդ աշխատանքը, համաձայն Ժողկոմխորհի ու Կենտկոմի վորոշման (տես «Խ. Հ.»-ի № 49), պետք է ավարտված լինի մինչև մայիսի մեկը: Յեվ վորպեսզի ժամանակին ու անթերի կատարվի այդ դիրեկտիվը, այդ աշխատանքներին պետք է անմիջապես ձեռնարկել և կատարել կազմակերպված կերպով: Տեղի կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ շրջանային ջրային տնտեսությունը, կազմակերպելով կոլտնտեսականների, չքավոր ու միջակ գյուղացիների լայն մասսաները, կիրառելով գործավարձային ձևեր, պետք է ապահովի աշխատանքի ժամանակին ավարտելը:

Հետևյալ կարևոր աշխատանքը, վորով պետք է ապահովվի 1932 թ.
գարնանացանը, Փոքր Սարդարապատի ջրանցքի աշխատանքն է։

Ինչպես հայտնի յե, Փոքր Սարդարապատի ջրանցքը, վորն սկիզբ է
առնում Արաքսից՝ Ղարաղալայի մոտ կառուցված պատնեշի միջոցով,
հիմնականում ավարտված է։ Սակայն մեծ քանակությամբ անբնակ ու
անջրդի տարածության վրա, դժվարագույն յերկրաբանական պայման-
ներում անցկացված ջրանցքը իր վերջին մասում, այնտեղ, ուր նա վո-
ռոգելու յե բամբակի ու կոնսերվի խորհրդային տնտեսությունները,
հանդիպել է խոշորագույն դժվարության։ Այդտեղ 28 կիլոմետրից նա
անցնում է հրաբխային, ջուր անցկացնող շերտերի միջով ու ջրի խո-
շորագույն մասը ռուզվում ու կորչում է։ Այդ իսկ պատճառով առվի
մեջ ֆելտրացիայի պակասեցման ու կասեցման, առանց վորոշ լրացու-
ցիչ աշխատանքի՝ անհնարին է ջրանցքն այդ տարածության վրա օգտա-
գործել վոռոգման կարիքների համար։ Շինարարությունը պետք է ա-
մենակարճ ժամանակամիջոցում անհրաժեշտ աշխատանք կատարի առվի
կոլմատաժի, այսինքն՝ յեղած շերտն անթափանց շերտով փոխադր-
նելու ու բետոնով պատելու համար։

Փոքր Սարդարապատի ջրանցքն այս տարի պետք է ապահովի 3000
հեկտար նոր տարածության վոռոգումը, վորից 460 հեկտարը հատկաց-
վելու յե բամբակի։ Բացի այդ, Փոքր Սարդարապատի ջրանցքից 5-րդ
կիլոմետրի վրա սկիզբ է առնում մերձափյա առուն, վորը կտրում է
բոլոր յեղած առուները։ Ինչպես հայտնի յե, Ղուրդուղուլու շրջանի
մեծագույն մասը ծածկված է հին վոռոգման ցանցով. այդ ցանցի ա-
ռանձին առուներն ունեն իրենց առանձին գլուխները՝ «բանդեր»։ Արաքսն
ամեն տարի հեղեղվում է ու այդ «բանդերը» քանդում-տանում։ Այդ
պատճառով էլ դաշտային աշխատանքների յեռուն ժամանակ հարյու-
րավոր ու հազարավոր աշխատավոր ձեռքեր են պահանջվում առուների
«բանդերի» վերականգնման ու դաշտերը ջրով ապահովելու համար։
Այժմ, շնորհիվ հիշված մերձափյա առվի, այլևս կարիք չի լինելու ու
յեղած առուներն ստանալու յեն հիմնական ու հաստատուն ջրի սպաս-
սարկումը։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր միայն կապիտալ խոշոր շի-
նարարությամբ չէ, վոր հնարավոր է ապահովել ջրով նոր վոռոգելի
տարածությունները։ Դրանք, ճիշտ է, կազմում են նոր տարածություն-
ներ ընդգրկելու հիմնական, հաստատուն մի ուղի, վորն իրավացիորեն
գրավում է խորհրդային իշխանության ամենամեծ ուշադրությունը,
սակայն բամբակի ու այլ տեխնիկական մշակույթների նոր յելույթները
հնարավոր է ստանալ և մանր շինարարությամբ ու եքսպլոատացիոն ջրօ-
գտագործման աշխատանքները կատարելով։

Մանր շինարարության միջոցով անհամեմատ ավելի պակաս ներ-
դրումներով, և վորը կարևորն է, ավելի կարճ ժամանակամիջոցում
կարելի յե ստանալ նոր հողային տարածություններ։ Մեր դաշտավայ-
րում մենք ունենք մի շարք առանձին, նույնիսկ հաճախ բավականին
մեծ տարածություններ, վորոնք մի շարք պատճառներով մնում են ա-
ռանց օգտագործման։ Այդ տարածությունները հնարավոր է պիտանի
դարձնել բամբակի ու այլ տեխնիկական կուլտուրաների համար, կա-
տարելով անհրաժեշտ մելիորատիվ աշխատանքներ՝ նրանց չորացման

կամ վոռոգման ուղղությամբ։ Այս տարի այդպիսի աշխատանքներ կա-
տարվում են Նարիմանլվի ճահիճների չորացման ու նրանց բամբակի
համար պիտանի դարձնելու ուղղությամբ։ Այդ աշխատանքները ձեռ-
նարկվել են աշնանն ու նրանց վորոշ մասն արդեն կատարված է — այժմ
ամենաուժեղ կերպով նրանք տարվում են, վորպեսզի մինչև ապրիլի
15-ն ավարտվեն ու ապահովեն նոր 500 հեկտար բամբակի յելույթները։
Այդ աշխատանքները, բացի վոռոգման տեսակետից, շատ կարևոր են և
առողջապահական տեսակետից։ Բավականի մեծ տարածությամբ ճա-
հիճների չորացմամբ, ջրհավաք և կոլեկտորային ցանցի անցկացմամբ
բավականին զգալի չափով կասեցվելու յե մալարիայի վտանգը։ Այստեղ
անհրաժեշտ է չեշտել, վոր գարնանացանի ու առհասարակ բամբակագոր-
ծության հետ կապված աշխատանքների շարքում անշուշտ կարևոր ու-
շադրություն պետք է գրավի մալարիայի դեմ պայքարը։ Այդ պայքարին
պետք է լծվեն ու ամենամոտիկ մասնակցություն պետք է ունենան ջրը-
տնտեսության աշխատավորները։ Մեր դաշտային պայմաններում, ուր
զգալի տարածություններ կամ ծածկված են ճահիճներով կամ վատ ջրօգ-
տագործման հետևանքով հեշտությամբ ճահճանում են, հիդրոտեխնի-
կական, մելիորատիվ ու ջրօգտագործման աշխատանքները պետք է ան-
պայմանորեն միաժամանակ նպատակ ունենան մալարիայի դեմ պայ-
քարը։

Մի շարք մանր շինարարական աշխատանքներ տարվում են և մյուս
շրջաններում — Ղուրդուղուլու շրջանի Գեչրլվի հողամասի առողջացման
նպատակով, Հասանլվի, Թանչպարի մոտ 400 հեկտար տարածություն-
ներ (Վաղարշապատի շրջան) և այլն։

Այստեղ անհրաժեշտ է սակայն նկատել մի կարևոր հանգամանք,
վորի վրա հատուկ ուշադրություն եր հրավիրում ընկ. Խանջյանը
8-րդ համագումարում, իր զեկուցման մեջ — դա վոռոգման յենթարկ-
վող հողերի թե՛ գյուղատնտեսական և թե՛ մելիորատիվ յուրացման
աշխատանքն է։ Մենք ունենք մի շարք օրինակներ մի շարք վայրերում,
ուր կատարվել են բավական մեծ վոռոգման աշխատանքներ, բայց
նրանք մինչև օրս չեն օգտագործվում, չեն յուրացվում։ Նոր շինարա-
րությունների համար հատկացվում են բավական մեծ ներդրումներ,
իսկ յեղած ու նոր ստացվող հողամասերի յուրացումը մատնված է լի-
նում անուշադրության։

Բանն այն է, վոր մենք ունենք մի շարք տարածություններ, այս-
պես կոչված «չիմաններ», վորոնք բացի վոռոգման աշխատանքից, պա-
հանջում են և յուրացման աշխատանքներ։ Առանց վերջինի անհնարին
է այդ հողամասերը պիտանի դարձնել բարձր տեխնիկական կուլտու-
րաների համար։ Իսկ այդ աշխատանքից բոլոր տնտեսական հիմնարկու-
թյունները խուսափում են՝ մոռանալով, վոր առանց յուրացման աշ-
խատանք կատարելու, դժվար է, կամ նույնիսկ անհնար է ստանալ նոր
պիտանի տարածություններ։ Յուրացման աշխատանքները պետք է
գրավեն նույնպիսի ուշադրություն, ինչպիսի ուշադրություն գրավում
են վոռոգման շինարարական աշխատանքները։ Պերճախոս օրինակներից
մեկը մեզ մոտ հանդիսանում է Եվջիլարի ջրանցքը, վորն, ինչպես հայտ-
նի յե, կառուցված է յեղել 1924–25 թ.թ., սակայն մինչև օրս վոչ միայն
չի օգտագործվում, այլ նույնիսկ տարեցտարի վատթարանում է։ Ջնա-

յած մի շարք վորոշումների՝ այդ աշխատանքը մնում է անկատար թե՛ ջրային տնտեսության և թե՛ մանավանդ Հողժողկոմատի անուշադիր վերաբերմունքի հետևանքով: Այդ մասիվի ջրատերի մանրամասն ուսումնասիրությունը միայն նորերս է վերջացել ու այս տարի պետք հետևաբերվեն աղբացած ջրատերի լվացման աշխատանքը՝ 1933 թվի համար նոր տարածություններ պատրաստելու: Նույնն անհրաժեշտ է անել նաև վերջերս կառուցված Ջիլիխանլվի, Հասանլվի, Ռանչպարի և այլ ջրհանների վերաբերյալ, ուր միայն վոռոգվող ջրով ապահովված տարածությունների մի մասն է միայն վոռոգվում: 1932 թվի ռամբակի ու այլ տեխնիկական բույսերի տարածությունը ջրով ապահովելու համար պայքարելով, անհրաժեշտ է միաժամանակ ձեռնամուխ լինել յուրացման աշխատանքներին՝ 1933 թվին նոր տարածություններ ստանալու նպատակով:

Պետք է չնշել մի կարևոր հանգամանք ևս: Մանր շինարարության աշխատանքները սովորաբար կատարվում են հապճեպ, առանց անհրաժեշտ ուսումնասիրությունների ու նախապատրաստական աշխատանքների, վորի հետևանքով նրանք ունեն զգալի թերություններ: Այդ թերությունները վերացնելու համար այս տարի նախապատրաստված է ուժեղացնել 1933 թվի նախապատրաստական աշխատանքներին, վորի համար հատկացված է 200·000 ռուբլի: Հարկավոր է նույնպես չնշել, վոր բավական աշխատանք ունենք կատարելու նախալեռնային ու լեռնային շրջաններում մանր շինարարության գծով, սակայն նրանց վրա կանգ չենք առնում, քանի վոր այս հոդվածը շոշափում է բամբակի ցանքը ջրով ապահովելու խնդիրները:

Նոր շինարարության (կապիտալ ու մանր) զուգընթաց, մեծ ուշադրություն պետք է դարձվի յեղած ջրային ցանցի կարգավորման ռացիոնալ օգտագործման, ջրի տնտեսման, նրա պլանային ու լրիվ հաշվման վրա: Այդ մի կարևորագույն գործ է, վորով հնարավոր է համեմատաբար թեթև միջոցառումներով ստանալ բավական զգալի եֆեկտներ: Այդ աշխատանքի վրա պետք է գրել վոչ միայն ջրային ու ՄՏ կայանների աշխատողների, այլև շրջանային կուսակցական, խորհրդային, կոմյերիտական, պրոֆեսիոնալ կազմակերպությունների, կոլտնտեսությունների, հքավոր ու միջակ մենատնտեսների, մի խոսքով լայն մասսաների ուշադրությունը: Ջրօգտագործման, վոռոգման խնդիրները խոշոր քաղաքական-տնտեսական նշանակություն ունեցող հարցեր են: Այդ բանի վրա սրում է ուշադրությունը ՀամԿ(բ)Կ կենտկոմն իր պատմական հոկտեմբերյան վորոշման մեջ, մատնանշելով՝

«Վճռաբար բարելավել գոյություն ունեցող վոռոգիչ սիստեմը (մաքրել և կարգի բերել ջրային ուղիները, վերասարքավորել և մեքենայացնել ջրհանները, կազմակերպել ջրահավաքի սիստեմը) և այլն»:

Կենտկոմի այդ մարտական պահանջը պետք է ուղեցույց դառնա մեզ համար, նրա հիման վրա ջրօգտագործման կանոնավորման մեջ պետք է անհրաժեշտ բեկում առաջ բերել:

Օրվա գլխավոր լոզունգներից մեկը պետք է լինի. «Ցերեկները գետի ջուր»: Ջրային ամեն մի պաշար պետք է հաշվի առնվի, տնտեսվի ու ռացիոնալ օգտագործվի: Ամեն մի կոլտնտեսական, ամեն մի աշխա-

տավոր պետք է լավ հիշի, վոր տնտեսված յուրաքանչյուր լիտր ջուրը տալիս է տեխնիկական բույսերի մշակության լրացուցիչ տարածություն, վորն այնքան անհրաժեշտ է սոցիալիստական գյուղատնտեսության և որավուր աճող արդյունաբերության:

Այդ ուղղությամբ մենք ունենք մեծ անելիքներ, ինչպես ցույց են տալիս փորձերն ու դիտողությունները, մեր ունեցած վոռոգման ցանցը ունի մեծ հնարավորություններ, վոր պետք է հայտաբերել ու օգտագործել:

Միաժամանակ վոռոգման հին ցանցը շատ վատ է օգտագործվում մեծ քանակությամբ ջուր է փչանում թե՛ ցանցի վատ սպասարկման, օգտագործման և թե՛ անկանոն, անփույթ ջրման հետևանքով՝ մեծ վնասներ պատճառելով շրջակա տարածություններին:

Բոլոր միջոցները պետք է ձեռք առնել լրիվ օգտագործելու ցանցի հնարավորությունները, կարգի բերելու այն, ավելացնելու նրա ջրատարողությունը, պակասեցնելու ջրի կորուստները ցանցի մեջ, ժամանակին ու համապատասխան նորմայով ու յեղանակով ջրելու, դաշտի մշակությունը խնամքով կատարելու, ուժեղացնելով պայքարը ջրի անտնտեսավարական ու ռացիոնալ օգտագործման համար: 1932 թ. և հետագա տարիների ցանքերի լրիվ ջրով ապահովելու համար անհրաժեշտ է հենց այս ուղղությամբ ուժեղացնել աշխատանքը:

Մի յերկու խոսքով կանգ առնենք այն միջոցառումների վրա, վորով հնարավոր է կարգի բերել յեղած ցանցը, վերասարքավորել այն:

Ինչպես հայտնի յե, վոռոգման ցանցն ինքնին մի բարդ տեխնիկական կառուցվածք է, վորի նպատակն է ջրաղբյուրներից (գետերից, լճերից և այլն) հատուկ միջոցներով ու կառուցումներով ջուրը հասցնել մինչև վոռոգվելիք տարածությունը՝ այնտեղ մշակվող բույսերին ջուր հասցնելու համար: Վոռոգման նպատակն է հողաշերտին ու մշակվող կուլտուրաներին տալ անհրաժեշտ քանակությամբ ու պահանջված ժամանակին պետք յեղած խոնավությունը:

Իր նպատակին հասցնելու համար գետից ջուրը մայր առվի (մագիստրալի) միջոցով բերվում է դեպի վոռոգելիք տարածությունն ու հատուկ առուների միջոցով բաժանվում է ըստ առուների վոռոգելի հողամասերին ու մանր-մանրագույն ցանցի միջոցով տրվում է վոռոգվող դաշտերին ու այդպիսով դառնում հողաշերտի խոնավություն: Այդպիսով, տեսնում ենք, վոր մինչև ջրելու տեղը հասնելը, ջուրն անցնում է յերկար տարածություն՝ մի շարք առուների միջով. հաճախ այդ տարածությունը հավասար է լինում տասնյակ կիլոմետրների ու այդքան յերկար տարածությունն անցնելով, տեղի յե ունենում ջրի զգալի կորուստ: Հայտնի յե, վոր առուներն անցնում են տարբեր ջուր ծծող ու չծծող շերտերի միջից, ուր և տեղի յե ունենում ջրի ստցումը:

Բացի այդ, ջրի բավական մեծ քանակությունը կորչում է ցանցի վատ օգտագործման հետևանքով: Առուների անխնամ պահելու՝ լավ չմաքրելու ու վատ օգտագործելու պատճառով, ջուրը հաճախ քանդում է առուների թմբերն ու կորչում-փչանում է և դրանով էլ զգալի չափով նվազում է ցանցի օգտագործելիությունը: Ցանցի վատ օգտագործման, ջրօգտագործողների անփույթ, հաճախ հանցավոր վերաբերմունքի հետևանքով մեծ քանակությամբ ջուր կորչում է՝ խոշոր վնասներ հասց-

յած մի շարք վորոշումների՝ այդ աշխատանքը մնում ե անկատար թե՛ ջրային տնտեսության և թե՛ մանավանդ Հողժողկոմատի անուշադիր վերաբերմունքի հետևանքով: Այդ մասիվի շերտերի մանրամասն ուսումնասիրությունը միայն նորերս ե վերջացել ու այս տարի պետք ձեռնարկվեն աղբացած շերտերի լվացման աշխատանքը՝ 1933 թվի համար նոր տարածություններ պատրաստելու: Նույնն անհրաժեշտ ե անել նաև վերջերս կառուցված Զիլիխանլվի, Հասանլվի, Ռանչպարի և այլ ջրհանների վերաբերյալ, ուր միայն վոռոգվող ջրով ապահովված տարածությունների մի մասն ե միայն վոռոգվում: 1932 թվի բամբակի ու այլ տեխնիկական բույսերի տարածությունը ջրով ապահովելու համար պայքարելով, անհրաժեշտ ե միաժամանակ ձեռնամուխ լինել յուրացման աշխատանքներին՝ 1933 թվին նոր տարածություններ ստանալու նպատակով:

Պետք ե չեշտել մի կարևոր հանգամանք ևս: Մանր շինարարության աշխատանքները սովորաբար կատարվում են հապճեպ, առանց անհրաժեշտ ուսումնասիրությունների ու նախապատրաստական աշխատանքների, վորի հետևանքով նրանք ունեն զգալի թերություններ: Այդ թերությունները վերացնելու համար այս տարի նախապատրաստված ե այժմյանից անցնել 1933 թվի նախապատրաստական աշխատանքներին, վորի համար հատկացված ե 200·000 ռուբլի: Հարկավոր ե նույնպես չեշտել, վոր բավական աշխատանք ունենք կատարելու նախալեռնային ու լեռնային շրջաններում մանր շինարարության գծով, սակայն նրանց վրա կանգ չենք առնում, քանի վոր այս հոդվածը շոշափում ե բամբակի ցանքը ջրով ապահովելու խնդիրները:

Նոր շինարարության (կապիտալ ու մանր) զուգրնթաց, մեծ ուշադրություն պետք ե դարձնի յեղած ջրային ցանցի կարգավորման ռացիոնալ ոգտագործման, ջրի տնտեսման, նրա պլանային ու լրիվ հաշվման վրա: Այդ մի կարևորագույն գործ ե, վորով հնարավոր ե համեմատաբար թեթև միջոցառումներով ստանալ բավական զգալի եֆեկտներ: Այդ աշխատանքի վրա պետք ե սրել վոչ միայն ջրային ու ՄՏ կայանների աշխատողների, այլև շրջանային կուսակցական, խորհրդային, կոմյերիտական, պրոֆեսիոնալ կազմակերպությունների, կոլտնտեսությունների, չքավոր ու միջակ մենատնտեսների, մի խոսքով լայն մասաների ուշադրությունը: Ջրոգտագործման, վոռոգման խնդիրները խոշոր քաղաքական-տնտեսական նշանակություն ունեցող հարցեր են: Այդ բանի վրա սրում ե ուշադրությունը ՀամԿ(բ)Կ Կենտկոմն իր պատմական հոկտեմբերյան վորոշման մեջ, մատնանշելով՝

«Վճռաբար բարելավել գոյություն ունեցող վոռոգիչ սիստեմը (մաքրել և կարգի բերել ջրային ուղիները, վերասարքավորել և մեքենայացնել ջրհանները, կազմակերպել ջրահավաքի սիստեմը) և այլն»:

Կենտկոմի այդ մարտական պահանջը պետք ե ուղեցույց դառնա մեզ համար, նրա հիման վրա ջրոգտագործման կանոնավորման մեջ պետք ե անհրաժեշտ բեկում առաջ բերել:

Օրվա գլխավոր լոզունգներից մեկը պետք ե լինի. «Յերեսներս դեպի ջուր»: Ջրային ամեն մի պաշար պետք ե հաշվի առնվի, տնտեսվի ու ռացիոնալ ոգտագործվի: Ամեն մի կոլտնտեսական, ամեն մի աշխա-

տավոր պետք ե լավ հիշի, վոր տնտեսված յուրաքանչյուր լիտր ջուրը տալիս ե տեխնիկական բույսերի մշակության լրացուցիչ տարածություն, վորն այնքան անհրաժեշտ ե սոցիալիստական գյուղատնտեսության և որավուր աճող արդյունաբերությանը:

Այդ ուղղությամբ մենք ունենք մեծ անելիքներ, ինչպես ցույց են տալիս փորձերն ու դիտողությունները, մեր ունեցած վոռոգման ցանցը ունի մեծ հնարավորություններ, վոր պետք ե հայտաբերել ու ոգտագործել:

Միաժամանակ վոռոգման հին ցանցը շատ վատ ե ոգտագործվում մեծ քանակությամբ ջուր ե փչանում թե՛ ցանցի վատ սպասարկման, ոգտագործման և թե՛ անկանոն, անխնայի ջրման հետևանքով՝ մեծ վնասներ պատճառելով շրջակա տարածություններին:

Բոլոր միջոցները պետք ե ձեռք առնել լրիվ ոգտագործելու ցանցի հնարավորությունները, կարգի բերելու այն, ավելացնելու նրա ջրատարողությունը, պակասեցնելու ջրի կորուստները ցանցի մեջ, ժամանակին ու համապատասխան նորմայով ու յեղանակով ջրելու, դաշտի մշակությունը խնամքով կատարելու, ուժեղացնելով պայքարը ջրի տնտեսավարական ու ռացիոնալ ոգտագործման համար: 1932 թ. և հետագա տարիների ցանքերի լրիվ ջրով ապահովելու համար անհրաժեշտ ե հենց այս ուղղությամբ ուժեղացնել աշխատանքը:

Մի յերկու խոսքով կանգ առնենք այն միջոցառումների վրա, վորով հնարավոր ե կարգի բերել յեղած ցանցը, վերասարքավորել այն:

Ինչպես հայտնի յե, վոռոգման ցանցն ինքնին մի բարդ տեխնիկական կառուցվածք ե, վորի նպատակն ե ջրաղբյուրներից (գետերից, լճերից և այլն) հատուկ միջոցներով ու կառուցումներով ջուրը հասցնել մինչև վոռոգվելիք տարածությունը՝ այնտեղ մշակվող բույսերին ջուր հասցնելու համար: Վոռոգման նպատակն ե հողաշերտին ու մշակվող կուլտուրաներին տալ անհրաժեշտ քանակությամբ ու պահանջված ժամանակին պետք յեղած խոնավությունը:

Իր նպատակին հասցնելու համար գետից ջուրը մայր առվի (մագիստրալի) միջոցով բերվում ե դեպի վոռոգելիք տարածությունն ու բաժանվում ե ըստ առուների վոռոգելի հո-հատուկ առուների միջոցով ղամասերն ու մանր-մանրագույն ցանցի միջոցով տրվում ե վոռոգվող դաշտերին ու այդպիսով դառնում հողաշերտի խոնավություն: Այդպիսով, տեսնում ենք, վոր մինչև ջրելու տեղը հասնելը, ջուրն անցնում ե յերկար տարածություն՝ մի շարք առուների միջով. հաճախ այդ տարածությունը հավասար ե լինում տասնյակ կիլոմետրների ու այդքան յերկար տարածությունն անցնելով, տեղի յե ունենում ջրի զգալի կորուստ: Հայտնի յե, վոր առուներն անցնում են տարբեր ջուր ծծող ու չծծող շերտերի միջից, ուր և տեղի յե ունենում ջրի ծծումը:

Բացի այդ, ջրի բավական մեծ քանակությունը կորչում ե ցանցի վատ ոգտագործման հետևանքով: Առուների անխնամ պահելու՝ լավ չմաքրելու ու վատ ոգտագործելու պատճառով, ջուրը հաճախ քանդում ե առուների թմբերն ու կորչում-փչանում ե և դրանով էլ զգալի չափով նվազում ե ցանցի ոգտագործելիությունը: Ցանցի վատ ոգտագործման, ջրոգտագործողների անխնայի, հաճախ հանցավոր վերաբերմունքի հետևանքով մեծ քանակությամբ ջուր կորչում ե՝ խոշոր վնասներ հասց-

ներով շրջակայքին, ճահճացնելով այն, պակասեցնելով վոռոգվող ջրի քանակը, նույնիսկ կեսից պակաս, այսինքն՝ ջրապահեստներից միայն ջրի կեսն է հասնում և ոգտագործվում վոռոգելի տարածությունը:

Փորձերն ու դիտողությունները ցույց են տալիս, վոր յերբ մենք մեր ունեցած ցանցի ոգտակար գործունեյությունը (վորը միջին թվով հավասար է 0,50—0,60) բարձրացնենք միայն 10 տոկոսով, վոր հեշտ է հնարավոր կլինի միայն ցանցի ուշադիր ու խնամքով պահպանման դեպքում, մենք միայն դաշտավայրում կարող ենք ապահովել տեխնիկական կուլտուրաների լրացուցիչ տարածություններ մինչև 7–8 հազար հեկտարի տարածությունով: Ցանցի ջրատարողությունը բարձրացնելու համար, վորն այնքան կարևոր է, անհրաժեշտ է ինչպես չեշտում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմն իր վորոշման մեջ՝ «կարգի բերել ու մաքրել ջրային ցանցը»: Առուների մաքրման վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, մանավանդ մարտ ամսվա ընթացքում, վորը հանդիսանալու յե առուների մաքրման հարվածային ամիս: Այդ ամսում պետք է կարգի բերվի բամբակագործական շրջանների վոռոգիչ ցանցը: Անհրաժեշտ է խոշորագույն ուշադրություն դարձնել ցանցի մաքրման վորակի վրա: Առուները պետք է մաքրվեն վոչ միայն ձևականորեն, ինչպես հաճախ պատահել է մեզ մոտ անցյալում, այլ հատուկ ուշադրություն պետք է դարձնել մաքրման ու առուների նորոգման վորակի վրա: Վերանորոգման ու մաքրման աշխատանքները պետք է դառնան կուսակցական, խորհրդային, կոմյերիտական, պրոֆեսիոնալ ու կոլտնտեսական կազմակերպությունների աշխատանքների կենտրոնը: Այստեղ անհրաժեշտ է չեշտել, վոր հաճախ այդ աշխատանքը թերագնահատվում է տեղի կազմակերպությունների կողմից՝ «շրջանային կուսակցական և խորհրդային օրգանները սովորություն են դարձրել ինչքան կարելի յե հեռու մնալ ջրաշինարարական աշխատանքների կոնկրետ ղեկավարումից» (*Խանջյան*): Իսկ այդպիսի խոշոր քաղաքական-տնտեսական նշանակություն ունեցող աշխատանքը, ինչպես վոռոգման ցանցի կարգի բերելն է, պահանջում է շրջանային կազմակերպություններից. «վերևից մինչև ներքև ուժեղացնել ղեկավարությունը ջրաշինարարական աշխատանքների նկատմամբ. կուսակցական ու հասարակական կազմակերպությունները պետք է մտնեն այս աշխատանքներին այնպես, ինչպես նրանք մոտից հետևում են առանձին գործարանների արդֆինպլանների կատարման ընթացքին, և այս աշխատանքներում նույնպես ապահովեն ստալինյան ցուցմունքների անշեղ կենսագործումը, շին. պլանների լրիվ կատարումը» (*Խանջյանը*)*):

Անհրաժեշտ է հիշել, վոր ցանցն առանց կարգի բերելու, ամբողջ վոռոգման սեզոնի ընթացքում այն կանոնավոր պահպանելու, անհնար է ջրով ապահովել բամբակի դաշտերը: Առուների մաքրումը, վորը կատարվում է կոլտնտեսականների, չքավոր ու միջակ մենատնտեսների կողմից, պետք է կազմակերպված ձևով տարվի, լրիվ կիրառելով գործավարձային ձևն ու ընկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքները: ԼԿՑԵՄ Կենտկոմը, համաձայն ՀայԿ(բ)Կ Կենտկոմի վորոշման, բամբակագործական բոլոր շրջաններում պետք է կազմակերպի կոմյերիտական արշավ՝ վոռոգիչ ցանցը մաքրելու համար: Սակայն այստեղ անհրաժեշտ է չեշտել, վոր ԼԿՑԵ Միությունը վոչ միայն պետք է դուրս գա ժամանակավոր արշավի, այլև վերցնի իր վրա առուների լավ պահպանման, լավ ոգտագործման մշտական շեֆությունը: Կոմյերիտմիությունը պետք է այստեղ ևս լինի առաջավոր դիրքերում ու մշտական պայքար մղի ջրի տնտեսման ու նպատակահարմար ոգտագործման համար:

*) ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 8-րդ համագումարում, եջ 61:

Մի կարևոր հանգամանքի վրա ևս անհրաժեշտ է սրել ուշադրությունը: Բավական չէ ապահովել վոռոգման ջրով, անհրաժեշտ է վոռոգումը կատարել ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ: Միայն դրանով հնարավոր է բարձրացնել բերքատվությունը, ապահովել բերքի քանակն ու վորակը: Անցյալ տարվա փորձը, յերբ բամբակի մշակության բոլոր պրոցեսները, բոլոր աշխատանքները, ի միջի այլոց և վոռոգումը չեյին կատարվել ժամանակին, չեյին ապահովվել համապատասխան վորակական ցուցանիշներով, պետք է մեզ համար ծառայի լավագույն որինակ ու դաս:

Բամբակի մշակության բոլոր պրոցեսները (քաղհանը, կուլտիվացիան և այլն) ու վոռոգումը պետք է կատարվեն ժամանակին ու պլանային կարգով: Անհրաժեշտ է հիշել, վոր քաղհանի ուշացումն անմիջապես անդրադառնում է ջրելու ժամկետների վրա, վորն ուղղակի կործանարար նշանակություն կարող է ունենալ:

Այդ խնդրի վրա մանավանդ հատուկ ուշադրություն պետք է դարձնեն Մեքենատրակտորային կայանները, վորոնք կազմակերպում ու ղեկավարում են բամբակի մշակության բոլոր պրոցեսները. նրանք պետք է ղեկավարեն նաև վոռոգման ցանցը, քանի վոր համաձայն Կենտկոմի ու Ժողկոմխորհի վորոշման՝ նրանց է հանձնված մանր ու մանրագույն ցանցի ոգտագործումը:

Զուգորդելով գյուղատնտեսական բոլոր պրոցեսները, հատուկ ուշադրություն դարձնելով կուլտուրական հողագործության ու ջրոգտագործման կիրառման, ապահովելով այդ աշխատանքները վորակական ցուցանիշներով, հնարավոր կլինի վոչ միայն ջրով ապահովել բոլշևիկյան յերրորդ գարնանացանը, այլև հնարավոր կլինի բարձրացնել բամբակի բերքատվությունը: Ինչ պայմանով էլ լինի, պետք է ապահովել պլանային ռացիոնալ ջրօգտագործումն ու բամբակի վորակյալ մշակությունը: Առանձին ուշադրություն անհրաժեշտ է դարձնել և ջրելու յեղանակների վրա՝ ըստ հնարավորության մտցնելով ջրելու ակոսային յեղանակը, վորը պահանջում է անհամեմատ պակաս քանակությամբ ջուր: Այդ յեղանակի միջոցով ավելի հավասար ու համապատասխան ձևով է բաշխվում խոնավությունը:

Մենք այստեղ հնարավորություն չունենք կանգ առնելու բոլոր կարևոր հանգամանքների վրա. կչեշտենք միայն, վոր ջրոգտագործման մեջ ևս անհրաժեշտ է մտցնել վորոշ տնտեսաշիվ: Մեզ մոտ ամեն բան հաշվի յե առնվում ու չափվում, միայն վոռոգման ջուրը, վորը միաժամանակ մեր պայմաններում բավական դեֆիցիտային է, չի չափվում, հաշվի չի յենթարկվում: Անհրաժեշտ է վոռոգման ջուրը բաշխել չափով. այդպիսով վոչ միայն կտնտեսվի ջուրը, այլև հնարավո-

բություն կատեղծվի բույսը ջրելու անհրաժեշտ քանակությամբ: Այն ախալ ու վնասակար կարծիքը, որ ավելորդ ջուրն օգտավետ է, պետք է վերացվի: Համաձայն յեղած դիտողությունների, սահմանված նորմայից ավելի ջուր տալը վնասակար ազդեցություն է ունենում ու իջեցնում է բերքատվությունը: Բացի այդ, ավելորդ քանակությամբ ջուրը, մանավանդ հին ցանցերում, վորտեղ չկան ջրահավաք առուներ, սողվելով խորքերն ու այդպիսով առաջանում է հողաշերտերի ճահճացում: Արարատյան դաշտի ճահիճների մեծ մասն առաջացել են հենց այդ պատճառով՝ ջրօգտագործման վատ, անփույթ և նույնիսկ հանցավոր կերպով կիրառելու հետևանքով:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար բացի վոռոգման ջրից, խոշոր նշանակություն ունի և խմելու ջրի խնդիրը, վորը մանավանդ շատ սուր է դրված Արարատյան դաշտի բամբակացան շրջաններում: Ինչպես հայտնի յե, բամբակացան շրջանները զուրկ են լավ տեսակի խմելու ջրից, նրանք մեծ մասամբ սախպված են օգտվելու առուների կեղտոտ ջրերից: Ցեվ յեթե վոռոգման ջրի վրա դարձնում ենք բավական մեծ ուշադրություն, կատարվում են աշխատանքներ, ապա մինչ այժմ խմելու ջրի վրա; կարելի յե ասել, վոչ մի ուշադրություն չի դարձվել: Յեթե այդ հարցի դրական լուծումը մինչ այժմ հանդիպում եր խոշոր դժվարությունների, ապա այժմ համատարած կոլեկտիվացումն ստեղծում է անհրաժեշտ նախապայմաններ՝ հարցի հաջող լուծման համար: Անհրաժեշտ է ուսումնասիրել յեղած ջրամատակարարման աղբյուրները, նրանց վորակն ու դրությունը: վարակված ու վատորակ ջրադբյուրները պետք է փակվեն, արգելվեն գործածության համար: Իսկ մյուսների գործածությունն էլ պետք է դնել կանոնավոր առողջապահական հիմքերի վրա:

Կոլտնտեսությունները, շրջանային կազմակերպությունները պետք է ընդհուպ մոտենան ջրամատակարարման լավացման ու կանոնավորման կարևոր խնդիրներին, ու միջոցներ ձեռք առնեն խմելու ջրի խնդիրը լուծելու համար:

Այս տարի այդ ուղղությամբ արդեն առաջացել է վորոշ բեկում: Մի շարք շրջաններում կատարվում են ջրամատակարարման աշխատանքներ, սակայն դրանք դեռ բավական չեն: Այնտեղ, ուր անհնարին է բերել լավ վորակի մաքուր ջուր կամ ստանալ այն հասարակ ու արտեզյան ջրհորների միջոցով, պետք է առուների ջրերը մաքրել ֆիլտրների միջոցով:

Ֆիլտրները, վորոնք իրենցից ներկայացնում են ջրի մաքրման համար վորոշ կահավորում, հեշտությամբ հնարավոր է գործի քցել մեր կոլտնտեսություններում և գյուղական բնակավայրերում ու դրանով իսկ առողջացնել, անվնաս դարձնել առուների կեղտոտ ջուրը:

Առանձին հոգսի ու ուշադրության առարկա պետք է լինի մեզ մոտ նույնպես և ջրհանները, վորոնց միջոցով, ինչպես հայտնի յե, վոռոգվում է մի քանի հազար հեկտար բամբակի տարածություն Վեդիի ու Ղամարլվի շրջաններում, Այգր-լճի ելեկտրոջրհան կայանը, վորն իր մեծությամբ ու կարևորությամբ հատուկ տեղ է բռնում: Անհրաժեշտ է ջրհանների աշխատանքը դնել ավելի կանոնավոր հիմքերի վրա ու ըստ հնարավորության օգտագործել նրանց նաև ձմեռվա ամիսների ընթաց-

քում: Նրանց կարելի յե օգտագործել շրջակա գյուղերի ելեկտրական լուսավորության համար և թե մատուռաղացների համար՝ այս հանգամանքը շատ կարևոր է և պետք է նկատի ունենալ, քանի վոր շրջակա գյուղերը զուրկ են ջրաղացներից: Ինչ վերաբերում է Այգր-լճին, նկատի ունենալով նրա ուժեղ ու կարևոր, սարքավորումը, հնարավոր է ձմեռվա ամիսների ընթացքում օգտագործել այն ինչպես տաքացնող ուժ սածիլավոր բամբակի ջերմոցների համար: Այդ խնդիրների մանրամասնությունների վրա այստեղ կանգ չենք առնում, սակայն անհրաժեշտ ենք համարում այդ խնդրի շուրջը հրավիրել համապատասխան չահագրգռված հիմնարկների ուշադրությունը: Մանավանդ, վոր մի շարք գետափյա տարածություններ, ինչպես Ն. Ախտալու (Ֆասսախմոտ), Շորլի-Դեմրչի, Նեջըլու (Զանգիբասար) և այլն վաղ գարնանը գետերի հեղեղման պատճառով ծածկվում են ջրով, ժամանակին չեն կարող օգտագործվել սովորական բամբակի համար: Այդ տարածությունները, վորոնք ազատվում են ջրից մայիսի 10–15-ին, հնարավոր է օգտագործել սածիլավոր բամբակի մշակությամբ, վորոնք հնարավոր է մեծացնել Այգր-լճի կահավորման հիման վրա՝ ջերմոցներում:

Այսպիսով, կատարելով Կենտկոմի մարտական դիրեկտիվները ջրավոռոգման ցանցի կարգավորման մասին, կիրառելով ստալինյան պատմական վեց ցուցմունքները, 1931 թվի բամբակի կամպանիայից համապատասխան դասեր առնելով, առավելագույն չափով օգտագործելով բոլոր յեղած հնարավորությունները, կիրագործենք կուսակցության ու խորհրդային իշխանության մարտական լոզունգը՝ բամբակի անկախություննն ապահովելու ու Անդրկովկասը յերկրորդ հնդամյակում ԽՍՀՄ բամբակի յերկրորդ հիմնական բազա դարձնելու մասին:

Ի՞ՆՉ Է ԱՐՎԱԾ ՅԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ

ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԻ ՎՈՌՈԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Խորհրդային իշխանությունը ցարական իշխանությունից, իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմներից և դաշնակների տիրապետությունից ժառանգություն ստացավ քայքայված, տնտեսապես ուժասպառ մի յերկիր և սովյալ ազգաբնակություն: Բնական է, վոր այդ պայմաններում գյուղացիությունն ի վիճակի չեր խնամելու կամ պահպանելու անգամ այն պրիմիտիվ վոռոգիչ ցանցը, վոր կար այն ժամանակ:

Դաշնակների տիրապետությունն ե՛լ ավելի սաստկացրեց ժողովրդական տնտեսության քայքայումը և կատարելապես անշահագործելի դարձրեց վոռոգիչ սիստեմը:

Համեմատելով Հայաստանի դաշտային շրջանի վոռոգվող հողերի տարածությունը մինչպատերազմյան շրջանում և դաշնակների տիրապետության ժամանակ, կստանանք հետևյալ պատկերը՝

Դաշտային շրջանի վոռոգվող տարածությունը 1914 թվին կազմում եր 69.920 հեկտար, 1921 թվականին՝ 45.000 հեկտար, այլ խոսքով՝ դաշնակների ժամանակ վոռոգվող տարածությունը կրճատվել եր 35 տոկոսով:

Խորհրդային իշխանության հենց առաջին որից, կառավարության առաջ ծառացավ յերկրի ջրային տնտեսությունը վերականգնելու հարցը:

Բացի վերականգնման աշխատանքներից, դեռևս 1922 թվականից ձեռնարկվել է նոր վոռոգիչ ցանցի կառուցման (Շիրակի ջրանցքը, Փոքր Սարդարաբադի ջրանցքը, Այգր-լճի ելեկտրաջրհան կայանը՝ Եջմիածնի հողերը վոռոգելու համար, Նորճևանի ջրանցքը):

Առաջին աշխատանքներն են կազմել Եջմիածնի ջրանցքի ավարտումը (1922 թվի մայիսի մեկից մինչև 1923 թվականի մայիսի մեկը), նախապես 1100 հեկտար հող վոռոգելու համար: Դրա վրա ծախսված եր 83.000 ռուբլի: 1928 թվականին, վոռոգելի հողերի տարածությունն ավելացնելու նպատակով ջրանցքն ընդարձակվեց և նրա վոռոգելիք հողերի տարածությունը հասցվեց 1700 հեկտարի, վորից 930 հեկտարը բամբակի համար:

1932 թվականի հոկտեմբերին սկսվեց Եվջիլարի ջրանցքի կառուցումը, վորն ավարտվեց 1924 թվականին: Այդ ջրանցքը պետք է վոռոգեր 1600 հեկտար հող, սակայն վոռոգման հնարավորությունները հարկ յեղած ձևով չոգտագործվելու հետևանքով լրացուցիչ մելիորացիա չե պահանջվում և այդ հողերը համարյա չեն ոգտագործվում:

1924 թվականին սկսվել են 3170 հեկտար Ղամարլվի ճահիճների չորացման աշխատանքները: Այդ տարածությունից գտնվող տեղերում բուն ճահիճները կազմում են 1245 հեկտար: Աշխատանքներն ա-

վարտվել են 1927 թվականին և ծախսվել է 97.700 ռուբլի: Բացի վերոհիշյալ շինարարությունից, 1921–22 թվականներին կատարվել են մի շարք փոքր վոռոգիչ աշխատանքներ, վորոնց նպատակն է յեղել վոռոգելի հողերի տարածությունն ավելացնել:

Մասնանշենք դրանցից ամենակարևորները՝ վերակառուցվեց Շահումյանի ջրանցքը 1000 հեկտար հող վոռոգելու համար, վերականգնվեց Արազդայանի ջրանցքը՝ դեպ. Բամբակկոմի 500 հեկտար սերմաբուծական տնտեսությունը վոռոգելու համար, չորացվեց Խաթունարխի 425 հեկտար ճահիճը, վերականգնվեցին Վեդիբասարի շրջանի քյահրիզները՝ 110 հեկտար հող վոռոգելու համար: Վոռոգիչ ջրանցք անցկացվեց Տալշան–Ղշլաղի 500 հեկտար հողերի համար, վերականգնվեց Շիրմի ջրհան կայանը և այլն:

1928–31 թվականների շրջանը: Վերջին չորս տարին կատարված ջրատնտեսական աշխատանքների պլանի հիմք են կազմում դիրեկտիվ որգանների առաջին հնգամյակի դիրքավորումները: Դրանցից գլխավորներն են՝

Ջրատնտեսական պլանի նպատակն է զարգացնել սոցիալիստական
գյուղատնտեսությունը, այն է՝ ամեն կերպ նպաստել մեքենայացված
խոշոր խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպմանը:
կապված է յերկրի ինդուստրացման հետ
Յերկրորդ դիրքավորումը օժանդակել բամբակագործության ու տեխ-
և ձգտում է ըստ ամենայնի
նիկական այլ մշակույթների զարգացմանը:
կապել ճահճացած շրջանների վոռոգու-
Յերրորդ դիրքավորումն է՝ մեծ նշանակություն ունի ժողովրդական չա-
մը չորացման հետ, վորը արմատախիլ անելու համար:
րիքներից մեկը՝ մալարիան

ԽՈՇՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՎՈՌՈԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ջրանցքն սկսվել է 1925 թվականին, նա վո-
Փոքր Սարդարաբադի ամենահարուստ բամբակի համար
ռոգելու յե Ղուրդուղուլու շրջանի 25.700 հեկտար տարածությամբ, վորից 8400 հեկ-
պիտանի հողերը՝ Փոքր Սարդարաբադի ջրանցքի սիստեմը բաղկացած
տարը նոր հողեր: և մերձավոր ճյուղից ու մի շարք
է պատնեշից, գլխավոր ջրանցքից
հիդրոտեխնիկական կառուցվածքներից:
գոյություն ունեցող 10 վոռոգիչ
Այդ սիստեմի մեջ մտնելու յեն
առուները:
Հողժողկոմատը նոր վո-
Նկատի ունենալով հողային պայմանները, տնտեսական կազմակերպու-
ռոգելիք 8400 հեկտար հողը բաշխել է բամբակագործական խորհտնտեսու-
թյունների միջև հետևյալ ձևով. տրեստին և կոոպերա-
թյանը՝ 3800 հեկտար, այգեբանջարաբուծական տրեստին՝ 300 հեկտար:
տրեստին՝ 4300 հեկտար և մետաքսագործական աշխատանքների 93 տոկոսը,
Մինչև 1931 թվականը կատարված է
վորի վրա ծախսված է 5 միլիոն 575.000 ռուբլի:
վորը պետք է վոռոգեր 6200 հեկտար
Այգր-լճի ջրհան կայանը, Նույն տարվա գարնանը
հող, սկսվել է և ավարտվել է 25 թվականին: հաջորդ տարիներին ավելաց-
ջուր բաց թողնվեց 500 հեկտարի համար, Յերկու գլխավոր ջրանցքի
վեց վոռոգվող հողերի տարածությունը:

հողային հատկությունների շնորհիվ, հնարավոր չեղավ լրիվ օգտագործել բաց թողնված ջուրը և վոռոգել նախագծված ամբողջ տարածությունը՝ 6200 հեկտարը: 1931 թվականին վոռոգվող տարածությունը հասավ 2440 հեկտարի, վորից 1855 հեկտարը բռնում են բամբակի ցանքերը:

Ջրհանի կառուցման ամբողջ ծախսը կազմում է 2 միլիոն 137 հազար ռուբլի:

Ղռերի վոռոգումը.— Շինարարությունը ձեռնարկված է 1930 թվականին: Ընդամենը վոռոգելու յե 51.000 հեկտար տարածություն, վորն ըստ մշակույթների բաշխվելու յե հետևյալ ձևով՝ բամբակին հատկացվելու յե 40.680 հեկտար (79,7 տոկոս), խաղողաբուծությանը՝ 5417 հեկտար (10,6 տոկոս), մյուս մշակույթներին (լյուցերնա, ծխախոտ և այլն) 4902 հեկտար (9,6 տոկոս):

ՄԱՆՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջրհան կայանների կառուցումը.— Սակավաջուր շրջաններում՝ Վեդիբասարում, Գյառնիբասարում և Վաղպատում, բամբակի համար արժեքավոր հողերը վոռոգելու նպատակով, 1928 թվականից սկսվել են կառուցվել մի շարք ջրհան կայաններ՝ Արաքս և Ղարասու գետերի ափերին:

28–29 տարվա ձմեռվա շրջանում ավարտվեցին և 29 թվականի գարնանն սկսվեցին շահագործվել՝ Գյամիշչայի (Ջիլխանլու–Ղաֆարլու) կայանը 830 հեկտար հող վոռոգելու համար, Խալիսայի կայանը՝ 475 հեկտար հողի համար, Խորվիրապինը՝ 920 հեկտար հողի համար, Սուրենավանինը, վորը 1930 թվականին յենթարկվեց հիմնական նորոգման և ընդարձակվեց 300 հեկտար հող վոռոգելու համար, Հասանլվի կայանը՝ 400 հեկտար և Ռանչպարի կայանը՝ 400 հեկտար: Վերոհիշյալ կայանների (վորոնց ընդհանուր զորությունը կազմում է 810 ձիու ուժ) բոլորը միասին 1931 թվականին վոռոգում եյին 2800 հեկտար հող, վորից 2200 հեկտարը բամբակի տակ եյին:

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վերջին տարիների ընթացքում այդ բնագավառներում կատարված ամենախոշոր աշխատանքներն են՝ Ղռերի, Արազդայանի և Զանգիբասարի հետախուզումները, ապա մանր շինարարության ասպարիզում կատարվող հետախուզումները: Ղռերի հետախուզումները կատարվեցին իրենց վերջին փուլում՝ մշակվեցին տեխնիկական նախագծման համար անհրաժեշտ վերջնական տվյալներ (տրասները, գլխավոր պատվարների տեղը և այլն). Արազդայանի հետախուզումները, վորոնց նպատակն է պարզել նախագծման յենթակա տերրիտորիայի ճահճացած հողամասերն ուղղահայաց դրենաժով (կալիֆորնիական ջրհաններով) չորացնելու հնարավորությունները, ծավալվեցին այնքան հաջող, վոր անցյալ ամառ հնարավորություն ստացվեց կենտրոնում անցկացնել Արազդայանի նախագծի սխեմաները: Ներկայումս արդեն ավարտված է տեխնիկական նախագիծը և ձեռնարկված է շինարարությանը:

Ղարասու–Զանգիբասարի հետախուզական աշխատանքների նպատակն է ուսումնասիրել ստորերկրյա ջրերը և ճահճակալած շրջանի չորացման հնարավորությունն ու միջոցները, հետագայում այդ հողերը բամբակի մշակույթի համար վոռոգելու նպատակով:

Ընդամենը հետախուզական աշխատանքները նախագծային շինարարության հետ միասին ընդգրկել են 100.000 հեկտար տարածություն: Այդ աշխատանքների վրա յերկու տարում ծախսվել է 1.082 հազար ռուբլի:

ՎՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Վոռոգման ցանցի շահագործումն արտահայտվում է արդեն գոյություն ունեցող և նոր կառուցվող վոռոգիչ սիստեմի շահագործմամբ և վարչական ղեկավարմամբ:

Ջրի բաշխումը կատարվում է յուրաքանչյուր տարվա ցանքերի իրական տարածության հիման վրա, նախապատվություն տալով բամբակի վոռոգմանը և պահպանելով դասակարգային սկզբունքը՝ ջուրն օգտագործողների նկատմամբ:

1925–31 թվականների ընթացքում ուժեղացել է վոռոգման աշխատանքների տեմպը, վորը յերևում է հետևյալ թվերից՝

ՎՈՌՈԳԵԼԻ ՀՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1925 թ.	1926 թ.	1927 թ.	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1921 թ.
87,690	107,100	144,000	119,400	133,900	133,960	144,600
—	23 տ.	7 տ.	4 տ.	13 տ.	1 տ.	7 տ.

ԱՅԴ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

8,510	10.625	10.010	12.970	12.900	16.000	25.000
—	25 տոկ.	6 տոկ.	20 տոկ.	1 տոկ.	24 տոկ.	59 տոկ.

1932 թվականի գյուղատնտեսական շինարարության առարկաներն ու ծավալը վորոշող հիմնական դիրքավորումը բղխում է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշումից, վորտեղ ասված է, թե «կենտրոնական այն խնդիրը, վորից կախված է Անդրկովկասյան գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման հաջողությունը, ջրտնտեսության վճռական վերակառուցումն է, վորը դարձել է գյուղատնտեսության սիստեմի նեղ տեղը»:

Ելնելով վերոհիշյալ վորոշումից, Ջրային Տնտեսությունը նպատակ ունի առավելագույն չափով ապահովել հնդամյա պլանի ամենաեյական մասի կատարումը՝ ընդարձակել տեխնիկական մշակույթների՝ նախ և առաջ բամբակի ցանքերի տարածությունը:

Հայջրտնտեսության ներդրումների ընդհանուր գումարը 1932 թվին կազմում է 19.010.000 ռուբլի, վորից զուտ շինարարությանը հատկացվելու յե 17.170.000 ռուբլի:

խոշոր շինարարության ասպարեզում (բացի Ղոնրի վոռոգումը և փ. *Սարդարաբադի ջրանցքի ավարտումը*) ծրագրված է սկսել Արազդայանի, Ղարասու-Զանգիբասարի և Լամբալվի աշխատանքները:

1932 *թվականին վոռոգելի հողերի ամբողջ տարածությունը կազմելու յե* 160·000 *հեկտար, վորից* 29·000 *հեկտարը լինելու յե բամբակի ցանք:*

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի հողերի վոռոգման հեռանկարները հիմնված են ՀամԿ(բ)Կ-ի ԿԿ-ի ս. թ. հոկտեմբերի 31-ի պլենումի ցուցումների, այն ամենաարժեքավոր տեխնիկական մշակույթների (բամբակ, ծխախոտ, խաղողագործություն և այլն) զարգացման վրա:

Նկատի ունենալով, վոր համամիութենական հնգամյակը կատարվում է 4 տարում, Ղոնրի, Արազդայանի, Ղարասու-Զանգիբասարի, Լամբալվի, Արխաշայի ծախախնյա և Մեծ-Սարդարաբադի շինարարությունն անցնում է յերկրորդ հնգամյակին:

Վերոհիշյալ օբյեկտների շինարարությունը յերկրորդ հնգամյակում ավարտվելուց հետո, Արարատյան ամբողջ դաշտն ունենալու յե ամենաբերրի վոռոգելի, տեխնիկական մշակույթների համար պիտանի հողային տարածություններ: Բացի Արազդայանի, Ղարասույի, Զանգիբասարի և Լամբալվի հողերից, վորոնք կազմում են 37·000 հեկտար. յերկրորդ հնգամյակում ձեռնարկվելու յե Մեծ-Սարդարաբադի վոռոգման աշխատանքներին, վորի ընդհանուր տարածությունն է 187·000 հեկտար, իսկ պիտանի հողերինը 117·000 հեկտար: *Մեծ-Սարդարաբադի վոռոգիչ սիստեմը ջրատնտեսական նոր խնդիրներ է դնում մեր առջև, այն է՝ առավելագույն նպատակահարմարությամբ օգտագործել հանրապետության* (ներառյալ նաև Սևանի լճի) հիմնական աղբյուրների ջրային պաշարը, վորպես եներգետիկ հնարավորությունների հետ սերտորեն կապված միասնական կոմպլեքսային պրոբլեմ:

Արարատյան դաշտի վոռոգման պրոբլեմի լուծումը կտա բամբակի համար՝ 86·000 հեկտար վոռոգելի հող, խաղողագործության համար՝ 23·000 հեկտար, այգեգործության համար՝ 50·000 հեկտար և *այլն:*

Վերոհիշյալ հումքային աղբյուրները կանխորոշում են Խ. Հայաստանի տեղը, վորպես տեքստիլ և սնունդ-համի արդյունաբերության շրջան:

Այսպիսով Արարատյան դաշտում մենք ունենալու յենք ագրո-ինդուստրիալ կոմբինատ՝ մոտ 225·000 հեկտար վոռոգելի հողերով:

ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆԿՐԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

(ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ (Բ) ԿԿ-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ)

«ՀամԿ(բ)Կ կենտկոմը գտնում է, որ կենտրոնական այն խնդիրը, վորից կախված է Անդրկովկասի գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման հաջողությունը, ջրատնտեսության վճռական վերակառուցումն է, վորը դարձել է գյուղատնտեսության վերելքի նեղ տեղը»: ՀամԿ(բ)Կ կենտկոմի ցուցումների իրականացումը ջրատնտեսության վճռական վերակառուցման անհրաժեշտության վերաբերյալ, կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական կազմակերպությունների առջև վորպես կարևորագույն հարց դնում է՝ բարելավել ջրատնտեսական աշխատանքների ղեկավարությունը, մոբիլիզացիայի յենթարկել լայն մասսաներին՝ կատարելու վոռոգման աշխատանքների պլանը 1932 թ. սկսած:

Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմը և ժողկոմխորհը վորոշում են՝

1. 1932 *թվականին Հայաստանի ջրատնտեսության բոլոր ներդրումների գումարն ընդունել* 15 *միլիոն հիսուն ութ հազար չորս հարյուր տասնյոթը ռուբլի, վորից հիմնական ներդրումները՝* 13 *միլիոն* 374·523 *ռուբլի:*

2. 1932 *թ. գարնան ղուերում* 4000 *հեկտար վոռոգելի հողային տարածություն, (վորից* 3 *հազար հեկտարը բամբակի համար), պատրաստելու համար, ինչպես և* 33 *թվականին նոր վոռոգելի հողերի ավելացումն ապահովելու նպատակով, Հարավ-Արևելյան և Արևելյան ղուերում* 32 *թ. ներդրումները սահմանել* 8 *միլիոն ռուբլի:*

Անհրաժեշտ համարել 1932 թ. համար *ա) մինչև* 32 *թ. հունիսի* 1*-ն ավարտել Հարավ-Արևելյան ղուերի ջրանցքի ստորին տրասսի կառուցումը, ջուրը Գյառնի-չայ գետը թափելու համար:*

բ) Մինչև 32 *թ. հուլիսի* 1*-ն ավարտել Սևանի լճից սկիզբն առնելիք ջրանցքի սկզբնավորության ժամանակավոր կառուցումները:*

գ) Ղամարլվի շրջանի ընդարձակվող տարածությունը և Ղուերի խորհտնտեսության ցանքերն ընդգրկելու նպատակով, առաջարկել Հայջրտնտեսությանը՝ մինչև ս. թ. մայիսի 1*-ն ընդարձակել Գյառնի-չայից անցկացված վոռոգման տեղական ցանցը:*

1933 թվականի համար՝

ա) Մինչև 1933 *թ. հունիսի* 1*-ն ավարտել Հարավային ղուերի մագիստրալ ջրանցքի կառուցումը* 33 *կիլոմետր յերկարությամբ, մինչև Վեդիչայի թափելը:*

բ) Հարավ-արևելյան ղուերի ստորին տրասներում գտնվող ամբողջ չօգտագործված տարածության վրա կառուցել առուների ցանց, պատ-

րաստելով այդ ցանցը վոռոգման համար մինչև 33 թ. ապրիլի 1-ը:

գ) Նույնպիսի ցանց անցկացնել Հարավային ղուրի տեղական վոռոգման սխեմայով չոգտագործվող նոր հողերում մինչև Վեդիչայը, րեվ պատրաստելով բամբակագործական խորհտնտեսության հողերը՝ մշակության համար: Վերոհիշյալ աշխատանքներն ավարտել մինչև 33 թ. ապրիլի 1-ը:

3. Փոքր Սարդարաբադում, մինչև 32 թ. գարունը ջրով ապահովել 3600 հեկտար տարածության վոռոգումը, վորից 460 հեկտար բամբակի համար: Այդ աշխատանքը կատարել այնպես, վոր ապահովվեն Այգեբանջարաբուծական տրեստի, Կոնսերվի տրեստի և Շերամապահական տրեստի, թե՛ գարնան ցանքերն ու տունկերը և թե՛ աշնան տունկերը: Հիշյալ աշխատանքներն ավարտելու համար պահանջվող գումարն ընդունել 1·140·000, վորից 280 հազար ռուբլին 1931 թ. չոգտագործված գումարներից և 860·000 ռուբլին՝ միութենական բյուջեյով հասկացված գումարներից: Պարտավորեցնել Այգեբանջարաբուծական տրեստին, Կոնսերվ տրեստին և Շերամապահական տրեստին՝ վոռոգման մանր ցանցն անցկացնել իր ուժերով, Հայջրտնտեսության ցուցումներով: Առաջարկել Հայջրտնտեսությանը հատուկ ջանք գործադրել մինչև 1932 թ. աշունը գլխավոր ջրանցքի Փիլորացիայի յենթարկվող մասի աշխատանքներն ավարտելու համար:

Մանր շինարարության ասպարեզում մինչև 32 թ. գարունն ապահովել բամբակագործական շրջաններում 7691 հեկտար հողի օգտագործումը, վորից 1880 հեկտարը բամբակի համար, (Ղուրդուղուլի 1879 հեկտար, Ղամարլու՝ 2161 հեկտ., Վեդի՝ 1272 հեկտ., Վաղպատ՝ 2379 հեկտ.), իսկ վոչ բամբակագործական շրջաններում՝ 4760 հեկտարի օգտագործումը, վորն ըստ շրջանների բաժանված է հետևյալ կերպ. Դարալագյազում՝ 240 հեկտար, Իջևանում՝ 400, Ղափանում՝ 630 հեկտար, Ալլահվերդում՝ 170 հեկտ., Սիսիանում՝ 700 հեկտ., Շամշադինում՝ 100 հեկտ., Նոր Բայազետում՝ 180 հեկտ., Մեղրում՝ 100 հ., Լենինականում՝ 2000 հեկտ. և Կոտայքում՝ 240 հեկտար: Այդ թվում տեխնիկական մշակույթների համար 2520 հեկտար: Ներդրումներն ընդունել 1·372·300 ռուբ., բացի դրանից, 33 թվականին նոր հողերի օգտագործումը նախապատրաստելու համար ներդրումներն ընդունել 400 հազար ռուբլի: Ընդամենը 1 միլլիոն 732·300 ռուբլի:

4. Խոշոր հետախուզման և նախագծման ասպարեզում՝

ա) Ավարտել Արագդայանում 10000 հեկտար տարածությունը վոռոգելու համար կատարվելիք աշխատանքների նախագիծը, անցկացնել միութենական բարձրագույն որգաններում այնպիսի հաշվով, վոր հնարավոր լինի շինարարությունն սկսել 33 թ. հունվարի 1-ից:

բ) Ավարտել Ղարասու-Զանգիբասարի 25 հազար հեկտար հողերի վոռոգման և ճահիճների չորացման հետախուզումները և նախագիծը կազմել մինչև 1932 թ. հունիսի 1-ը: Նախագիծը միութենական բարձրագույն որգաններում անցկացնել այնպիսի հաշվով, վոր հնարավոր լինի շինարարությունն սկսել 1933 թ. հունվարի 1-ից: Հետախուզումն ավարտելու և նախագիծը կազմելու ծախսերն ընդունել 100 հազար ռուբլի:

գ) Հաշվի առնելով Մեծ Սարդարաբադի 110·000 հեկտար հողերի

վոռոգման ժողովրդատնտեսական հսկայական նշանակությունը, 1932 թ. հետախուզումները և սխեմատիկ նախագիծը կազմելու ծախսերն ընդունել 500 հազար ռուբլի: Բացի դրանից, բոլոր հետախուզումները և տեխնիկական-տնտեսական նախագծի կազմումն ավարտել մինչև 1933 թ. հուլիսի 1-ը, այն հաշվով, վոր հնարավոր լինի 33 թ. 2-րդ կեսից սկսել շինարարության նախապատրաստական աշխատանքները:

դ) Լամբալի 2000 հեկտար հողերի հետախուզումն ու տեխնիկական-տնտեսական նախագծի կազմումն ավարտել և միութենական բարձրագույն որգաններում անցկացնել այն հաշվով, վոր հնարավոր լինի շինարարությունն սկսել 1933 թ. հունվարի 1-ից: Առաջարկել Հայջրտնտեսությանը միջոցներ գտնել հետախուզումներն ավարտելու և նախագիծը կազմելու համար:

5. Գյուղերը և ցանքը գետերի վարարող ջրերից և հեղեղներից ապահովելու նպատակով, պլանային կարգով կատարել ափերի ամրացման աշխատանքները, առաջին հերթին բամբակագործական շրջաններում, ինչպես և ձեռնարկումներ ձեռք առնել 32 թ. գարնանը սպասվող հեղեղների դեմ կազմակերպված պայքար մղելու համար: 1932 թ. ներդրումներն ընդունել 595 հազար ռուբլի:

6. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիման վրա, վերակառուցել բամբակագործական շրջաններում վոռոգման մանր ցանցը 7000 հեկտար տարածության վրա: Վերակառուցման ծախսն ընդունել 150 հազար ռուբլի, բացի պարհակի կարգով ներգրավելիք բանուժը, հանձնելով վոռոգման մանր և մնարագույն ցանցը ՄՏԿ-ներին:

7. Ջրի օգտագործման ռացիոնալացման ու բարելավման կոնկրետ ձեռնարկումները՝

ա) 32 թվականին բամբակագործական շրջաններում մյուս բույսերի մշակույթը դուրս մղելով՝ ավելանալիք տարածությունն ընդունել 2581 հեկտար վոռոգման ցանցի ռացիոնալ շահագործման միջոցով և ավելանալիք տարածությունը 1290 հ.: Վոչ բամբակագործական շրջաններում ավելանալիք հողերի ընդհանուր տարածությունը սահմանել 2815 հեկտար, վորից տեխնիկական մշակույթների համար 1799 հեկտար՝ ի հաշիվ այլ մշակույթների:

բ) Զարգացնել Խորհրդային Հայաստանի ջրային ռեսուրսները և յերկրում գոյություն ունեցող ջրային սխեմաների ուսումնասիրությունը, կազմելով համապատասխան քարտեզներ և նկարագրություններ:

գ) «Բ» կետում մատնանշված աշխատանքն ավարտել ամենաուշը մինչև 33 թ. վերջերին, իսկ 1932 թ. ընթացքում աշխատանքը կատարել առնվազն 8 շրջաններում: Ստացված նյութերը, նրանց մշակմանը զուգընթաց, լույս ընծայել առանձին հրատարակություններով:

դ) Գոյություն ունեցող վոռոգիչ սխեմաների հնարավորություններն ավելացնելու նպատակով, սկսել նրանց բարելավման աշխատանքները:

ե) Հսկայական նշանակություն տալով ջրի օգտագործման ռացիոնալացմանը, վորտեղ մեծ կարևորություն ունեն աշխատողների համապատասխան կերպով պատրաստված թե՛ բարձր ու միջակ և թե՛ մանր-վոռոգ. ցածր կադրերը, առաջարկել Հայջրտնտեսությանը և Կենտկոմի կադրերի բաժնին՝ հատուկ ուշադրություն նվիրել կադրերի պատրաստման:

Առաջարկել ԿԿ–ի Կադրերի բաժնին, Կուլտպրոպին և Հայջրտնտե-
սությանը ներկայացնել ԿԿ–ին կադրերի պատրաստման 32 թ. պլանը,
ինչպես և մշակել հիդրոտեխնիկական ինստիտուտի կազմակերպման
խնդիրը և մացնել Կենտկոմ:

դ) Հաստատել Հայջրտնտեսության ներկայացրած խմելու ջուր
մատակարարելու պայմանական պլանը 813·953 ռուբլով:

Առաջարկել Ֆինժողկոմատին, Հայջրտնտեսության հետ միասին այդ
աշխատանքների համար անհրաժեշտ գումարները հատկացնել մասամբ
տեղական բյուջեից, մասամբ էլ ինքնահարկման միջոցներից: Աշխա-
տանքների վորոշ մասը կատարել պարհակի կարգով:

Առաջարկել Հողժողկոմատին և համապատասխան այլ կազմակերպու-
թյուններին, Հայջրտնտեսության հարցերի համաձայն, ապահովել նը-
րան տեղական անհրաժեշտ շինանյութերով՝ աշխատանքներն անխափան
կատարելու համար:

Առաջարկել Աշխժողկոմատին՝ ջրատնտեսական աշխատանքների
համար վերջնականապես սահմանել բանվոր հավաքագրելու շրջաններ,
բացառիկ իրավունք վերապահելով Հայջրտնտեսությանն այդ շրջաննե-
րում բանվոր հավաքագրելու իր աշխատանքները լրիվ և ժամանակին
բանուժով ապահովելու նպատակով: Առաջարկել Հայջրտնտեսությանը
ուժեղացնել կոլտնտեսականների և անհատական տնտեսությունների
հետ պայմանագրեր կնքելու կամպանիան, մշակելով Աշխժողկոմատի և
Կոլտնտեսկենտրոնի հետ համապատասխան ձեռնարկումներ՝ պայմանա-
գրական կամպանիայի հաջողությունն ապահովելու համար: Պարտա-
վորեցնել Կոլտնտեսկենտրոնին և շրջկոմներին հատուկ ուշադրություն
դարձնել բանվորի հավաքագրման գործին և առաջարկել Հայջրտնտեսու-
թյանը կուլտուրական–կենցաղային համապատասխան պայմաններ
ստեղծել արտադրամասներին աշխատանքին ամրացնելու համար:

Հանձնարարել շրջկոմներին՝ ապահովել պարհակի կազմակերպումը
ժամանակին՝ իրականացնելու այն վորոշումները, վորոնք վերաբերում
են առվերի ամրացմանը, հեղեղումների դեմ մղվող պայքարին, մանր
ցանցի վերակառուցմանը և այլն:

Խնդրել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմին՝ առաջարկել Անդրջրտնտեսու-
թյանը և Անդրբամբակմատին, վոր վերջիններս միջոցներ ձեռք առնեն
լրիվ ապահովելու ջրաշինարարական աշխատանքները շինանյութերով՝
ցեմենտով, փայտով, յերկաթով և արտահաշվառով: Խնդրել ՀամԿ(բ)Կ
Անդրերկրկոմին համապատասխան կազմակերպությունների միջոցով
ապահովել Հայջրտնտեսության աշխատանքները մեքենայական սարքա-
վորումով:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմն ու Ժողկոմխորհը համոզված են, վոր
Հայջրտնտեսությունը և շրջանային կուս. կազմակերպությունները վե-
րակառուցելով իրենց աշխատանքը, վճռաբար ձեռնամուխ կլինեն ջրա-
տնտեսական աշխատանքների պլանի կատարմանը և հաղթահարելով
բոլոր դժվարությունները, ընկ. Ստալինի 6 ցուցմունքների կիրառ-
մամբ սահմանված ժամկետներին կկարողանան կատարել պլանը:

ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ՝ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար՝ Ս. ՈԹՅԱՆ

ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀամԿ(բ)Կ կենտկոմը մատնանշել էր, վոր ջրային տնտեսության
ասպարիզում մեր մոտակա խնդիրն է՝ «Վճռաբար բարելավել գոյու-
թյուն ունեցող վոռոգիչ սիստեմը (մաքրել և կարգի բերել ջրային ու-
ղիները, վերասարքավորել և մեքենայացնել ջրհանները, կազմակերպել
ջրահավաք սիստեմը» և այլն):

Այդ ցուցումն իրականացնելու և՝ ջրատնտեսական աշխատանքնե-
րը ժամանակին ավարտելով ու հեղեղումների դեմ պայքար մղելով, յեր-
րորդ՝ բոլշևիկյան գարնանացանի կամպանիան ապահովելու նպատա-
կով, կենտկոմը վորոշում է՝

1. Առաջարկել Հայջրտնտեսությանը, Տրակտորկենտրոնի բաժան-
մունքին և շրջանային կազմակերպություններին՝ ամենաուշը մինչև
փետրվարի 21-ը ձեռնամուխ լինել մաքրելու բամբակագործական շըր-
ջանների վոռոգիչ ցանցը և ավարտել մինչև մարտի 15-ը:

2. Հաստատել վոռոգիչ ցանցի արտադրական և օրացուցային համա-
րակետական պլանը:

Առաջարկել շրջկոմներին և շրջգործկոմներին՝ պարհակի կարգով
կազմակերպել և դուրս բերել այդ աշխատանքի համար անհրաժեշտ բա-
նուժ:

Առաջարկել շրջկոմներին՝ ապահովել այդ կարևոր կամպանիայի հա-
մապատասխան քաղաքական–բացատրական աշխատանքով:

Առուները պարհակի կարգով մաքրելու համար, բանվոր դուրս բե-
րել, ըստ շրջանների և ցանցերի, հետևյալ ձևով՝

ա) Ղամարլվի շրջան.
1. Գյառնիչայի սիստեմ 15·000 մարդ–որ,
2. Զանգվի ծախափնյա սիստեմ՝ 18·000 մարդ–որ:
Ընդամենը՝ 33·000 մարդ–որ:

բ) Վաղարշապատի շրջան.
1. Քասախի սիստեմ՝ 3600 մարդ–որ,
2. Եջմիածնի ջրանցքի սիստեմ՝ 2·400 մարդ–որ,
3. Սև ջուր՝ 7·000 մարդ–որ,
4. Այղր լիճ՝ 2·000 մարդ–որ:
5. Զանգվի աջ ափը՝ 6·200 մարդ–որ:
Ընդամենը՝ 23·600 մարդ–որ:

գ) Ղուրդուղու շրջան.
Արաքսի սիստեմ՝ 25·000 մարդ–որ:

դ) Վեդի–Բասարի շրջան՝ 6·000 մարդ–որ:

Ընդամենը՝ բամբակագործական 4 շրջաններում՝ 88·100 մարդ–որ:

3. Առաջարկել Հայաստանի ԼԿՅԵՄ Կենտկոմին՝ բամբակագործական բոլոր շրջաններում կազմակերպել կոմյերիտական արշավ ոռոգիչ ցանցը մաքրելու համար:

4. Հաստատել բամբակագործական շրջանների ոռոգիչ ցանցի ընթացիկ և հիմնական նորոգման այն պլանը, որ ներկայացրել է Հայջրտնտեսությունը: Նորոգման աշխատանքներն ավարտել մինչև ապրիլի 15-ը, կատարելով հետևյալ ծավալով՝

Ա. Ղամարլվի շրջան.—հիմնական նորոգում.

1. Հողային աշխատանքներ՝ 32.000 խոր. մետր,
2. Քարային աշխատանքներ՝ 3.000 խոր. մետր:

Հիմնական աշխատանքների գումարը հանրապետական բյուջեյով՝ 49.612 ռուբլի: Վոռոգման սիստեմի ընթացիկ նորոգումը ջրային տուրքի միջոցներից՝ 5.083 ռուբլի:

Բ. Վաղարշապատի շրջան.—Հիմնական նորոգում՝

1. Հողային աշխատանքներ՝ 42.700 խոր. մետր,
2. Քարի և բետոնի աշխատանքներ՝ 24.750 խոր. մետր:

Հիմնական աշխատանքների գումարը հանրապետական բյուջեյով՝ 50.756 ռուբլի: Վոռոգման սիստեմի ընթացիկ նորոգումը (գլխավոր ջրանցքների մաքրելը և այլն) ջրային տուրքի միջոցներից՝ 22.132 ռուբլի:

Գ. Ղուրդուղուլու շրջան.—Հիմնական նորոգում՝

1. Հողային աշխատանքներ՝ 37.210 խոր. մետր:
2. Քարի և բետոնի աշխատանքներ՝ 5.100 խոր. մետր:

Հիմնական աշխատանքների գումարը հանրապետական բյուջեյով՝ 46.293 ռուբլի: Ջրային տուրքի միջոցներից կատարված ընթացիկ նորոգումը՝ 1.040 ռուբլի:

Դ. Վեդու շրջան.—Հիմնական նորոգում.

1. Հողային աշխատանքներ՝ 8.000 խոր. մետր:
2. Քյահրիզների վերականգնումը՝ 700 խոր. մետր:

Հիմնական աշխատանքների գումարը հանրապետական բյուջեյով՝ 25.057 ռուբլի: Ընթացիկ նորոգումը (հողային աշխատանքները, քարի աշխատանքը, ջրհանների նորոգումը) ջրային տուրքի միջոցներից՝ 23 հազար 959 ռուբլի:

Բամբակագործական 4 շրջաններում հանրապետական բյուջեյով կատարվելիք հիմնական աշխատանքների ընդհանուր գումարը 1932 թվականի հանրապետական բյուջեյով կազմելու յե 162.727 ռուբլի: 1932 թվականին ջրային տուրքի միջոցներով կատարվելիք ընթացիկ նորոգումը (ջրանցքների վերականգնումը, գլխավոր առուների մաքրելը, ջրհանների նորոգումը)՝ 52.214 ռուբլի:

5. Առաջարկել շրջկոմներին և շրջգործկոմներին՝ ապահովել նորոգման աշխատանքներն անհրաժեշտ բանվորով, ինչպես և փոխադրական միջոցներով, շինանյութերի համար:

6. 1932 թվականի բամբակի ցանքերն ապահովելու համար, առաջարկել Հայջրտնտեսությանը՝ Հասանլվում, Նարիմանլվում, Շաղըրլվում և Եջմիածնի ջրանցքում ոռոգման մանր աշխատանքներն ավարտել ամենաուշը մինչև ա. թ. ապրիլի 16-ը:

7. Առաջարկել Մասժողկոմատին և Հայբանկին՝ ապահովել ոռոգիչ սիստեմի նորոգման աշխատանքները շինանյութերով, մասնագիտական հսկողությամբ և արտահագուստով, ինչպես նաև սննդամթերքով:

8. Առաջարկել հեղեղումների դեմ պայքարող հանրապետական արտակարգ հանձնաժողովին՝ լիակատար թափով պայքար ծավալել հեղեղումների դեմ և այդ աշխատանքներն ավարտել մինչև մարտի 15-ը: Հատկացնել 515 հազար ռուբլի հետևյալ վայրերում կատարվելիք աշխատանքների համար՝

Քասախի ափերին՝ Դոխս, Ներքին Այնալու և Հայ Ջերլու գյուղերի մոտ:

Արաքսի ափերին՝ Ղուրդուղուլու շրջանի Զանֆիդա գյուղի մոտ, Շիդլու գյուղից մինչև Խորվիրապ և Վեդի-Բասարի Սմա գյուղի մոտ:

Վեդու շրջանում՝ Բոյուքվեդի գյուղից մինչև խճուղու կամուրջը և Արտաշատյանի ջրանցքի ակվեդուկի մոտ:

Գյառնի չայի ափերին՝ Ցամանջալու և Արխաշլար գյուղերի մոտ:

Զանգվի ափերին՝ Շուլա Դեմրչի գյուղի մոտ գետի յերկու ափը:

Ղուրդուղուլու շրջանի Մաստարա գյուղում, Դիլիջանի շրջանի Գոլլինկա և Աղստաֆա գյուղերի մոտերում, Ղափանում՝ Ոխչի չայի ափերը, Ղարաքիլիսայի շրջանում՝ Դեբետ գետի ափերը և այլն:

9. Գտնելով, որ ընթացիկ տարվա գարնանացանից ժողովրդատնտեսական արդյունք ստանալու հիմնական գործոններից մեկն է ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, առաջարկել Հայջրտնտեսությանը՝ Հողժողկոմատի և շահագրգռված այլ կազմակերպությունների հետ միասին սահմանել ոռոգման ճիշտ ժամկետներ, ելնելով բույսերի աճման բնական պայմաններից, հիմնվելով տեղական հողային օրգանների փորձնական տվյալների վրա:

Ոռոգման հաստատված ժամկետների հիման վրա, ջրօգտագործող բոլոր օբյեկտների համար կազմակերպել ջրօգտագործման պլաններ և վերջիններս հասցնել մինչև գյուղ, խորհտնտեսություն ու կոլտնտեսություն՝ ամենակարճ ժամանակում:

Ճիշտ հաշվառման յենթարկել և նորմավորել ոռոգման ջրի ծախսումը հանրապետության բոլոր սակավաջուր սիստեմներում: Այդ նպատակով ուժեղացնել շահագործիչ ջրաչափությունը սարքավորումով, ինչպես և ներգրավել վորակյալ մասնագետներ թե՛ կենտրոնում, թե՛ տեղերում:

10. Առաջարկել Հայջրտնտեսությանը և բոլոր շրջկոմներին՝ յերկու տասնօրյակում վերանայել շրջանային ջրտնտեսությունների աշխատակիցների կազմը, նպատակ դնելով ամրացնել վերջինս բավականաչափ կադրերով և վճռաբար մաքրել այդ կազմը դասակարգային խորթ տարրերից:

11. Առաջարկել Հայջրտնտեսությանը և Պետհրատին՝ մոտ ժամանակներս հրատարակել հայերեն և թուրքերեն մի շարք մատչելի բրոշյուրներ ռացիոնալ ջրօգտագործման հարցերի մասին, ինչպես և կազմակերպել շրջաններում զրույցներ՝ ոռոգման գործը ռացիոնալացնելու հարցերի շուրջը:

12. Առաջարկել Հայջրտնտեսությանը՝ կազմակերպել ծառատնկում գետերի և ջրանցքների ափերին, միջոցներ ձեռք առնելով գարնան տնկելու 100 հազար ծառ: Հանձնարարել Հողժողկոմատին և Կոլտնտեսկենտրոնին՝ ապահովել ծառատնկումը բանուժով և սածիլներով:

13. Հանձնարարել Կենտկոմի Քարտուղարությանը և Ժողկոմխորհի Կատարման Հանձնաժողովին՝ սիստեմատիկաբար լսել համապատասխան կազմակերպությունների զեկուցումները սույն վորոշումների կատարման ընթացքի մասին:

Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԲԱԺԻՆ

Եջ

1. Ա. ԽԱՆՋՅԱՆ.—Ծանրության կենտրոնը դարձնել բերքատվության բարձրացումը 5
2. Կ. ԱՅՎԱԶՅԱՆ, Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ և Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ.—Ինքնահոսի և դիմազրկության ծանր հետևանքները . . 10
3. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ և Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ.—Ինչո՞ւ մենք քիչ բամբակ ստացանք 19
4. ԴԱՍԵՐ, ՎՈՐՈՆՔ ՀԻՄՔ ՊԻՏԻ ԾԱՌԱՅԵՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ 25
5. Ն. ԱԴՈՅԱՆ.—Զկրկնել անցյալ տարվա սխալները 32

Բ. ԲԱԺԻՆ

6. Հ. ՎԵԶԻՐՈՎ.—Պայքար բամբակի համար, պայքար է կուսակցության գլխավոր գծի համար 40
7. 1932 թ. բամբակագործության պլանը 43
8. Վ. ՈՀԱՆՅԱՆ.—Ստեղծել կոլտնտեսական բրիգադներ բարձր բերքն ապահովելու համար 48
9. Ագրոնոմ՝ Գ. ԱՂԱԶԱՆՅԱՆ.—Արաթը վորպես բերքի բարձրացման միջոց 52
10. Պրոֆեսոր՝ Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ.—Պարարտացումը կապահովի բամբակի բարձր բերքը 60
11. Պրոֆեսոր՝ Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ.—Տիրապետել բամբակի մշակության տեխնիկային 66
12. Բամբակի 1932 թ. կոնտրակտացիան (ՀՍԽՀ-ի ԺԿԽ-ի վորոշումը) 76

Գ. ԲԱԺԻՆ

13. Ա. ԽԱՆՋՅԱՆ.—Արագացնել վոռոգման աշխատանքների տեմպը 82
14. Կ. ԱՅՎԱԶՅԱՆ.—Կտանք 30 հազար, ինչ էլ վոր լինի . . . 85
15. Ինժ.՝ Գ. ՇԻՐՄԱԶԱՆ.—Բամբակի պրոբլեմն ու ջրային տնտեսության առաջիկա խնդիրները 88
16. ԻՆՉ Է ԱՐՎԱԾ ՅԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԻ ՎՈՌՈԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ 99
17. ԶՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆԿՐԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ (ՀՍԽՀ-ի, ԺԿԽ-ի և ՀԿ(բ)Կ-ի վորոշումը) 104
18. ԶՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԿ(բ)Կ. Կենտկոմի վորոշումը) 108

2311

Գինը 1 ռ. (7 կ.)

БОРЬБА ЗА НЕЗАВИСИМОСТЬ ХЛОПКА
Сост и ред. В. АНАНЯН

Госиздат ССР Армении
Эривань—1932

ՀՀ Ազգային գրադարան
NL0280652

19.118